

No.

x

44110 7000 40 411000

28

8-33

~~3817~~

ԱՅԻՆԳԱԿԱՍ Է 1801 Ք/

Ճ Ե Ռ

Ս Բ Տ Ի Ն Պ Ե Հ Պ Ե Ն Ո Ւ Թ Ե Ե Ն Ը

Վ Բ Ե Յ

3818

~~1644~~

Ե.Ջ.Ն զգուշացման համար պահելի
հանդիսինաց ազգութեանը անկէ է :

Եսակ . 7 . 23 :

30885

Կ

444



Ա Ս Ե Ն Ի Ն Ո Ւ Պ Օ Լ Ի Ս

Ի Տ Գ Ա Ր Ա Ն Ի Ա . Գ . Չ Ը Ր Չ Ի Լ Ի

1854

A $\frac{1}{898}$

Ս Ր Տ Ի Ն

Պ Ա Հ Պ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Եփեսոսի գրքի 2-րդ գլխի 23-րդ հոդվածը : Եսայ . 6 . 23 :

Մարդու սիրտը դեռ չնորոգուած իր կազմութեանը ամենազաւթար մասն է . բայց երբոր Հոգւոյն Արքայ շնորհօքը նորոգուի , իր ամենալու մասը կ'ըլլայ : Սիրտը մարդու գործքերուն ազբիւրն ու իր սկզբունքներուն հիմն է . և Ետուած իր աչքերը գլխաւորապէս անոր վրայ հաստատած ըլլալուն համար , քրիստոնեաներն ալ պէտք է որ անանկ ընեն :

Սեղաւորի մը դարձին մէջ եղած ամենամեծ դժուարութիւնը սիրտը Ետուածոյ շնորհակցութեան և դարձէն վերջնալ անիկայ Ետուածոյ հոգւոյն է : Այս ճիշդ ասոնց մէջ կը կայանայ սրբութեան ուժն ու զօրութիւնը . ահա աս է որ կեանքին ճամբան նեղ , և երկնից դուռը նեղուածք կ'ընէ : Գնաբանիս նպատակը աս մեծ գործին մէջ պէտք եղած խրատն ու օգնութիւնը տալն է , որուն մէջ կը գանձնք .

Նախ . Յորդորանք մը թէ՛ « Եմն զգուշութիւնով քու սիրտդ պահէ » :

Երկրորդ . Եսանկ ընելու ստիպող պատճա-

որ կամ շարժանիթը թէ՛ «Քանդի կենաց աղ-
բիւրները անկէ է՛» :

Յորդորանքին մէջ պիտի քննեմ .

Նախ՝ պարտաւորութիւնը :

Երկրորդ՝ անիկայ կատարելու կերպը :

1 . Պարտաւորութիւնը թէ՛ Քոստանտնուպոլիսի մարտի 21-ին ան մասին տեղն առնուած չէ , որ ըստ փի-
լիսոփայից կ'ըսուի , «Երազմենը՝ որ կ'ապրի , ե-
վերջինը՝ որ կը մեռնի» . հասցա Սուրբ Վիգոր
սիրա ըսելով երբեմն մասնաւորապէս հոգւոյն մէկ
ազնիւ կարողութիւնը կը ցուցնէ : Հոգւ-
ն . 21-ին մէջ իմացողութեան համար դրուած է .
Իրենց յիշար սիրտը . այսինքն իրենց յիմար իմա-
ցողութիւնը խաւարեցաւ : Սուր . ճիթ . 11-ին
մէջ յիշողութեան տեղը դրուած է . Ի՞նչ սրտն
Գլխի մտնէն ինչ իշտեցրտ : Եւ ն Յոգւ . 4 .
20-ին մէջ ինչ հոգւն տեղն դրուած է . որ կը
պարունակէ իմացողութեան լոյսը եւ յիշողու-
թեան առարկաները , թի՛ն որ Գլխի սիրտն Գլխի
Գլխադրէն . այսինքն թէ որ մեր խղճմասները մեզ
կը մեզազրէ , որուն յատուկ պաշտօնն է մե-
զազրել :

Բայց բնաբանին մէջ առաւել ընդհանուր
կերպով ամբողջ հոգիին կամ ներսի մարդուն
տեղն առնելու ենք : Արար ինչ որ է մարտի-
նին , հոգին ալ նոյնն է մարդուն . եւ առողջու-
թիւնն ինչ որ է սրտին , սրբութիւնն ալ նոյնն է
հոգիին : Եւ մտղջ մարտինին վիճակը ինչպէս որ

սրաին առողջութենէն կամ ուժէն կախում
ունի, այնպէս ալ մարդուս յաւիտենական վի-
ճակը հողիին չար կամ բարի վիճակէն կախում
ունի:

Արտի պահպանութիւնը՝ մարդուս հողին մեղ-
քէ ազատ պահելու, և Աստուծոյ հետ անոյշ և
ազատ հաղորդա՝ շնութիւն մը ունենալու համար
ամէն սուրբ միջոցներու զգո՛ւշո՛ւր և շո՛րո՛-
նակ՝ զգործածութիւնն է: Այս թէպէտ Քրի-
ստոսի պահէ խօսքը մեզի կը ձգէ պահելը՝ իբրև
մեր գործը. սակայն նոյն խօսքը շնոցքնէր թէ
աս բանը ընելու բաւականութիւն կայ մեր մէջը:
Մենք ինչպէս որ կարող չենք արեգակը իր
ընթացքէն կայնեցընել կամ գետերը ետ դար-
ձընել, այնպէս ալ կարող չենք մեր Զարք-
ներովն ու զօրութիւնովը սրտերնիս կանոնա-
ւորել և շիտկել: Ինչպէս որ մեր անձին փրկիչ
չենք կրնար ըլլալ, անանկ ալ մեր սրտին պահ-
պանող չենք կրնար ըլլալ, բայց և այնպէս
չառ պատշաճ է Առդամնին խօսքը, երբոր Քրի-
ստոսի պահէ կ'ըսէ. վասն զի թէպէտ զօրու-
թիւնը Աստուծակ է, բայց գործը կամ պարտքը
մերն է. ունեցած ամէն զօրութիւննիս Վրիտա-

*Շարունակ կ'ըսեմ, քանզի բնաբանին տուած պատճառը կը
ցոցընէ թէ՛ սա պարտաւորութիւնը քրիստոնէական կեանքին
ամէն վիճակներուն կը վերաբերի, և յարտեալ ստիպողական է:
Եթէ սիրտը պետք է պահել՝ կենաց ազգիւրննն անկէ ըլլալուն
պատճառաւ, ուրիշն որչափ ժամանակ որ սա ազգիւրննը վա-
զեն, մենք ալ պետք է որ անիկա պահենք:

սի Տեառն մերոյ շարժիչ և օգնող զօրու-
թեանն կախեալ է : Մէջերնիս եղած շնորհքը՝
մեզմէ դուրս եղած շնորհքին հետ կապակցու-
թիւն ունի . քանզի ինքն ըսաւ թէ «Մտանց ին-
ծի բան մը չէր կրնար ընել» :

2. Ես պարտաւորութիւնը կատարելու կեր-
պըն է , Ե՛կէն զէն-չո-թի-նով : Բնադրին մէջ
աս խօսքը շատ ազդու է . Ե՛կէն պահպանու-
թիւնը պահէ , կամ պահէ՛ , պահէ՛ , այսինքն
կրկնապատիկ զգուշութիւնով պահէ : Եսանկ
ազդու զրուցուածքով եղած պարտաւորութեա-
նը ստիպումը պարզապէս կը ցուցնէ թէ , օր-
չափ զժուար բան է օրանքնիս պահելը և օրչափ
վտանգաւոր բան ալ է ասոր զանցառութիւնը :

Շատ ազդու և զօրաւոր է աս պարտաւորու-
թեան շարժանիթը , «Քանզի կենաց ազրիւրնե-
րը անկէ է» : Այսինքն սիրաբար կեանքին ամէն
գործողութիւններուն ազրիւրն է , սիրան է շա-
րին ու բարւոյն սկիզբն ու ծագումը իբրև ժա-
մացոյցի մը զսպանակը , որ բոլոր անիւնները կը
շարժէ : Սիրաբար զանձատուն մըն է՝ և ձեռքն
ու լեզուն անոր բանալիներն են , վասն զի սրտին
մէջ եղած խորհուրդը ձեռքով ու լեզուով 'ի
յայտ կու գայ : Սիրաբար կը ֆնարէ և անդամները
կը կատարեն . «Քարի՛ մարգը իր սրտին բարի
զանձէն բարութիւն կը բղխէ , և շար մարգը իր
սրտին շար զանձէն շարութիւն կը բղխէ . ինչու-
որ իր բերանը սրտին աւելցուքէն կը խօսի» :
Ղ - . 2 . 45 : Աւրեմն՝ եթէ սիրաբար իր գործ-

քերուն մէջ սխալելու բլլայ, հարկաւ անդամ-
ներն ալ իրենց գործքերը սխալ կը կատարեն,
որովհետեւ սրտին սխալմունքները գործի մը
սկսած ասենին սխալմունքներուն նման են, որ
վերջը չեն շարժուիր. կամ մամուլին մէջ տպագ-
րութեան գրերուն հակառակ և սխալ գրուելուն
նման են, որ տպուած օրինակներուն ամէնուն
մէջն ալ մէկ ընդհանուր վրիպակ մը կը պատ-
ճառէ: ՄՏ, ուրեմն հետեւալ խնդրոյն մէջ
պարունակուածը՝ շատ երեւելի պարտաօրու-
թիւն մըն է:

Խնդիր. ԱճՆ վիճակէ մէջ սրտին պատշաճու-
թիւնն ու սղնչէ կատարութիւնը՝ սրտատանէէ ՏՅ
կատարին իրենց մէջ գործն է:

Փիլիսոփաներուն ըսածը թէ «Մեջնար է որ՝
ջուրը ո՞ր և իցէ սահմանի մէջ պահուի» . շատ
յարմարապէս սրտերուն ալ կը վերաբերի: Աս-
տուած սրտերուն սահմաններ գրաւ. բայց անոնք
քանի քանի անդամ չէ թէ միայն կրօնքին և շնոր-
հաց, այլ մինչև անդամ խելքի և հասարակ
համաստութեան սահմաններէն ալ կ'անցնին: Ա-
ստ քանիս համար քրիստոնեաները մեծ աշխա-
տութիւն ու հսկողութիւն ընելու են, մինչև ի-
րենց մահուան օրը:

Չէ՞տո՞ւ մարութիւնը մարդս քրիստոնեայ չը-
նէ՞ր, քանզի շատ կեղծաւորներ ալ մարդու
ձևով կրնան ցուցնել. այլ սրտին ուղղու-
թիւնն ու մարութիւնը, ահա ասով քրիստոնե-
այի մը ներսի գին շատ վշտագին նեղութիւն-

ներ կը ծագին , և խիստ խորին հասաչանք և արտասուք կը պատճառեն : Ազգեկիա թագաւորը իր սրտին գոռոզութեանը համար էր , որ քուրձ հազնեւլով Տէրօջը առջին մոխրի վրայ նստաւ : Պատիթ վախնալով որ շքլայ թէ կեղծաւորութիւնը՝ իր սրտին վրայ բանանայ , ազազակեց . «Թնոյ իմ սիրտս կատարեալ քլայ քու կանոններուդ մէջը , անանկ որ շամչնամ» : Սաղ . 86 : Ասանկալ իր սրտին Աստուծոյ ծառայութենէն բաժնուելուն և հեռանալուն փորձառութենէն էր , որ կրկին ազօթեց «Միացուք իմ սիրտս , որ քու անունէդ վախնայ» : Ճգ . 11 :

Աս ամենահարկաւոր խնդիրն 'ի գործ զնեւլու առաջագրած կերպերս ասոնք են :

'Ա՛ռի՛ . Պիտի բնենք թէ սրտի պահպանութիւնը ինչ բան կ'ենթադրէ և ինչ կը նշանակէ :

Ա՛րի՛րո՛ր . Վրիստոնեաներուն աս բանն իրենց կեանքին մէկ գլխաւոր գործն բնել պարտաւոր քլալնուն զանազան պատճառները :

Ա՛րի՛րո՛ր . Պիտի զիտենք ան մամանակները շար մասնաւորապէս մեզ կ'ստիպեն սրտին պահպանութեանը մէջ աս զգուշութիւնն բնելու :

Չորրորդ . Աս ամէնուն վրայ մասնաւոր խրբասներ :

'Ա՛ռի՛ . Վնենք թէ սրտին պահպանութիւնը ինչ բան կ'ենթադրէ և ինչ կը նշանակէ :

Սրտի պահպանութիւնն անժխտելի կերպով վերստին ծննդեան գործն առաջուց կատարուած քլալը կ'ենթադրէ , որուն ներգործու-

Թեամբը սիրաբնոր ու հողեոր հակամիտութիւն
 մը զգացած ըլլալով շտկուած է . քանզի որչափ
 ժամանակ որ սիրաբնոր շտկուած չէ շնորհօր , ու-
 բիշ որ և իցէ միջոցով չկրնար Եսաուծոյ հետ
 շտկուի պահուիլ : Ենձնասիրութիւնը՝ շնորհօ-
 քուած սրտին շարժողն է . որ անոր ամէն նպա-
 տակներուն և գործքերուն մէջ զանիկա կը շար-
 ժէ , և քանի որ բանն ասանկ է , անկարելի է որ
 ինչ և իցէ արտաքին միջոցներով Եսաուծոյ հետ
 պահուի :

Սարգս ՚ի բնէ անփոփոխ և միակերպ հողի ու-
 նէր . ամէն բազմանքներն ու գորութիւնը ա-
 մենահլու դասակարգութեան մը մէջ էին :
 Բայց աս երջանիկ վիճակէն կամովին բաժ-
 նուելով , խիստ անկարգ և ապտամբ արարած
 մը եղաւ . և հակառակեցաւ իր Սահղծողին .
 իբրև Ալլահնապատուիչ՝ յանձնապատանու-
 թեամբ՝ իբրև Օսայրաշոյն Բարիէն՝ անձնասիրու-
 թեամբ . իբրև Ենձնաբարձրու Տէրօջը՝ կամա-
 պաշտութեամբ . և իբրև Վիշօյն Վաշօննն՝ իր
 անձինը փնտռելով : Եսանկով ինքը բոլորովին
 անկարգ , և իր գործքերն ալ անկանոն եղան :
 Բայց ասանկ անկարգ հողին վերստին ծնանելով՝
 կրկին կը շտկուի , որովհետև աս մեծ փոփոխու-
 թիւնն ուրիշ բան չէ՝ այլ միայն Սուրբ Գրոց
 ցուցուցածին պէս , հողիին Եսաուծոյ պատկերին
 վերանորոգուիլը , որուն մէջ հաւատքով՝ յանձ-
 նապատանութիւնը կը վերնայ . Եսաուծոյ սի-
 րովը՝ անձնասիրութիւնը աներեւոյթ կ'ըլլայ .

Աստուածային կամաց Ֆազանդու թեամբն և հը-
 պատակութիւնովք՝ կամապաշտոնն իր կոր-
 սուի . և անձնուրացութեամբ ալ իր անշէն օ-
 գոտը փնտռելը չմնար : Իսուարեալ մարք կը
 լուսաւորի : յամսո կամքը մեղմութեամբ կը
 նուաճի . և ապստամբ բողձանքներն ալ կամաց
 կամաց կը յաղթուին : Աւ պայտէս՝ մեղքին պատ-
 ճառաւն իր երջանիկ վեճակէն բոլորովին զոր-
 կուած հոգին : շնորհքով վերստին կը նորոգուի :
 Արդ՝ հոգիին սս նորոգութիւնը կնթապրուե-
 լեն ետքը դժուար չէ սրտի պահպանութեան
 ինչ քան բլլալը երեակայել . որ ուրիշ քան մը
 չէ : բոլոր միայն՝ այսպէս նորոգութեամբ ճարտար-
 իր հոգին շարունակ հոգով և ափնայն գլու-
 շաթիւմէն ան վեճակէն մեջ պարելուն ջանքը : ո-
 բուն մեջ անգամ ճը որոտութե իրկնտութ շնորհաց
 մեջնցովը : Վանդի թէ և հոգին շնորհքով ան-
 դամ մը՝ նորոգուած և հաստատուն երկնային
 բնաւորութիւն մը ստացած բլլայ : սակայն մեղ-
 քը շատ անգամ իրար կրնայ անիկա կրկին խան-
 դարել . անանկ որ նորոգուած սիրար կրնանք
 ան երաժշտական գործիքներուն նմանցրնել՝ որ
 թէպէտ և ամենայն ճշդութիւնով ներգաշնակա-
 ւորուած բլլայ : սակայն ամենափոքր պատճառ
 մը կրնայ անիկա իր ներգաշնակութենէն խա-
 ստարել . միայն քիչ մը մէկգի գիր անիկա . ու պի-
 աի տեսնես որ ուրիշ երգի մը սկսելէ զ առաջ պի-
 աի պարտաւորիս կրկին ներգաշնակաւորել : Կնէ
 որ նորոգուած սիրանքը այս ինչ պարտաւորու-

Թիւն մը կատարելու մէջ՝ մէկ փափազելի զգացում մը ստացած ըլլան, կրնայ ըլլալ որ մէկ ուրիշ պարտաւորութիւն մը իրենց գէմն կլած առնեն ինքզինքնին անզոյ՝ մեռելու և խանգարելու գտնեն: Աստի ամէն մէկ պարտաւորութիւն՝ սրտի մասնաւոր պատրաստութեան մը կարող է: «Թե՛ որ դուն սիրազ պատրաստես, ու ձեռքերդ անոր երկրնցընես, թէ՛ որ քու ձեռքդ անորէնու թիւն կայ, անիկա քեզմէ հեռացուր, ու մի թողուր որ վրաններուդ մէջ անզոյամու թիւն բնակի»: Հոգ. ժա. 13, 14: Արեւմտ սրտի պահպանութիւնը՝ անիկա բազմազոյութեամբ մեղքէ պաշտպանելով՝ ան հոգեւոր վիճակը ստանալն է, որ յարմար կ'ընէ մարդս Աստուծոյ հետ կեանք մը վարելու:

Աս բանը վեց մասնաւոր գիտելիքներ կը պարունակէ իր մէջը:

1. Արտին վիճակը յաճախ գիտել պէտք է: Աշխարհային մարդիկ բնաւ առ բանիս հոգ չեն տանիր, անոնք չեն կրնար իրենց սիրտերը քրննել, շատերը կան որ քառասուն և յիսուն տարի աշխարհիս վրայ ապրած են, բայց հազիւ թէ ժամ մը իրենց սրտին վրայոր խորհած են: Այսպիսի մարդոց շատ գծուար բան է անձնաբնու թիւն բնելը, որոնց արժէքն ու սոցուար Վրիտանոսի աշակերտներն զգացած են ու գիտեն: Հետեւ թանոսներն անգամ կ'ըսէին թէ «Հոգին իմաստուն կ'ըլլայ լսիկ ու հանգարտ կենալով»: Թե՛ պէտ սնանկացեալ մարդիկ իրենց հաշիւը առ

նել շեն ուղեր, բայց ողջամիտ մարդիկը կը փափարին հասկընալ, թէ արդեօր են թէ յառաջ կերթան: Սաղմոսերգուն կ'ըսէ թէ՛. «Կամ սրտիս հետ կը խօսիմ»: Հէ. 6: Սրտի պահպանութիւնը ընել անհնար է, մինչև որ անոր ճշմարիտ վիճակը չընենք ու չհասկընանք:

2. Սրտին շարութեանցն ու անկարգութեանցը համար խոնարհութեան խորին զգացում պէտք է, ինչպէս որ Աշգեկիա իր սրտին գոռազութեանը համար ինքզինքը խոնարհեցուց: Այն ինչպէս որ ժողովուրդին ալ հրամայուած էր՝ իրենց սրտերնուն թշուառութիւնը զգալով, ազօթքով ձեռքերնին Աստուծոյ բարձրացընել: Ասոր համար է որ շատ ողջամիտ անձինք Աստուծոյ առջին խոնարհելով, բսին. «Մէնչպէս սիրա մը ունիմ ես»: Աուրբերը իրենց խոստովանութեան ատենը սրտերնին ցուցուցին՝ իրրեցաւած տեղը, բսելով. «Տէր, ահա հոս է վերքը»: Աչքը մարդուս ինչպէս որ է, ողջամիտ սիրան ալ անանկ է. աչքին մէջ եթէ ամենափոքր փոշի մը մանկու բլլայ, բնաւ չզաղարիւր խխլէն և արցունքօտակէն, մինչև որ դուրս ելլայ փոշին. այսպէս ալ ողջամիտ սիրաը չկրնար հանգիստ գանել մինչև որ իր նեղութիւններուն վրայ շլայ ու ցաւերն ալ Տէրոջը առջին շթափէ:

3. Սրբարար շնորհքի համար ջերմեօտանդ ու սրտառու շաղօթք և խնդրուածք ընել պէտք է. երբ որ սիրան անդամ մը մեղքով ապականուած և

խանդարուած բլլայ : Սաղմոսերգուն կ'ըսէ թէ՛
 «Օրածուկ մեզքերէն զիս մարբէ՛» : ԺԹ . 12 :
 «Միացուր իմ սիրաս , որ քու անունէդ վախնայ՛» :
 ձԳ . 11 : Սուրբերը միշտ այսպիսի խնդրուածք-
 ներով կը մօտենան Մատուծոյ շնորհացը աթո-
 սին առջեւ և աս աղերսանքով անոր առջին կը
 կայնին : Արնայ բլլալ որ անոնց հոգիները թոյլ
 կերպով ազօթեն , երբոր մարմնաւոր բաներու
 համար կայնած են . բայց երբոր սրտին համար
 կ'ազօթեն , իրենց հոգիները բոլորովին տարա-
 ծելով՝ բերաններնին փաստերով կը լեցը-
 նեն ու կը սկսին լալ , և այսպէս ազօթել . «Մ՛հ
 մարուր սիրա մը . ս՛հ՛ Մատուածս առաւել սիրելու
 սիրա մը . մեզքը առաւել ասելու սիրա մը . և ար-
 դարութեամբ Մատուծոյս հետ քալելու սիրա մը :
 Տէր՝ մի խնայե՛ր ինձմէ՛ առանկ սիրա մը՝ ուրիշ
 ինչ բան որ խնայես ալ , քենէ վախնալու , քեզ
 սիրելու ու քեզմով բերկրելու սիրա մը . թէ և
 մինչև անգամ մուրալու շափ աղքատանամ ,
 Տէր՝ դուն ինձի աս սիրաը տուր՛» : Արեւելի
 սուրբի մը վրայօք պատմուած է թէ , իր մեզքը
 խոստովանած աստեւը բնու շէք վերջացընէր
 խոստովանութիւնը , մինչև որ ան մեզքին համար
 իր սրտին իրապէս կոտրած բլլալը զգար . և որ և
 իցէ հոգեւոր օրհնութեան մը կամ ողորմութեան
 մը համար ազօթք բրած աստեւը , երբէք շէք գաղ-
 բեցընէր իր խնդրուածքը , մինչև որ ան ողոր-
 մութեանը կամ օրհնութեանը մէկ համե ասնէր :

4 . Առաւել զգուշութիւնով Մատուծոյ հետ

քաշկու և սիրտը մեղքի առաջնորդող բու-
լոր պարագաներէն ետ կենալու համար՝ զօրա-
ւոր ուխտադրութիւններ ընել պէտք է : Ար-
բեմն շատ օգտակար են զգուշաւոր և խոհական
ուխտադրութիւնները՝ մէկ մասնաւոր մեղքէ
մը սիրտն ազատ պահելու համար : Յօր կ'ըսէ
թէ՝ «Աչքերուս հետ ուխտ ըրի» : Ըն • 1 : Այս-
պիսի ուխտով՝ քրիստոնեաներն իրենց հոգիներ-
նուն վրայ սոսկալի երկիւղ մը կը ձգեն՝ ինքզինք-
նին պղծութենէ ետ պահելու համար :

5 • Պէտք է որ մեր սրտերուն վրայ շարու-
նակ և սուրբ նախանձաւորութիւն մը ունենանք :
Մեղքէ ազատ մնալու համար անձերնուս վրայ
բաջահայեաց նախանձաւորութիւն մը ունենալը
շատ դերպանց ու զօրաւոր միջոց մըն է : Ան՝
որ իր սիրտը պահպանել կ'ուզէ, պէտք է որ հոգ-
ւոյն աչքերը բաց ու արթուն պահէ իր ամէն
անկարգ և խանգարեալ կիրքերուն վրայ . թէ
որ կիրքերը շարժելով բաղձանքներն ու յօժա-
րութիւններն իրենց կապերէն արձրկուելու ըլ-
լան , հոգին պէտք է որ շուտով իմանայ և ա-
նոնք սանձէ . քանի որ դեռ չեն զօրացած : «Վի-
իմ հոգիս , աս բանին մէջ ուղեղ կը դործես ,
ինչո՞ւ կը խռովիր ս'իլ իմ խռովայոյոյ խորհուրդ-
ներս ու կիրքերս» : Արջանիկ է ան մարդը՝ որ
ամէն ժամանակ ասանկ վախի մէջ է : Ան մար-
դը՝ որ կ'ուզէ սիրտն Աստուծոյ հետ պահել ,
պէտք է որ ամէն ժամանակ թէ ուտէ , թէ խմէ ,
և թէ ուրախանայ , աս վախը իր մէջն ունե-

նայ , և իր պանդխտութեան օրերն առ վախճա-
 անցընէ : Բայց լոկ առ ալ կատարելապէս բա-
 ւական չէ սիրար մեղքէ ազատ պահելու :

6 . Պէտք է որ միշտ Եստուծոյ մեղի հետ ու-
 նեցած ներկայութիւնը աղէկ զգալով , զինքը
 յարածամ առջեւնիս ունենանք : Հաս մէկ զօ-
 րաւոր միջոց մը գտած են ասիկա քրիստոնեա-
 ները , իրենց սիրանքը ուղիղ պահելով մեղքէ
 ազատ մնալու համար : Արքայ մեր հաւատոյ աշ-
 քերքը Եստուծոյ ամենատես իմաստութեան աշ-
 քերուն վրայ հաստատած ըլլանք , ան ասեն մեր
 խորհուրդներն ու բաղձանքները չպիտի թո-
 ղուներ որ անանկ դատարկ և ոչինչ բաներու վրայ
 ըլլան : Յոր երանելին չհամարձակեցաւ թող
 տալ որ իր սիրար մէկ անմարտ և դատարկ
 խորհուրդ մը ունենայ , և թնչ բան էր անոր առ
 մեծ զգուշութիւնը ընել աուսողր : Արտէ թէ՛
 « Կիթէ անիկայ իմ ճամբաներս չտեսնար ու
 ամէն քայլերս չհամբեր » : Ըն . 4 :

Հնորհրով լեցուած հոգիները կը ցուցընեն
 որ , ասանկ մասնաւոր բաներու մէջ մեծ հոգ
 ունին իրենց սրանքուն վրայ : Ընտնք մեծ զգու-
 շութիւն կ'ընեն փորձութեան ժամանակ պա-
 տահելիք շարիքները արդիւելու , շատ հոգ կը
 ասնին իրենց սրանքուն մէջ հաստատուն պահել
 ամեն ան անուշութիւններն ու միթիթարութիւն-
 ները , որոնք Եստուծոյ կ'ընդունին որ և իցէ
 պարտաւորութիւններ կատարած ատեննին : Ե-
 չա՛ս առ է ան մի միայն դործը , և սուրբ վա-

բուց մէջ եղած գործքերուն խիստ դժուար ,
մշտատե և ամենահարկաւորը :

Թ . Աս է մարդուս ամենագժուար գործը :
Արդարեւ սրտին գործը խիստ դժուարին գործ
մըն է : Անզգոյշ և թոյլ , խառն ու անկարգ
կերպով հողեոր պարտաւորութիւն կատարե-
լը զիւրին բան է , մի միայն դժուարութիւնը՝
Տէրոջը առջին խոնարհելով թոյլ ու պարսպ
խորհուրդներդ , շարունակ ու սերտ մտադրու-
թիւնով անոր վրայ ուղղելն է : Հատ զիւրին
բան է աղօթքի մէջ լեզուի արագութիւն ու
զիւրութիւն մը ստանալով գեղեցիկ աղօթքներ
զրուցել . սակայն որչափ դժուար է կոտրած և
Աստուծոյ ձրի շնորհացը միջոցովը հալած և ա-
մօթով ու խոնարհութեամբ լեցուած սիրտ մը
ունենալ , երբոր մեղքերդ կը խոստովանիս՝ զԱս-
տուած կ'օրհնես՝ և անոր անհուն սրբութեանը
վրայ կը խորհիս . և մանաւանդ ասանկ սիրտ մը
ստանալէդ ետքը անիկա յարաժամ աս վիճա-
կին մէջ պահելը . յիրաւի ասիկա մեծ հառա-
չանք և հեծութիւն կը պահանջէ : Մեղքին ար-
տաքին գործադրութիւնները նուաճելով ու սան-
ձելով՝ կեանքին արտաքին երեւոյթը մարդոց
առջին գովելի ընելը մեծ բան մը չէ . որովհետեւ
չատ աշխարհասէր անձինք այսինչ շարժառիթ-
ներով ասանկ կրնան ընել . սակայն սրտիդ մէջ
գտնուած շարութիւններուն արմատները փրցը-
նելով՝ անոր վրայ սուրբ կառավարութիւն մը
գնելն ու պահելը՝ և ամէն խորհուրդներդ ու

գործողութիւններդ Աստուծոյ կամացը պէս ուղիղ և կանոնաւորութեամբ զասակարգելը արդարև շատ դժուարին գործ մըն է :

բ . Աս գործը մշտապէս գործ մըն է : Արտի պահպանութիւնը անանկ գործ մըն է՝ որ երբէք չպիտի լիննայ , մինչև որ կեանքերնիս չվերջանայ : Քրիստոնեայի մը կեանքին օրերուն մէջ աս մեծ գործիս ընդհատել տուող ժամանակ մը կամ վիճակ մը չկայ : Արտերնուս վրայ հսկողութեամբ պահպանութիւն ընելու պարտաւորութիւններնիս Խորայելացւոց Ամաղէկին հետ պատերազմ քրած ատենը Վովսէօսի իր ձեռքերը վեր բռնելուն կը նմանի , Վովսէս հոգնելով ձեռքերը վար առած ատենը անմիջապէս Ամաղէկ Խորայելացւոց վրայ յաղթող կը հանդիսանար : Գաւիթ և Պետրոս միայն քանի մը վայրկեան աս գործէն զազրելնուն համար ինչ ահաւոր ու սոսկալի օրերու ու դիշերներու հանդիպեցան :

գ . Քրիստոնեայի մը կեանքին ամենահարկաւոր ու խիստ երևելի գործքն է սիրաբար պահելը : Այնքան անոնց աս գործը կատարելու կ'ապրինք , բրիստոնէութեան մէջ մենք նորասերներէ կամ կեղծաւորներէ տարբերութիւն մը չունինք , ամէն զաւանութիւններնիս պարզեանքնիս ու կատարած պարտքերնիս բնաւ քան մը չեն : Աստուծոյ պահանջածը միայն աս է . «Որդեակ իմ՝ քու սիրաբար ինծի տուր» : Եւս . իգ . 26 : Ասիկա քանի որ իրապէս պարտք մըն է , Աստ-

ուած ահա՛ կը հաճի պարզեանունելու : անիկա կ'ուզէ իր արարածին վրայ ասանկ պատի մը դնել : որ անոր սիրար իբրև պարզե ընդունի : բայց թէ որ մենք մեր սիրաերբ իբն շատնք : ալ ուրիշ ինչ բան որ տանք շնորհունիր : Գրած գործքերնու արժէքը միայն աս է : որ մեր սիրաերբ անոնց մէջ գանտին : Բենիամինին համար Յովսէփին բսածը՝ Եստուծոյ սիրաերնու համար բսածին պէս է : «Այժէ Բենիամինը քու հետզ բերելու շրջաս : իմ երեսս պիտի չտեսնես» : Հեթանոսաց մէջ երբոր զոհի համար անասուն մը կը մորթուէր : ամէն բանէն առաջ քահանան անասունին սրտին կը նայէր : և թէ որ սիրար վատաւողջ և անշահ ըլլար : զոհը չէր ընդունուէր : Ահա՛ այսպէս Եստուած ալ կը մերժէ մեր կատարած ան ամէն պարտքերը (թէ և ուրիշ նկատմունքներով շատ փառասոր ալ ըլլան) որոնք առանց սրտի կը կատարենք : Են որ առանց սրտի այսինքն անզգուշութեամբ որ և իցէ պարտասրտութիւն մը կը կատարէ : Եստուծոյ առջին երկմիաներէն ու կեղծարներէն աւելի ընդունելութիւն մը չպիտի գանէ :


Ահա մինչև հաս համառատարար խօսեցանք սրտի պահպանութեան ինչ բան նշանակելը :

Երզ՝ յառաջ երթանք Աշխարհին : այսինքն քանի մը պատճառներ ցուցնելու թէ ինչու քրիստոնեաներն ասիկա իբնց կեանքին ամենամեծ գործն ընելու են :

Մտիկա կեանքերնուս ամենաճարկաւ որ ունեմխաեղի գործը բնելու պարտաւ որ բլալնիս քանի մը դիտողութիւններէ շատ յայտնի կ'երեւայ :

1. Ըստուծոյ փառքը զլիաւորապէս ասով յառաջ կ'երթայ : Արախն շարութիւնները Տէրը շատ կը զայրացընեն : Գպրոցականները աս բանը շատ շիտակ բռած են թէ արտաքին մեղքերը «Մեծ վատաճամբաութիւն պատճառող մեղքեր» են : Ասկայն սրախն մէջ գործուած մեղքերը ծանր յանցանք սեպուելու մեղքեր են : Քանի քանի անգամ աճաւոր Ըստուածը երկինքէն իր բարկութիւնը յայտնեց մարդոց սրտուն շարութեանը դէմ : Ինչ էր ասաջին աշխարհին ջրհեղեղով կործանելուն պատճառը : «Տէրը երբոր տեսաւ որ մարդոց շարութիւնները երկրի վրայ կը շառնար , և անոնց սրախն խորհուրդներուն բոլոր գաղափարները միայն շար էին ամեն որ , երկրի վրայ մարդ ստեղծելուն զգջացաւ» , և ասոր համար անանկ աճարկապատիմ մը խրկեց՝ որ սկիզբէն 'ի վեր ամենեին տեսնուած չէր : Ասորը Գրոց մէջ անոնց մարդասպանութիւնները՝ կասապաշտութիւնները՝ շքնութիւնները և հայհոյութիւնները մասնաւորապէս նշանակուած չէ : (Թէ և այսպիսի մեղքերով ազտոտուած էին ,) այլ անոնց սրտերնուն շարութիւնը : Ըն բանը՝ որ զրգուեց զԸստուած իր մասնաւոր ժառանգութիւնը թշնամեաց ձեռքը մասնելու , անոնց սրախն շարութիւնն էր :

868
A
744



«Ո՛վ Արուսազէմ՝ սիրող շարութենէ լուսն ,
որպէս զի փրկութիւն գանես . քու շար խոր-
հուրդներդ՝ մինչև երբ սրտիդ մէջը պիտի մնան» :
Երեմ. Գ . 14 :

Ըս ժողովուրդին խորհուրդներուն շարութեանը և սնապաշտութեանը մասնաւոր դիտողութիւն մը ընելուն համար էր , որ Քաղզէացիները «Արջէն ելևող առիւծի մը պէս անոնց վրայ պիտի խրկէր անոնք կտոր կտոր ընելու» : Ենկեալ հրեշտակներն ալ իրենց խորհուրդներնուն շարութեանը համար էր որ երկինքէն վար ձգեց Ըստուած և դեռ կը պահէ անոնք «Յախտենական շղթաներով ան մեծ օրուան գատաստանին» . աս կերպ զուցուածքը յայտնապէս տարօրինակ գատաստան մը կը ցուցնէ , որուն անոնք արժանացած են . ինչպէս որ բանաարկեալներուն ծանր շղթաներով պահուիլը՝ իրենց յեաին շարութեանցը մէկ նշանն է : Եւ ի՞նչ էր իրենց մեղքը : Հոգեոր շարութիւն : Աոկ սրտին շարութիւններն են Ըստուած զայրացընողները՝ որ ասոնց համար բարկութեամբ կը մերժէ սմանց կատարած ամէն հոգեոր պարտքերը : «Արջաոր մորթողը՝ մարդ մեռցընողին պէս է . գառը զո՛հ մատուցանողը՝ շուն մորթողին պէս . և նուէր մատուցանողը՝ խոզի արիւն մատուցանողին պէս . խունկ ծխողը՝ կուռք պաշտողին պէս» : Եսայ . կԳ . 3 : Սուրբ Ըստուծոյ բերանը ի՞նչ խօսքերով առաւել կատարելապէս կրնայ ցուցնել արարածոց գործքերուն զէմ իբ

ունեցած ատելութիւնը : Մարդասպանութիւնն
ու կռապաշտութիւնը՝ անոնց պատարագներէն
աւելի ատելի չեն իր առջին • թէպէտ ինքը սահ-
մանած էր պատարագները : Աւ ինչ բանով անոնց
պատարագները այսբան ատելի եղան : Հետե-
կալ խօսքերը կը ծանօթացընեն մեզ՝ ըսելով,
«Իրաւցընէ անոնք իրենց ճամբաները ընտրե-
ցին, ու անոնց հողիները իրենց գարշելիներէն
կ'ախորժեն» : Առայ • կղ • 3 :

Ահա ասանկ է սրտով գործուած մեղքերուն
վատթարութիւնը, որոնց վրայօք Սուրբ Գիր-
քը շատ տեղ մեզի կը սորվեցընէ թէ դժուար է
անոնց համար թողութիւն գտնելը : Միման
մող շիտակ սիրտ չունէր, Աստուծոյ՝ և ասա-
ուածային իրերու վրայ շատ անկարգ խորհուրդ-
ներ ունենալուն համար՝ Առաքեալը պատուի-
րեց անոր թէ «Գուն ազ շարութենէդ զեղ-
ջի եկուր, ու Տէրօջը աղաչէ, գուցէ ներուին
փեղի քու սրտիդ չար խորհուրդները» : Ո՛հ,
ուրեմն չըլլայ որ երբէք սրտին շարութիւնները
բանի տեղ չդնելիք ընես • քանզի ասոնց համար
Աստուած շատ սաստիկ բարկանալով քեզ պատ-
ժելու կը յորդորուի : Աւ այս պատճառաւ թող
ամէն քրիստոնեայ ջանք ընէ ամէն զգուշու-
թիւնով իր սիրտը պահելու :

2 • Մեր դաւանութիւններուն անկեղծութիւ-
նը ըստ մեծի մասին սրտերնուս պահպանութեա-
նը վրայ հող տանելնէս կախեալ է : Շատ սաղյգ
է որ իր սրտին վիճակին վրայօք անհող եղող

մարդը թէ և կրօնքի արտաքին մասերու մէջ ու-
 զից ալ երեւոյ, նոյն ատենը իր գաւանու-
 թեանը մէջ կեղծաւոր մըն է : Եսոր մէկ սրան-
 շիկ օրինակ մը ունինք Յէուի պատմութեանը
 մէջ . զի թ. ա. 31 : «Իսայց Յէու Խորայէլի
 Տէր Եսաուսոյն օրէնքին մէջը՝ բոլոր սրտով
 քալելու զգուշութիւն չբրաւ :» : Սուրբ Գրքին
 աս զլխուն մէջ Յէուի ձեռօքը Եքաաքին ու-
 Իաւհազին տանը զէմ կատարուած ան մեծ գոր-
 ծը պատմուած է , որուն համար Եսաուսը մեծ
 ժամանակաւոր վարձք մը տուաւ անոր : այս-
 ինքն Խորայէլի ամսոր՝ Յէուին մինչև չորրորդ
 սերունդին ժամանկութիւն ըլլալու : Ասկայն
 վերոյիշեալ խօսքերով Յէու իբրև կեղծաւոր
 կը դատապարտուի , թէ և Եսաուսը անոր ըրած
 գործին հաւանեցաւ և վարձատրեց . բայց տակա-
 լին նոյն գործը կատարող անձը իբրև կեղծաւոր
 անարգեց և մերժեց : Ինչ բանի մէջ կը կայա-
 նար Յէուի կեղծաւորութիւնը : Սուրբ Գրքը
 կ'ըսէ թէ՝ Տէրոջը ճամբաներուն մէջը բոլոր
 սրտով քալելու զգուշութիւն չբրաւ , աս բա-
 նիս մէջ էր . որ ըսել է թէ ան գործը կատա-
 րեց բոլորովին կեղծաւորաբար և անձնասի-
 րական նպատակներով , և թէպէտ գործը է-
 ռո՛ք Բարէ էր , սակայն Յէու անիկա կատարած
 ատենը անձնասէր ու վատ նպատակներէն իր
 սիրտը շմարրելուն համար , կերճաւոր էր :
 Միմոն մոզ ալ երեսէն անանկ մարդ մը կ'ը-
 րենար , որ Եաաքեալը ըստ կանոնի անիկա չէր

կրնար մերժել . բայց անոր կեղծաւորութիւնը շուտով յայտնուեցաւ : Թէպէտ ինքրդինքը բարեպաշտ ձեացընելով քրիստոնեաներուն հետ կ'ընկերանար , սակայն սրաին մեղքերը մեացընելը չէր գիտեր : Եւստեալը ըսաւ թէ՛ «Վաւ սիրադ Եւստուծոյ առջին շիտակ չէ՛» : Տ'չմարիա է թէ բուն խկ քրիստոնեաներուն մէջ ալ իրենց սրբաին գործքերուն վրայօք ունեցած զգուշութիւններնուն և արթնութիւններնուն կողմանէ մեծ ասարքերութիւն կը գտնուի . ոմանք ուրիշներէն աւելի վարժ ու աւելի յաջող են առ բանիս մէջ . բայց ան մարդը՝ որ երբէր զգուշութիւն չընէր և ջանք չունի Եւստուծոյ առջև ուղի սիրա մը ունենալու , սոսկ կեղծաւոր մըն է : Եւստուած Ազնկիկէլ մարդարէին բերանովը կ'ըսէ թէ՛ «Մնանք ժողովրդին գալուն պէս քեզի կուգան , ու քու առջևդ իմ ժողովրդիս պէս կընրտաին , և քու խօսքերդ կը լսեն , բայց զանոնք չեն ընեք , վասն զի անոնք իրենց բերնովը հաճութիւն կը ձեացընեն . բայց սրտերնին իրենց ազահութեանը ետեւէն կ'երթայ» : ԼՊ . 31 : «Մնանք իմ ժողովրդիս պէս՝ անոնց նման կուգան , բայց չէ թէ անոնցմէ են՝ ըսելով , կը ցուցընէ թէ ճիշտ կեղծաւորներու ընկերութիւն մըն են : Ալ ինչո՞ւ ասոնք ասանկ էին : Մնոնց արտաքին երևոյթները գեղեցիկ ըլլալով , համեստ կերպարանք բարձր գաւանութիւններ ունէին և կը ցուցընէին ալ թէ օրինաց կամ հոգեւոր պաշտամանց մէջ շատ բերկրութիւն

կզգան , «Մհա՛ զու՛ն անո՛նց քաղցրաձայն և հմուտ
նուադածուի մը ախորժեղի երգին պէս նա՛» կ'ըսէ
Տէրը Մարգարէին , այո՛ , սակայն այսու ամե-
նայնիս ան պարտաւորութիւնները կատարած
առնանին իրենց սիրտերը Մատուծոյ հետ պա-
հուած շրջալու՛ն համար , իրենց ցանկութիւն-
ներնուն ու ազահութիւններնուն հակէն կ'եր-
թային : Այժմէ անոնց սիրտը Մատուծոյ հետ բլ-
լար , ամէն բան աղէկ պիտի բլլար . բայց այն-
պէս շննելովնին՝ և ան ժամանակը սիրտերնուն
որ ճամբէն երթալը շնկատելովնին կեղծաւոր
բլլալնին յայանեցին :

Այժմէ ճշմարիտ քրիստոնեայ մը ասկից մա-
կաբերութիւն մը բնկլով բսկու բլլայ թէ ,
«Սերեմն ևս ալ կեղծաւոր եմ , վասնզի պար-
տաւորութեանց մասին շատ անգամ իմ սիրտս
ալ Մատուծմէ կը բաժնուի . յիրաւի թէ և
կրցածս կ'ընեմ , սակայն չեմ կրնար սիրտս Մա-
տուծոյ հետ պահել » . կը պատասխանեմ՝ որ ազ-
ատարկութեան լուծմունքը իր մէջն է : Ով
քրիստոնեայ , կ'ըսես թէ՛ ինչ որ կ'ընեմ , չեմ
կրնար սիրտս Մատուծոյ հետ պահել . եթէ կըր-
ցածդ կ'ընես , զու՛ն ուղիղ սրտի մը օրնութիւնը
ունիս . թէպէտ Մատուած աղէկ կը սեպէ , որ
բեզ այդպիսի խանգարեալ սրտի մը նեղութիւն-
ներուն կամ արտամութեանցը տակ վարժէ :

Իրօք ամենէն առարկինի մարդոց խորհուրդնե-
րուն և երեակայութեանցը մէջ տակաւին թե-
րութիւն կայ : Սակայն թէ որ զու՛ն առաջուց

Հող տանելով՝ ան խորհուրդներուն եկած ա-
տենը, անոնց դէմ հակառակիս, և ետքը ա-
նոնց վրայ տրամիս ու ցաւիս, անձատենը կեղ-
ծաւորութեան դատապարտութենէն կ'ազատիս :
Եսանկ խորհուրդները արգիլելու համար ը-
րած նախազգուշութիւնդ՝ կը տեսնուի ըստ մա-
տին Եսաուծոյ խօսքը սրտիդ մէջ պահելով,
Սաղմոսերգուն կ'ըսէ թէ «Քու խօսքդ իմ սրբ-
տիս մէջ պահեցի, որ շնորհանշեմ քեզի դէմ» :
ՃԺԹ . 11 : Ըստ մատին ալ կը տեսնուի սիրտդ
Եսաուծոյ հետ միացընելու ջանք ընելովդ, և
ըստ մատին ազօթքի մը սկսած ատենդ Եսաուծմէ
զօրացուցիչ շնորհք խնդրելովդ : Ե. յսպէս նա-
խազգուշութիւն մը ընելը բարի նշան մըն է : Այ-
սա մեղքերուն դէմ անոնց առաջին ծագման ա-
տենը հակառակիլը՝ անկեղծութեան յայտնի ա-
պացոյց մըն է : «Գատարկ խորհուրդները ա-
տեցի» : Սաղ . ՃԺԹ . 113 : «Հոգին կը ցանկայ
մարմինին հակառակ» : Գաղ . ն . 17 : Եսե
սրտիդ անկեղծ ըլլալը ցաւերէդ ալ յայտնի է :
Եթէ Եղեկիային հետ դուն ալ սրտիդ շարու-
թիւններուն համար խոնարհելու ըլլաս, անոր
խանդարումները պատճառ մը չեն քու անկեղ-
ծութիւնդ տարակոյսի մէջ ձգելու . բայց եթէ
մեղքը սրտիդ մէջ հանգարտութեամբ բնակելու
թողուս, և առանց ուղղութեան անոր՝ այսինքն
սրտիդ սովորաբար Եսաուծմէ հետու թափառիլն
ալ թողուս, յիբաւի դէշ ու վտանգաւոր նշան
մըն է :

3. Մեր խօսակցութեան անուշութիւնը՝ հոգիներնուս երկնաւոր բնութիւն մը սօսանալէն յառաջ կու գայ : Վրիստոնէից խօսակցութեանը մէջ հոգեւոր վեհութիւն և անուշութիւն մը կայ . «Վրդարը իր ընկերէն զերազանց է» : Վ. Գ. Բ. 26 : Սուրբերը աշխարհի լոյսին պէս կը փայլին , բայց անոնց կեանքին մէջ եղած փայլունութիւնն ու զեղեցկութիւնը հոգիներնուն մարբութենէն յառաջ կու գայ , ինչպէս որ լսուակերի մըն ալ զուրսի կողմին պայծառութիւնը՝ մէջը վառուած ճրագին լուսաւորութենէն յառաջ կու գայ : Անշար է որ խանդարեալ սիրակ մը կանոնաւոր խօսակցութիւններ յառաջ զան երբէք . և որովհետեւ բնաբաննուս համեմատ՝ կեանքին առուններն ալ սիրակն յառաջ կու գան իրեն անոնց ազրիւրէն , ուստի կը հետեի որ սիրան ինչպէս որ է , կեանքն ալ ճիշդ պնդակալուի : Ասոր համար է որ Պետրոս առաքեալ կ'ըսէ . « Պէտք է 11 , 12 . «Մէկ զի կեցէք մարմնաւոր ցանկութիւններէն ու ձեր վարքը հեթանոսներուն մէջ պարկեշտ (կամ ըստ Յոյն բնութեան զեղեցիկ) պահելով » : Այսպէս ալ Աստուծոյ . ճն . 7 . գրուած է թէ՛ «Վարդարը իր ճամբայէն՝ և անօրէնը իր խորհուրդներէն հրամարի » : Իր ճամբան ըսելով՝ կեանքին բնութացքը ըսել կ'ուզէ , և իր խորհուրդները ըսելով ալ՝ սրտին որպիսութիւնը , ուստի իր կենաց բնութացքը խորհուրդներէն կամ իր սրտին վիճակէն առաջ գալուն համար , երկու-

քէն ալ հրատարելու է, եթէ ո՛չ՝ միայն մէկէն շիրնար: Ըմէն գործքերուն ազօրը սիրան է, գործքերը ՚ի բնէ և իրօք պարունակուած են խորհուրդներնուս մէջ. և երբ խորհուրդները անգամ մը մեր բազմանքները կը շարժեն, խեղոյն իրենց յարմար գործեր յառաջ կը բերեն: Այնքէ Տէրօջը խօսքին պէս սիրտը շար է՝ «Անկէց շար խորհուրդներ, մարդասպանութիւններ՝ և այլն, յառաջ կու գան»: Ս. Գ. 19: Ըստ կարգին՝ նախ ցանկահան կամ վրէժխնդրական խորհուրդներ, յետոյ պիղծ կամ մահառիթ գործադրութիւններ: Այնքէ որ սիրտը սուրբ ըլլայ, ան ատեն բանը Սաղմոսերգութիւն պէս կ'ըլլայ. որ ըսաւ թէ՝ «Իմ սրտէս բարի խօսքեր կը բղխի. շարադրածս թագաւորին համար պիտի խօսիմ, իմ լեզուս արագազիւր դպիրին զբշին պէս է»: Են. 1: Ընտրեալ բարի գործքերով ճոխաբար զեղեցկացած կեանք մը. «Իմ շարադրած բաներուս վրայօք պիտի խօսիմ»: մէկ կողմէն իր սրտէն կը բղխէ, միւս կողմէն կը շարադրէ ու կը խօսի. որոնց երկուքն ալ սրտին երկնային վիճակէն յառաջ կու գան: Ընդամ մը սիրտդ աս վիճակին մէջ դիր, ան ատեն բանին այսպէս ըլլալը շուտով պիտի յայտնէ կենաց ընթացքը: Քրիստոնեաներուն խօսակցութիւններէն և գործքերէն իրենց հոգիներուն ինչ վիճակի մէջ ըլլալը ստուգելը դժուար բան մը չէ: Սէկ բարեվիճակ քրիստոնէի մը հետ կենցաղավարու-

Թիւն բրէ : պիտի գանես որ որչափ խոհական՝
 երկնային՝ և օգտակար պիտի ըլլան իր լեօսակ-
 ցութիւններն ու հոգեւոր խրատները : Ինչ
 սիրուն ընկեր մը պիտի ըլլայ անիկա քեզի ան
 միջոցին : յիշուի անոր հետ պայպիտի ժամանակ
 մը անցընելից սրտիդ բերկրութիւն մը պիտի ըլ-
 լայ : «Արդարին բերանը իմաստութիւն կը խօսի :
 ու անոր լեզուն իրաւունք կը զբուցէ : իր Աս-
 տուծոյն օրէնքը իր սրտին մէջն է» : Սող. լէ. 30 : 31 : Արբոր սիրաբը Աստուծոյ հետ է, և Աս-
 տուծով լեցուած : սրբան գիւրաւ ինքը կենցա-
 ղաւարութեան մէջ հոգեւոր խօսակցութիւններ
 մէջ կը բերէ, ամէն գիպուած և առիթ երկնաւոր
 նպատակի մը ուղղելով : Այսպիսի կենցաղա-
 վարութեան մը մէջ հաղիւ թէ պարապ խօսք մը
 կ'ընէ ինքը : Այս ինչ է պատճառը՝ որ քրիս-
 տոսէից շատերուն խօսակցութիւնները և կա-
 տարած պարտերը ընդունայն և անօգուտ, ի-
 բրենց թէ Աստուծոյ ու թէ մէկզմէկու հետ ունե-
 ցած հաղորդակցութիւններն ալ շոր ճիւղի պէս
 անպատու կ'ըլլայ : միայն առ է որ, սրտեր-
 նուն վրայ զգուշութիւն բրած չեն : Ստուգի-
 այս է պատճառը՝ որ շատ ողբալի շարիք մըն է :
 Այսպէս քրիստոսնեաներուն կենցաղաւար-
 ութիւններէն և բրած խօսակցութիւններէն պատ-
 ճառող և աշխարհային մարդոց խղճին ու երե-
 սին վրայ ծագող ան սովորական և ամէնը իրեն
 քաշող գեղեցկութիւնը՝ ըստ մեծի մասին կոր-
 սուած է : Ար էթէ զմարդիկ Աստուծոյ ճամ-

բաները սիրելու շնորհապուրկ ալ՝ զոնկ անոնց
խղճին վրայ վկայութիւն մը կը թողու, թէ
ասոնք և ասոնց ճամբաները շատ գերազանց են,
և աս գեղեցկութեան կորուստը մեծ ու ան-
պատմելի փնաս մըն է քրիստոնէական կրօնքին:
Ճամանակ եղաւ, որ քրիստոնէական անանկ
կեանք ու վարմունք մը ունէին, որ աշխարհ կը
զարմանար անոնց վրայ: Իրենց վարքն ու լե-
զուն ուրիշներէն տարբեր ընթացք ու ձայն մը
ունէր, ուր որ երթային՝ լեզուներնէն կը յայտ-
նուէին թէ Վալլէլլոյն են: Վայց հիմա քանի
որ դատարկ խօսակցութիւններն ու անողուտ
փեճարանութիւնները այսբան զօրացած են և
սրտին գործը՝ այսինքն գործնական Շատուած-
պաշտութիւնը քրիստոնէից մէջ այսբան զանց
տանուած է, բանն ալ շարաշար փոխուած է,
իրենց կենցաղավարութիւնն ու խօսակցութիւն-
ներն ուրիշ մարդոց նման եղած են: Ան վսեմ
տարբերութիւնը՝ ալ աշխարհ շտեաներ անոնց
վրայ: Այլ գրեթէ ասանկ ողբալի շարիքի մը
վերնալուսն, և քրիստոնէական կրօնքը իր նախ-
կին պատիւը ստանալուն յոյս չունիմ, մինչև որ
քրիստոնէականներն իրենց առաջին ընթացքը բրո-
նեն, և սրտին գործը կատարելու ձեռք զարնեն,
քանզի երբոր երկնային տրամադրութեանց ազո-
ակին մէջ ձգուելու որ ըլլայ, ան ատեն աղ-
բիւրը խիստ մարուր և անուշ պիտի վազէ:

Կ. Շողիներնուս միտիմարութիւնը՝ ըստ մեծի
մասին մեր սրտերուն պահպանութենէն կախում

ունի, քանզի ան մարդը՝ որ իր սրտին վրայ զգուշութեամբ հոգ տանելու անհոգ է, անանկը բընականապէս իր փրկութեանը վրայ ունեցած ապահովութենէն և անկէց հետեւող միտքաբանութիւններէն օտարացած է: Յիրաւի եթէ ան վարդապետութիւնը ճշմարիտ ըլլար, որ բարի գործքերու և առաքինի վարուց հարկաւորութիւնը ոչինչը կը հանէ, սորվեցընելով թէ Սուրբ Հոգին է մարդս անմիջապէս ապահով բնողը՝ ուղղակի մեր որդեգրութիւնը վկայելով, — — — — — ան ատենը կը բնայինք մեր սրտերուն վրայօքը անհոգ ըլլալ, և մինչև անգամ անգէտ ըլլալ անոնց. միանգամայն մէկ խաբերայ միտքարութիւն մը ունենալով ներսերնիս. բայց որովհետև Սուրբ Գիրքը և փորձառութիւնը կը հերքէ աս վարդապետութիւնը. ուստի կը յուսամ որ այսպիսի մուար և Սուրբ Գրոց հակառակ ճամբու մը մէջ միտքարութիւն փնտռելու չենք: Ար հաւատամ որ մարդուս աս ներքին ապահովութիւնը տալը՝ Սուրբ Հոգիին դործն ու պաշտօնն է. սակայն շատ վստահութեամբ կը հաստատեմ, որ եթէ որ և իցէ ատեն աս իրական ապահովութիւնը Աստուծոյ սահմանած ճամբովը ձեռք ձգել ուղելու ըլլանք, պէտք է որ մեր սրտերուն պահպանութեանը համար շատ աշխատինք: Արեւելի մատենագիր մը իր «Աւետիկ վրայ» գրած ճառին մէջ կը պատմէ թէ, քրիստոնեայ մը կը ճանչնար, որ քրիստոնէութեան դարձած ատենը շատ

կը հասաչէր, Եստուծոյ զինքը սիրելուն մէկ
անսխալ վկայութիւն մը ունենալու, անանկ որ
չատ անգամ երկինքէն ձայն լսելու կը փա-
փարէր, դաշտերուն մէջ առանձին ժուռ եկած
ժամանակը՝ շատ սաստիկ կը փափարէր ծառե-
րէն ու բարերէն հրաշալի կերպով ձայն մը
լսելու, և շատ ժամանակ այսպիսի ակնկալու-
թիւններով անցընելէն ետե յուսահտուր եղաւ .
բայց ետքը իր փափարը լեցուեցաւ Եստուծոյ
սահմանած ան միմիայն սովորական ընթացքովը՝
այսինքն Եստուծոյ խօսքն ու իր սիրտը քննելով :
Ետք նման բան մը կը պատմէ ուրիշ հեղինակ
մը ուրիշ մէկու մը վրայօք . որնոր փորձու-
թեան մէջ իյնալով՝ յուսահտուր թեան ան-
գունդներուն եզերքը հասեր էր . և վերջապէս
երբոր Եստուծոյ ողորմութեամբը կանգնեցաւ
և հաստատութիւն գտաւ, իր բարեկամներէն
մէկը հարցուց իրեն թէ՛ «Ի՞նչպէս եղաւ» . պա-
տասխան տուաւ թէ՛ «Այ թէ նոր և արտաքոյ
կարգի յայանութիւնով մը, այլ միտքս Սուրբ
Գրոց տալով և սիրաս յարստամ անոնց հետ
բազմատելով» : Յիրաւի Սուրբ Հոգին կ'ապա-
հովցընէ մեզ մեր որդեգիր ըլլալուն վկայելով . և
ինքը աս վկայութիւնը երկու կերպով կ'ընէ . ա-
ռաջին կերպն է հոգիներնուս մէջ ան շնորհքները
յառաջ բերելով, որոնք խոստմունքին ուխ-
տերն են . և այսպէս Հոգին Սուրբ և մեր մէջը ե-
ղած անոր շնորհքները ամէնը մէկ են : Եստուծոյ
Հոգւոյն մեր մէջը բնակած ըլլալը չէ թէ իր էու-

Թեամբը , այլ հասարած գործողութիւններէն
կրնանք ընտրել կամ որոշել . և ասիկա՝ այսինքն
գործողութիւնները որոշելը , սաուգիւ Աւերք
Հոգին որոշելն է . և ես երբէք չեմ կրնար ե-
րեակայել թէ աս ընտրութիւնը ինչպէս կրնայ
ըլլալ՝ առանց սրտին վրայ խոհական գիտողու-
թիւն մը և զգուշութեամբ հսկողութիւն մը ընելու :
Հոգւոյն Արքայ մեր որդեգրութիւնը վկայելուն
միւս կերպը՝ լուսատու շնորհքով մը հոգինիս
լուսատուելով կ'ըլլայ , որ կը ճառագայթէ իր
բրած գործողութեանը վրայ . և ասիկա բնական
կարգով առաջինէն կը հեռի , ինքը առաջ կը
թափէ իր շնորհքը , և յետոյ հոգւոյն աչքը կը
բանայ անիկա տեսնելու : Երգ քանի որ սիրտը
ան թափուած շնորհքին ներթափայ է , մինչե-
անգամ Հոգւոյն Արքայ վկայութեան աս կեր-
պը՝ սրտերնուս վրայ մեծ զգուշութիւնով պահ-
պանութիւն ընելնուս հարկաւորութիւնը կը
պարունակէ : Ինչու որ ,

« . Հոգ շատրուած սիրտ մը այնքան խան-
գարուած ու մութ է՝ որ անոր մէջ եղած քիչ
շնորհքը բնականապէս անյայտ կ'ըլլայ , երբեմն
առաւել արթուն և գործունեայ քրիստոնեաները
անգամ դժուարութիւն կ'զգան իրենց սրտեր-
նուն մէջ եղած Հոգւոյն Արքայ ան մարտը ու
վաւեր գործողութիւնները իմանալու : Արեմն
ան քրիստոնեան որ բազդատմամբ անհոգ է իր
սրտի գործքին վրայօր , ինչպէս կարող պիտի
ըլլայ երբէք շնորհքի ներգործութիւն մը իմա-

նալու : Անկեղծութիւնը՝ որ փնտռած բաներն
 նիս է , գեաի մը յատակը եղած կտոր մը սակիի
 պէս է սրաերնուս մէջ . ով որ կ'ուզէ անիկա
 գանել , պէտք է կայնի մինչե որ ջուրը պար-
 զուի . և ան տանը պիտի տեսնայ սակին որ գե-
 աին յատակը կը փայլի : Ա՛հ որչափ ցաւ՝ հրս-
 կողութիւն՝ հոգ՝ և զգուշութիւն պէտք է սրաին
 մարբութեանը համար :

Թ . Աստուած ընդհանրապէս ապահովութեան
 միտմարութիւնները չընորհեր անփոյթ հոգի-
 ներուն . անիկա բնաւ պիտի չյաշտպանէ ծու-
 շութիւնն ու անհոգութիւնը , անոր օրէնքը ան-
 բաժանելի կերպով կը միացընէ մեր հոգն ու միտ-
 մարութիւնը : Անոնք որ կը կարծեն թէ կրնան
 առանց աշխատելու հոգեոր ապահովութիւն
 ձեռք ձգել , ամեն ալ մեծ սխալման մէջ ինկած
 են : Ա՛հ . Աստուծոյ հաւատարիմ ժողովուրդը
 օրչափ առանձնակեաց ժամեր կանցընէ իր սիր-
 արք բնեկու համար , քանի քանի անգամ անի-
 կա իր սիրտը կենաց խօսքին հետ կը բազդա-
 տէ : Աշրբեմն անանկ կը կարծեն թէ ճշմարիտ և
 ստոյգ ապահովութիւն ունին , և նոյն տանն ալ
 անանկ անլուծանելի տարակուսութեան մը մէջ
 կ'իյնան , որ ունեցած յոյսերնուն ամեն ալ
 մէկ զի կ'ընէ ու կ'ոչնչացընէ . անոնք մէկ միտ-
 մարական ու քաջալերող հաստատութեան մը
 հասնելէն առաջ խորհուրդներնուն մէջ անթիւ-
 վախեր՝ տարակուսութիւններ՝ և շփոթութիւն-
 ներ կ'ունենան : Ասոյց անհոգ քրիստոնեայի մը

ապահովութեան հասնել թէ որ կարելի սեպկու-
րլլանք ալ, անկարելի է որ ինքը անոր մէջ երկար
մնայ: Միայն քիչ մը գոսոզութիւնով՝ ունայ-
նութիւնով՝ կամ անհոգութիւնով, շատ ծանր և
բազմաժամանակեայ աշխատութիւններով ըրած
ազօթքները պարապը կ'ելլեն ու կ'ոչնչանան .
ուստի մեր կենաց ուրախութիւնն ու հոգիներ-
նուս միտթարութիւնը աս գործին մէջ ունե-
ցած զգուշութիւններնուս համեմատ կ'ելլէ կամ
կ'իջնէ . ուրեմն «Վե՛նայն զգուշութիւնով քու
սիրտդ պահէ»:

5. Կեր շնորհքով աճիլը՝ սրտերնուս պահ-
պանութենէն կախում ունի: Վե՛նե ին շեմ
գիտեր անհոգ հոգի մը՝ որ շնորհաց մէջը աճումն
գտած ըլլայ: Շնորհքին ունակութիւններն ու
արժանները՝ սրտին մէջը կը անկուին . և հոն սր-
շափ խորունկ որ արմատանան, այնքան աւելի
կը ծաղկին ու կաճին: Արժ. . 4 . 17 . Գրուած
է թէ շնորհքի մէջ «արմատ կապած» եղիք .
սրտին մէջ եղած շնորհքը բերնին ամէն շնորհա-
լից խօսքերուն և ձեռքին կատարած բոլոր սուրբ
գործքերուն արժանն է: Ճշմարիտ է թէ
քրիստոնէին արմատը Քրիստոս է, բայց ոչ թէ
սկզբնաւորած՝ այլ սկզբնաւորող արժանն է, և
շնորհքն է Քրիստոսով սկզբնաւորած՝ անկուած՝
և ներգործուած արժատ մը: Աւստի տսիկա
որշափ աճի աստուածային զօրութիւնով՝ նոյն
համեմատութեամբ շնորհաց գործքերը շատ կամ
քիչ արդիւնաւոր և զօրաւոր կ'ըլլան: Վպա

ուրիմն ան սիրար՝ որ մեծ հոգով և զգուշու-
թեամբ պահպանուած չէ՝ ասարդիւնաւորող ներ-
գործութենէն զրկուած ու կարուած է ։ և անոր
մէջ անթիւ ունայնութիւններ ծագած ըլլալով ։
իր զօրութիւնը բոլորովին խափանած է ։ սիրար
ցանկապատ տեղ մըն է ։ և անոր մէջ հանապազ
անթիւ խորհուրդներ կը սնանին կամ կը զօրա-
նան ։ զգուշութիւնով պահպանուած բարեշնորհ
սիրան ալ ամէն օր Աստուծոյ անհամար անդին
խորհուրդներովը կը սնանի ու կը զօրանայ ։ «Մը-
շափ պատուական են ինծի քու խորհուրդներդ՝
ով Աստուած ։ որ շափ մեծ է անոնց թիւը» ։ Սաղ-
ճիթ - 17 ։ «Ի՞նչ որ համբեմ անոնք ։ աւազէն շատ
են ։ երբոր արթննամ ։ զեռ քեզի հետ եմ» ։ Սաղ-
ճիթ - 18 ։ Աւ շնորհքով լցուած սիրտ մը որ շափ
որ սնուցանէ իր մէջը աս աստուածային խոր-
հուրդները ։ այնքան ալ անոնք զինքը կը զովա-
ցընեն և կը զուարճացընեն ։ «Կրթի թէ ճարպով ու
պարարտութիւնով պիտի կշտանայ իմ անձս ։ ու
ցնծութեան պահուներով պիտի դովէ քեզ իմ
բերանս ։ երբոր անկողինիս վրայ քեզ կը յիշեմ ։
զիշերուան պահերուն քու վրայ կը մտածեմ» և
այլն ։ Սաղ - կդ - 5 . 6 ։ Բայց հոգ շտարուած
սրտի մը մէջ միշտ անթիւ դատարկ և յիմարա-
կան խորհուրդներ պարտելով Աստուծոյ անհո-
գեոր խորհուրդները անկէց դուրս կը վարն-
տեն ։ որոնցմով որ պիտի զովանար Հոգին ։
Ասկէց 'ի զատ' անփոյթ սիրար բան մը չլահիր
որ և իցէ պարտաւորութիւն կամ աստուածային

Հրաման մը կատարած ստեներ, թէպէտ և սաներ
 երկնից ջրանցքներն են, որոնցմէ շնորհքը բաժ-
 նուելով արդիւնաւոր կ'ըլլայ: Արնայ ըլլալ որ
 մարդ մը անզգոյշ հողիով շատ պաշտամունք
 կատարէ, և իր ամէն օրերը ուսմամբ անցընէ,
 սակայն բան մը չըսէի, վասն զի անփոյթ սիրար
 յատակը ծակ ունեցող աւազանի կը նմանի, որ
 երկնային շնորհքները որչափ առատ ալ իջնեն,
 բնաւ չեն կրնար ան սրտին մէջ մնալ: Արբոր
 սերմը անանկ սրտի մը մէջ իյնայ, որ ամէն
 ճամբորդներու համար հասարակաց ճամբու պէս
 բաց ու խառնակեցիկ է, թողունները կու գան
 և անիկայ կ'ուտեն: Աշտղ, միայն լսելը բա-
 ւական չէ, լսելնուս ալ զգոյշ ըլլալ պէտք է,
 մարդ մը թէ և իր բոլոր կեանքը ազօթքով
 անցընէ, քանի որ անոր մէջ ան արթուն հողին
 չկայ՝ երբէք աղէկի ալ հասնելիք չունի: Մէկ
 խօսքով, ամէն միջոցները շնորհաց յառաջագի-
 մութիւնը կը յաջողեն՝ անոնց մէջ սրտերնուս
 պահպանութեանը համար ունեցած հոգերնուս
 և ճշգոյթիւններնուս համեմատ:

6. Հողիններնուս փորձութեանց ժամանակ
 հաստատուն մնալը՝ մեր սրտի պահպանութեան
 համար ունեցած փոյթէն կախեալ է: Աստա-
 նան փորձութեան ժամանակ անփոյթ եզոզ սիր-
 տերը շատ զիւրութեամբ կ'որսայ, մասնաւոր
 կերպով իր զլխաւոր ֆարքները սրտերնուս գէմ
 կը յարուցանէ, որ եթէ անանք ֆազանդեցընէ
 իրեն, ալ ուրիշ բան չմնար, բոլոր անձերնիս

ու հոգինիս իր իշխանութեան տակը առած կ'ըլլայ, վասն զի սիրան է բոլոր անձերնիս կառավարողը, և աստիճան, ինչպէս զի բին կերպով անոր բանութեանը կը նազանդին ամէն անփոյթ սիրահերը: Ասները բաց և անպատասպար քաղաքի մը մէջ թշնամիին մանկէն առաւել զիւրին է ասանկ սրտի մը յազթելը: Միայն ան սիրար կարող է փորձութիւնները գալէն առաջ իմանալով անոնց յազթելու, որ շատ վախով զգուշութեան մէջ է: Եստուածարանները դատած են որ փորձութեանց կատարուելուն և իրենց վերջին զօրութեանը հասնելուն մի միայն կերպն աս է: Եռարկայի մզում մը՝ կամ մեր ապականեալ բնութիւնը զրգոտղ առարկային մէկ զօրութիւնը կայ՝ որ կ'ըլլայ կամ իրապէս առարկային ներկայ ըլլալովը, կամ անոր խորհրդածութեամբը, երբոր երեւկայութիւնը առարկան մարին առջեւ կը բերէ, թէ և իրօք հեռի ըլլայ: Ենուհետեւ բաղձանքը զրգոտած ըլլալով ցանկութիւն յառաջ կու գայ ան բանին վրայօք իրրեւ զգայական բարիք մը երեւկայութեամբ մարին մէջ ներկայացընելով: Այս անտանը գործը կատարելու ամենէն աղէկ միջոցը գանալու համար խորհուրդ մը կը ծագի մարին մէջ: Այսպէն կը հետեի կամբին ընտրութիւնը կամ որոշումները: Այս վերջապէս՝ կամբին կատարեալ մտարանութիւնը կամ բաղձանքը, ան առարկային վրայօք: Ես ամէնը բանի մը վայրկեանի մէջ կ'ըլլան, վասն զի մարին ընտրու-

Թիւնները արագ են և զիւրաւ կը վերջանան . այսչափ միջոցի մը մէջ սիրաբը կը համոզուի . սատանան զօրաւոր կերպով անոր մէջ կ'ազդի . և ան երեւելի ամբողջին պատերուն վրայ կ'սկսի իր գրոշակները անկել . բայց եթէ սիրաբը առջուց աղէկ պահպանուած բլլայ . ստանկ վիճակի մէջ բնաւ չի յնար . փորձու թիւնը իր առաջին կամ երկրորդ յարձակմանը մէջ կր'սկսի գաղաբիլ և խափանիլ : Այլ յիրաւի փորձու թիւնը իր առաջին քայլերուն ատենը զիւրին է մերժել . վասն զի փորձուող հոգիին շարժումը՝ լեռան գազաթէն ինկող քարին շարժմանը կը նմանի . որ թէ և 'ի սկզբան զիւրին է գլխովին արգիլել . բայց երբոր միանգամ թափ առնէ . քանի որ իջնայ և ս առաւել կը սաստկանայ ուժը : Աստի մարդոյս նրբատես իմաստութիւնը՝ սրտին առաջին շարժումները նշմարելով . մեղքը ան նոյն և զած տեղն արգիլելին ու խափանելն է : Մեղաց շարժումները 'ի սկզբան խիստ տկար բլլալովն թիչ հոգ և զգուշութիւն գործածելով կրնանք շատ շարիրներ խափանել . բայց անդդոյչ սիրաբը այսպէս շրնելուն համար յանկարծ ինքրդները փորձութեանց ծանրութիւններուն տակը ճընշուած կը գանէ . ինչպէս որ Աստուծանցիք կուրցած աչքերով և եղած տեղերնին շխտնալով Ամարիայի մէջ գտան ինքրդներնին :

Ար յուսամ՝ որ սա գիտողութիւնները բաւական են մեր սիրելի բնիմ երցողները համոզելու՝ որաի զգուշաւոր պահպանութեանը շատ հար-

կաւոր ու երեւի զործ մը բլլալուն :

Ուստի յառաջ կ'երթամ ԱՅՐՈՐԴ , Յու-
ցընելու քրիստոնէի մը կենաց ան մասնաւոր
ժամանակները որ սրտի պահպանութեան մէջ
մեր վերջին ճիգը կը պահանջեն : Թէպէտ ա-
մէն ժամանակ զգուշութիւն պէտք է , (ինչ-
պէս որ առաջ տեսանք ,) և շկայ ժամանակ
կամ կենաց վիճակ մը , որուն մէջ կարենանք
աս զործքէն զազարիլ կամ մէկ զի ձգել . սա-
կայն կան քանի մը անանկ նշանաւոր ժամա-
նակներ և վտանգաւոր ժամեր՝ որ հասարակ
զգուշութենէն շատ աւելի զգուշութիւն կը պա-
հանջեն :

Ե . Ե . — Վին ժամանակը՝ յաջողութեան ժամա-
նակն է , որ ատեն նախախնամութեան օրհնու-
թիւնը կը վայելենք : Ուստի՝ ո՛վ քրիստոնեայ ,
ամէն զգուշութիւնով պահէ քու սիրտդ՝ վասն
զի հիմա գոռողութեան և աշխարհասիրութեան
մէջ իյնալու վտանգին մէջն ես : « Եւ շխար-
հի մէջ եղած խիստ հազուադիւտ բաներէն
մէկն է՝ մարդ մը իր յաջողութեանը մէջ խո-
նարհ տեսնելը » կ'ըսէ անուանի մէկը : Մինչև
անգամ Ազնկիա՝ բարի թագաւորը , փորձու-
թեան մէջ եղած ատենը փառասէր բնաւորու-
թիւնը չկրցաւ ծածկել , և ասոր համար Իսրա-
յէլին աս խրատը տրուեցաւ : « Ու երբոր քու
Տէր Եստուածդ քեզ տանի ան երկիրը՝ որուն
համար քու հայրերուդ՝ Արբաշամին , Իսահակին
ու Յակոբին երգում բրաւ , որ քեզի մեծ ու զե-

դեցիկ քաղաքներ տայ, որոնք դուն շինած չես, և ամէն բարիքներով լեցուած տուններ, որոնք դուն լեցուցած չես . . . զգոյշ կեցիք, որ շրջայ թէ . . . Տէրը մտնաս : Ի Օղն . զ . 10—12 : Այս յիրաւի ասանկ կղաւ . որովհետեւ Յետուրունը դիրնալով արացեց : Ան . 1 . 15 : Ուրեմն քրիստոնեայ մը ինչպէ՞ս կրնայ իր սիրտը գոռոզութենէ կամ մարմնին վտահանալէն պահել . երբոր նախախնամութեան օրհնութիւնը ու աշխարհի մտիթարութեանց առատութիւնը կը վայելէ :

Ահա յաջողութեան ժամանակ վտանգաւոր որոգայթներէն ապահով ընելու համար՝ զանազան օգնութիւններ կան :

« Իտէ ան փորձութեանց վտանգաւոր որոգայթները՝ որոնք յաջող և հաճելի վիճակի մը մէջ քեզ կը պաշարեն : Աշխարհիս հաճութիւններուն մէջ ապրողներէն խիստ քիչերը պիտի կարենան ազատիլ յախտնական դատապարտութենէն : Քրիստոս ըսաւ, « Իւրին է որ ուղար ասեղին ծակէն անցնի, քան թէ հարուստը Աստուծոյ թագաւորութիւնը մտնէ » : Մատթ . ԺԹ . 24 : « Չէ թէ շատ զօրաւորներ, և չէ թէ շատ աղնուականներ կանչուեցան » :

Մեծ պատճառ ունինք դողալու, երբոր Սուրբ Գիրքը ընդհանուր խօսքով քիչերը պիտի փրկուին կ'ըսէ . և շատ առաւել պատճառ ունինք սարսափելու երբոր կ'ըսէ, թէ քիչերը պիտի փրկուին ան կարգի մարդիկներէն՝ որոնց մէջ

մեր ալ կը գտնուինք : Երբոր Յեսու բոլոր
 Խորայէլի ցեղերը յառաջ կանչեց Երբոր գըտ-
 նելու համար վիճակ ձգելու . անտարակոյս Ե-
 քար վախցաւ . և երբոր Յուզայի ազգասոճմբ
 մտակցուց անոր վախը շատցաւ . բայց երբոր
 Օջարայի ընտանիքը կանչուեցաւ . ասիկա Եքա-
 րին գողալու ժամանակ մըն էր : Ե. յսպէս ալ
 երբոր Սուրբ Կիւրքը այնքան մեզի մօտ գալով
 կ'ըսէ թէ մարգոց այսինչ գասէն միայն քիչերը
 և շատ քիչերը պիտի փրկուին . ժամանակ է
 մեզի ահի ու երկիւզի մէջ իյնալու : Ասկերե-
 րան , « ի՞նչ է իշխաններէն մէկը փրկուելու ըլլայ »
 պիտի զարմանամ » կ'ըսէ , ո՛հ , որչափ շատերը
 աշխարհային հաճութեանց կառքերը նստած
 գէպ 'ի դժոխք կը դիմեն , քանի որ ուրիշներն ալ
 վիշտեր ու նեղութիւններ կրելով երկինք դնա-
 ցին : Արչափ քիչերը Տիւրոսի գլխոյին պէս
 նուէրով մը Քրիստոսի կու գան : Հարուստնե-
 րէն որչափ քիչերը անոր շնորհքը կը խնդրեն :
 Բ . 'Ի՞նչ է թէ քրիստոնէականներէն չափաւոր
 մարդիկ որքան շար եղան յաջողութեան պատ-
 ճառաւ . և աս գիտումով կրնայ մէկը յաջո-
 ղութեան մէջ խոնարհ ու արթուն ըլլալ : Ար-
 քան ազէկ պիտի ըլլար անոնց , թէ որ երբէք
 յաջողութիւն տեսած չըլլային : Ընոնք նուստ
 վիճակի մէջ եղած ատեննին , որքան խոնարհ
 հոգեւոր և երկնային էին . բայց Բնչ սոսկալի
 փոփոխութիւն մը եղաւ անոնց հոգիներուն վը-
 րայ , երբոր յաջողութեան մէջ մտան : Ե. յս-

պէս եղաւ Խորայկլացւոց : որոնք անապատին
 մէջ նուաստ վիճակի մը մէջ եղած ատեննին
 Տէրոջը Արբու թիւնը կ'ըսուէր , բայց երբոր
 Քանաան մանկելով առատութեամբ կշտացան՝
 լեզուներնին փոխուեցաւ և սկսեցին «Մենք
 ինքնազուխ կը պարտինք . մէյմըն ալ քեզի չենք
 գար» , ըսել : Աշէմ : Բ . 31 : Աշխարհային վաստակ-
 նաւը՝ սովորաբար հոգեւոր փնաս կը ծնանին , ինչ-
 պէս որ վիճակնուն նուաստ ատենը քաղաքական
 գործառնութիւններուն մէջ՝ հոգեւոր կերպով կը
 վարուէին , այսպէս ալ երբոր բարձր վիճակի հա-
 սան , սկսեցին իրենց հոգեւոր պարտաւորու-
 թիւններուն մէջ աշխարհային կերպով վար-
 ուիլ : Արդարեւ ան մարզն է շնորհքով հա-
 բուսար՝ որուն շնորհքները իր հարստութեամբը
 խափանուած չեն : Աշխարհի մէջ քիչ Յովտ-
 փասներ կը գտնուին՝ որուն համար գրուած է
 թէ «Անոր հարստութիւնը ու փառքը շատցաւ .
 ու անոր սիրտը Տէրոջը ճամբաներուն մէջը
 բարձրացաւ» : Բ Մնաց . ԺԷ . 5 . 6 : Արբոր
 խորհելու ըլլաւ թէ շատ բարեպաշտ անձինք ,
 որչափ սուշ վճարք մը ըրին հարստութիւն-
 ներ ստանալու համար , և արդարեւ անոնց մի-
 ջնցով ան բանը կորսընցուցին՝ որ աշխարհ
 չկրնար ծախու առնել . աս խորհուրդները բեղ
 պիտի չըստիպեն յաջողութեան մէջ սիրտդ
 խոնարհ և Աստուծոյ հետ պահելու :

դ . Աս խորհրդամտութիւնովն ալ քու փառա-
 մուլ և ունայնատէր սիրտդ խոնարհեցուր : Աստ-

ուսած առ բաներուս համար մէկու մը տուաւել յարդու թիւն չպիտի տայ : Արտարին զերազանցու թեանց համար մարդ մը երբեք չյարգէր, այլ միայն ան ներքին շնորհքներուն համար, որոնք Հոգիին ներքին զարգերն են, և Աստուծոյ առջին շատ մեծ արժէք ունին : Աստուած ամէն աշխարհային փառքերը կ'առէ, և մէկու մը աշտու թիւն չընէր. «Հապա ամէն ազգի մէջ՝ ով որ անկէջ կը վախնայ ու արդարութիւն կը գործէ՝ կ'ընդունի անիկա» : Արդարեւ՝ թէ որ Աստուծոյ գատաստանն ալ մարդոց գատաստաններուն պէս բլար, կրնայինք աշխարհային փառքերով ինքզինքնիս մեծցընել և անոնց ապաւինիլ, բայց ամէն մարդ Աստուծոյ գատաստանին մէջ իր ունեցածէն աւելի արժէք մը չունի : Թե՛ որ սիրտդ տակաւին կը հպարտանայ և առ գիտողութիւններուն մէկոյն ալ չխոնարհիր :

7. Արեւմտեան գիտէ թէ ինչպէս դասն կերպով ողբացին իրենց յիմարութեանը վրայ՝ սիրտերնին պսպիտի բաներու հետ կապող անձինք, երբոր տեսան թէ մահուան ցուրտ թեւերը վրանին հասեր է : Ինչ զարհուրելի տեսարան մըն է ան՝ որ Պիոս հինգերորդ յուսահատութիւնով իր մահուան տակնը պոսաց թէ՛ «Արբ որ նուստ վիճակի մը մէջ էի, քիչ մը փրկութեան յոյս ունէի, երբոր կարտինալու թեան վիճակին հասայ, մեծապէս տարակուսանաց մէջ գտայ ինքզինքս» : Բայց քահանայապետական

գահը ելլելէս 'ի վեր փրկութեան յոյս բուրո-
վին կտրեցաւ": Ասե հեղինակին մէկը հարուստ
բռնաւորի մը վրայօք ճշմարիտ՝ բայց խիստ ցա-
ւալի պատմութիւն մը կ'ընէ, որ իր մէկ հատիկ
որդւոյն համար շատ առատ հարստութիւն դի-
զած ըլլալով՝ մահուան կէտին իր քովը կան-
չելով որդիին ըսեր է թէ՛. «Որդեակ, յիրաւի
զիս կը սիրես»: Որդին ալ պատասխան կու տայ
թէ, «Քու ծնողական սէրէդ 'ի զատ բնութիւնն
ալ զիս կը պարտաւորէ այսպէս ընելու»: Հայրը
կ'ըսէ «ուրեմն ասով յայտնէ քու սէրդ, մատդ
ճրագին վրայ բռնէ՛ մինչև որ ես ազօթք մը
զրուցեմ»: Տղան կը ջանայ այնպէս ընելու,
բայց չկրնար համբերել: Աւտի աս բանիս վրայ
հայրը ասանկ կ'ըսէ: «Ինչն ինծի համար մատդ
այրելուն չես կրնար համբերել, բայց ես աս
հարստութիւնը քեզի ղիզելու համար հոգիս
վտանգի մէջ ձգեցի և քու պատճառաւ հոգիս
ու մարմինս պիտի այրի դժոխքին մէջ անսպա-
ռելի հրով, քու ցաւերդ միայն մէկ վայրկեան մը
պիտի տեւեն, բայց իմս պիտի ըլլայ ան անշիջա-
նելի կրակը":

Ե. Արնանք սրտերնիս խոնարհ պահել ղիտե-
լով որ երկրաւոր բաները որչափ արգիլօղ բը-
նութիւն ունին երկնից ճամբուն դժուարաւ յա-
րողին: Անոնք ներկայ կենաց մէջ երկինքը մեզ-
մէ կ'արգիլեն, թէ և մեզ շնն կրնար վերջապէս
արգիլել երկինքէն: Այթէ աս աշխարհիս մէջ
ինքզինքդ իբրև երկնից ճամբորդ օտարական մը

սեպես . ան ատեն զուս քեզի այնքան պատճառ
կրնաս գանել աշխարհի բաներով զուարճանա-
լու . որքան որ հոգնած կենդանի մը կրնայ
զուարճանալ իր ծանր բեռերովը : Յուլիանոսի
քրիստոնեից վրայ բերած ամբարշտական նախա-
տանացը մէջ երեւելի ճշմարտութիւն մը կը գրա-
նենք . ինքը անոնց ստացուածքը կողոպտած ա-
տենը կ'ըսէր անոնց թէ . «Մասնկ ընելը երկնից
արքայութեանը աւելի յարմարցնել է ձեզ» :

զ . Թե՛ որ տակաւին ունայնասէր և գոռոզ
է հոգիդ . միտքդ բեր պատասխանատուութեան
ան ահաւոր օրը . որ ատեն մեր ունեցած շնոր-
հացը համեմատ պիտի բլլայ հաշիւներնիս : Ին-
ծի այսպէս կ'երեւայ որ քրիստոնեի մը վրայ եր-
բէք գանուած ան ունայնասէր սիրտը ահով ու
զոզով պիտի խոնարհեցնէ աս դիտողութիւնը :
Իբրեւ ստոյգ ճշմարտութիւն մը գիտցիր որ՝ Տէ-
րը կեանքիդ սկիզբէն մինչև վերջը քեզի տուած
ամէն շնորհքները պիտի յիշէ : Այո՛ . Ըստուած
ճշտութեամբ համբաւ ու իր յիշատակարանին
մէջ արձանագրած է՝ ընդհանուր և ամէն մէկուն
իրենց գործոցը յարմար հաշիւ մը տեսնելու հա-
մար . «Արու որ շատ տրուեցաւ , շատ պիտի պա-
հանջուի անկէջ» : Ինչ որ միայն տնտեսներ էր
և ձեր տէրը որ մը հաշիւ ուղելու պիտի գայ .
ուստի ո՞վ հարուսաներ՝ զուք որ աշխարհիս բա-
րիքները առատութեամբ կը վայելէք , որչափ մեծ
պիտի բլլայ ձեր հաշիւը : Ինչ զիւրապատրաստ
վկայութիւններ պիտի բլլան ձեզի դէմ ամէն

ընդունած շնորհքներնից , թէ որ աս ըլլայ ասնոնց ամենալաւ արդիւնքը :

է . Իմ սիրտս շատ խոնարհեցընող խորհրդածութիւն մըն է աս . երբ կը խորհիմ որ Աստուծոյ շնորհքները իմ հոգւոյս վրայ ուրիշ մարդոց հոգիներուն վրայ գործածէն տարբեր կը գործեն . որոնց կու գան անոնք իբրև 'ի սիրոյն Աստուծոյ սրբեալ շնորհքներ : Ավ Տէր . ինչ ցաւազին դիտողութիւն մըն է աս . յիբաւի բաւական է զիս մոխիրի մէջ նստեցընելու . երբոր աշփս առջևը բերեմ ,

1 . թէ ուրիշները իրենց ընդունած շնորհքներուն միջոցովը աւելի խոնարհեցան . որչափ որ Աստուած բարձրացուց անոնք , այնքան ալ իրենք անոր առջին ինքրդինքնին խոնարհեցուցին : Յակոր՝ Աստուծմէ առատ բարիքներ ընդունած ատենը այսպէս ըրաւ : « Այ Յակոր ըսաւ , արժանի չեմ ան ամէն ողորմութիւններուն և ամէն հաւատարմութեանը , որ դուն քու ծառայիչ ցուցուցիր , ինչու որ իմ դաւազանովս անցայ աս Յորդանանէն , և հիմա երկու խումբի տէր եղայ » : Ծանոթ . ԼԻ . 10 : « Ասև Գաւիթ այսպէս ըրաւ , երբոր Աստուած խոստացաւ որ անոր տուն մը շինէ՝ և շմբժէ անիկա ինտոր որ Աւուզը մերժեց , ինքը Տէրոջը առջին գնաց ու ըսաւ . « Ավ Տէր Ահովայ , ես ո՞վ եմ , ու իմ տունս ի՞նչ է , որ զիս մինչև հոս բերիր » : Ի թւագ . է . 18 : Խորայէլացիք Քանանու առաջին պատուղները Տէրոջը բերած ատեննին այսպէս

կ'ըսէին «Իմ հայրս տուն տեղ չունեցող Եստ-
րի մըն էր», և այլն : Աթէ ուրիշները Եստուած
կը բարձրացընեն ան իրենք բարձրացընելուն
համար, և ես Եստուածս անարգելով ինքզինքս
աւելի կը մեծարեմ՝ որքան որ ինքը զիս կը
բարձրացընէ . ո՛հ ի՞նչ չար վարմունք մըն է աս :

2 . Ուրիշները իրենց ամէն երջանկութեանց
փառքը ազատապէս Եստուծոյ տալով ան ամէն
վայելչութիւններուն համար որ կը վայելեն ո՛չ
թէ ինքզինքնին, այլ Եստուած կը մեծարեն :
Դաւիթ այսպէս կ'ըսէ, «Թող քու անունդ յա-
ւիտեան մեծ ճանչցուի, ու քու ծառայիդ Դա-
ւիթին տունը քու առջևդ հաստատ մնայ» : Թ
ԹԻՄՈՒՅ . Է . 26 : Ինքը միայն իր մտիթարութեանը
համար շնորհաց վրայ թռչելով անոնց անու-
շութիւնները չձեռնար . այլ սաստիկ եռանդով
հոգ կը տանի վայելած ամէն շնորհքներովը Ես-
տուած փառաւորելու : Ե, յսպէս ըսաւ նաև երբ-
որ Եստուած ազատեց ինքը իր թշնամեացը ձեռ-
քէն, «Տէրը իմ զօրութիւնս ու իմ Սաղմոսս է
ու իմ փրկութիւնս եղաւ» : ՍՊՈՒՆ . ՃԺՐ . 14 :
«Ախնի սուրբերը պսակը իրենց գլուխը չէին
զներ ինտոր որ ես իմ ունայնութեամբս կ'ընեմ :

3 . Եստուծոյ շնորհքները ուրիշներուն ա-
նանկ են որ հոգիներնին իրենց շնորհաց Եստու-
ծոյն սիրոյն մէջ կը հալեցընեն : Ըննա որդի մը
ունենալու շնորհք գտած ատենը՝ «Իմ հոգիս
Տէրոջմով կ'ուրախանայ», ըսաւ (չէ թէ ողոր-
մութեամբ այլ ողորմութեան Տէրոջմով) Թ

Թա՛ռ . թ . 1 : *Ասե սուրբ Առյան ալ ըսաւ՝ թո՛ղ իմ անձս մեծցընէ Տէրը և իմ հոգիս ուրախացաւ իմ Փրկիչ Լստուծոյս վրայ : Առ . ն . 46 : Ըս խօսքերուն իմաստը կը ցուցընէ թէ անոնց սիրտերը զէպ 'ի Լստուած շատ ընդարձակ ու լայն էին :

4 . Լստուծոյ շնորհքները՝ ուրիշները մեզքէ ազատ պահելու համար մեծ սանձեր եղած են : «Թէպէտե դուն ո՛վ Լստուած մեր՝ մեզ չպատճեցիր մեր մեղացը շափ , հապա մեզի այսպէս փրկու թիւն տուիր , պէտք էր որ նորէն քու պատուիրանքներդ զանց ընէինք : Առ . թ . 13 : Աղջամիտ հոգիները կ'զգան իրենց վրայ եղած սիրոյ և շնորհքի պարտաւորութեանց զօրութիւնը :

5 . Լստուծոյ շնորհքները՝ մարդոց պարտաւորութեանցը անխնկուն ձեթի պէս և զած են , որ աւելի յարմարցընեն զանոնք Լստուծոյ ծառայելու : Երգ՝ եթէ իմ սրտիս վրայ հակառակ կերպով կը դործեն , անոնց ինծի սիրով չզալնուն վախնալու ինչ պատճառ ունիմ : Ար և իցէ բարեմիտ անձանց հոգիներուն՝ բուսկան պատճառ է զարհուրանաց երբոր կը տեսնենք թէ՛ Լստուծոյ շնորհքները ուրիշներուն վրայ ինչ անոյշ արդիւնքներ յառաջ բերած են , քանի որ իրենց վրայ զառն են :

Ը . Քրիստոսն էի մը կեանքին մէջ սովորականէն աւելի սրտի զգուշաւոր պահպանութիւն պահանջող Առնորդ Ժամանակ անյաջողութեան

ժամանակն է : Արբոր նախախնամութիւնը Հեող
խստութեամբ վարուելով քու արտաքին միտ-
թարութիւններդ կ'ոչնչացնէ . նայէ քու սրտիդ
վրայ ամէն զգուշութիւնով և անիկա Մտուծոյ
դէմ քրթմնջելէն կամ անոր ձեռքին տակը բա-
նելէն պահէ : Ասն զի նեղութիւնները թէ և
սրբացուցուած ըլլան . տակաւին նեղութիւն են :
Յովնան բարի մարդ մըն էր և սակայն նեղութեան
մէջ իր սիրտը սրբան վհատեցաւ : Յոր համբը-
րութեան օրինակ մըն էր . սակայն որչափ աւ-
րուեցաւ անոր սիրտը նեղութիւնով : Վիտեմ
որ քեզի դժուար պիտի երևնայ . սաստիկ նե-
ղութեանց մէջ խաղաղ սիրտ մը ստանալը :
Ասն զի ան աղմուկներն ու խռովութիւնները
որ նեղութիւնները կը պատճառեն մինչև ան-
գամ ամենալու սիրտերուն մէջ շատ սաստիկ
են : Աստի քրիստոնեայ մը նեղութեան ժա-
մանակ Բնչպէս իր սիրտը պահելու է՝ որ ան ալ
Մտուծոյ ձեռքին տակը չլքանի ու շուտահա-
տի . ու թէ ասանկ վիճակի մը մէջ սիրտը պա-
հելու համար Բնչ զանազան օգնութիւններ
պէտք են : Հիմա անոնք յառաջ պիտի բերեմ
և ցուցնեմ :

ն . Մտուած այսպիսի ձախող նախախնա-
մութեամբ իր ժողովրդին հոգիներուն վրայ իր
ընտրող սիրոյն ան մեծ նպատակը յառաջ կը
տանի , և ամէն նեղութիւնները կը կարգադրէ
իր բն սրբացուցուած միջոցներ ան միակ վախճա-
նին : Նեղութիւնները ոչ թէ զիպուածով այլ

խորհրդով կու գան, և սատուածային խորհրդով անոնք կը կարգադրուին՝ քրիստոնեաներուն իրրե շատ հոգևոր բարութիւններու միջոցներ. «Մտով քաւութիւն պիտի ըլլայ Յակորին անօրէնութեանը» և այլն : Ասայ . ի՛ն . 9 : «Իայց անկիա մեր օգուտին համար» , Ե՛ Ե՛՛ 10 : «Մէն բաները գործակից կ'ըլլան բարիին» , Ե՛ 20 : «Աղութիւնները Մտուծոյ գործաւորներն են մեր սրտերուն վրայէն բոլոր գոռոզութիւններն ու մարմնաւոր ապահովութիւնները կործանելու համար և այսպէս ըլլալովնին անոնց բնութիւնը փոխուելով օրհնութեան և մեր օգտին կը դառնան : «Մզէկ եղաւ ինձի՝ որ վշտացայ» կ'ըսէ Վաւիթ : Սող . ճժիթ . 71 : Արեմն դուն ստուգիւ պատճառ մը շունիս Մտուծմէ տրտունջ ընելու , բայց յաւէտ զարմանալու ևս որ ինքը քու բարութեանդ այնքան հոգ կը տանի , որ այսպիսի միջոցներ կը գործածէ քեզ անոր հասցընելու համար : Պօղոս առաքեալ մեռելներուն յարութեանը որ և իցէ միջոցով մը հասնելու կարողանալու համար կ'ուզէր զՄտուած օրհնել : Յակորոս կ'ըսէ «Ա՛ղբայրներ , բոլորովին ուրախութեան արժանի բան սեպեցէք , երբոր կերպ կերպ փորձութիւններու մէջ կ'իյնաք» : Ե՛ . 2 : Մտուծոյ ամէն ըրածները իմ հոգւոյս մէկ փառաւոր ու յաւիտենական վախճանին կը նային , և ինչ տրտունջ որ ընեմ , անոր նպատակներուն տղէտ ըլլալովս է : Ինքը Պեարոսին ըսա-

Տը հիմա քեզի ալ կ'ըսէ . «Աս ինչ որ կ'ընեմ՝
 դուն հիմա շես իմանար , հասցա ետքը պիտի ի-
 մանաս : Յովն . Ժ 4 . 7 :

Թ . Թեպէտ Ըստուած շատ անգամ կը նեղէ
 իր ժողովուրդը , սակայն իր սիրալիր բարերա-
 բութիւնը երբէք անսնցմէ չբաժնուելու համար
 ալ շատ հաստատուն խոստմունքներ բրած է :
 Ո՛հ , ինչ անուշ խօսք է աս : «Աս անոր հայր
 պիտի ըլլամ , ու անիկա ինձի որդի պիտի ըլլայ .
 Թէ որ անիկա անիրաւութիւն ընէ , ես զանիկա
 մարդոց զաւազանովք ու մարդոց որդիներուն
 հարուածներովք պիտի պատժեմ . բայց իմ ո-
 զորութիւնս անկէ պիտի չվերցընեմ» : Թ Թ 14 .
 15 : Ո՛վ իմ ամբարտաւան սիրտս , քանի որ
 Ըստուած ծառը քեզի տուած է իր ամէն միտ-
 թարական պառզներովք , միթէ աղէկ կ'ընես
 երբոր կը տրանջաս անոր՝ հովն քանի մը տե-
 բեներ թափելու թոյլտուութիւն ընելուն հա-
 մար : Վրիտանեաները երկու տեսակ բարու-
 թիւններ կը վայելեն . մէկը անխախտ ու յաւի-
 տենահան . և միւսը անստոյգ կամ անցաւոր :
 Այժմ Ըստուած առաջինը ապահով բրած է
 ինձի երբէք թող չնեղեմ իմ սիրտս վերջինը
 կորսընցընելու համար , ան ասէն պատճառ ու-
 նիմ իյնալու՝ երբոր իր սէրը կամ ուխտը ինձմէ
 կտրելու ըլլայ . բայց այսպիսի բան մը բնաւ
 չպիտի ընէ :

Գ . Սիրտը նեղութեանց մէջ ընկղմէն պա-
 հելու համար մեծ օգուտ ունի յիշելը՝ թէ ան ա-

մէն նեղութիւնները կարգադրողը բուն մեր
 Հայրն է : Ընանց անոր թոյլտուութեանը ոչ
 մէկ արարած մը կարող է ձեռքը կամ լեզուն
 քեզի դէմ շարժել : Ինչէ և զաւթը դառն ըլլայ ,
 սակայն անիկա ան զաւթն է , որ Հայրը տուա-
 քեզի . և կրնան կասկածիլ որ անոր մէջ թոյն ըլ-
 լայ : Մի յիմար , բանը քու վրայ զատէ . կրնան
 զաւթիդ փնասակար բան մը տալ : Այն . ինչպէս
 որ անձդ շես ուզիր փնասել՝ անանկ ալ որդիդ :
 « Սուտի եթէ դուք՝ որ շար էք , ձեր զաւթնե-
 բուն աղէկ բնձաներ տալ զիտէք , որչափ աւելի
 ձեր Հայրը » . Եւ : Մատթ . Է . 11 : Իբրև սիրոյ՝
 գթութեան՝ և շնորհաց Ըստուած , և իբրև Հայր
 խնամող և բարեկամ , դէպ ՚ի քեզի ունեցած
 յարաբերութիւնը բաւական ապահովութիւն է .
 եթէ ինքը բնաւ բան մը բսած ալ չըլլար , տա-
 կաւ ինչ Երեմիայի բերանովը բսած խօսքը ունինք .
 « Ես ձեզ չպիտի փնասեմ » : Ին . 6 : Իսկ իբրև
 այնքան սիրելի և , որ չկրնար փնասել քեզ . իբ-
 նագատակներուն վրայօք քու ունեցած տարօրի-
 նակ երկրայութենէդ աւելի իբրև մեծ նեղութիւն
 տուող բան մը չկայ : Արդոր խիստ հաւատա-
 բիմ և փափկասիրտ բժիշկ մը՝ իբ հիւանդին ա-
 մէն պարագաները գիտնալով , անոր կենացը ա-
 ոողջութեան համար շատ գերազանց զեղ մը
 պատրաստած՝ լսելու ըլլայ որ հիւանդը կ'աղա-
 զակէ թէ « Ը՛հ , իս կը մեռցընէ , իս կը թունա-
 ւորէ » , իբրև ցաւ տալուն պատճառաւ . ասիկա
 որչափ ցաւ պիտի տայ բժիշկին :

7 . Ետուած առաւել հոգ կը տանի քեզի քու
 նուաստ վիճակիդ մէջ . իր սէրը՝ շնորհքը՝ ու
 գթութիւնը առաւել կը յայտնէ նեղութեան
 ժամանակ քան թէ յաջողութեան ժամանակ .
 ուստի պէտք է որ նուաստ վիճակի մը մէջ ըլ-
 լալուդ համար այնքան շատ նեղուիս : Ինքը
 ինչպէս որ բարձր վիճակի մէջ ըլլալուդ համար
 չէ որ քեզ ընտրեց , անանկ ալ նուաստ վիճակի
 մէջ ըլլալուդ համար չէ որ կը մերժէ : Արբոր
 նախախնամութիւնը քու վիճակդ ձախորդու-
 թեան կը դարձնէ , քու վիճակդ փոխուելուն
 համար կրնան մարդիկ զժկամակութեամբ վրայ
 նայիլ , բարեկամներդ կրնան հեռանալ վախնա-
 լով որ անոնց նեղութիւն մը պիտի ըլլաս . բայց
 Ետուած ալ այսպէս պիտի ընէ : Ո՛չ , ո՛չ : « Ինա-
 քեզ պիտի շնորհուի , ու բնաւ քեզ երեսէ պիտի
 չձգեմ » ըսաւ ինքը : ԱԾԴ . ԺԿ . 5 : Թնէ որ
 ձախորդութիւնը ու աղքատութիւնը կարող ըլ-
 լային Ետուածոյ հետ ունեցած մերձաւորու-
 թենէլ քեզի զատելու , ատիկա արգարե ող-
 բալի վիճակ մը կ'ըլլար , բայց չեն կրնար . և
 դուն այնքան ազատութեամբ կրնաս անոր եր-
 թալ որքան որ առաջ : Ինեղճ Գաւթթը ա-
 մէն աշխարհային մտիթարութիւններէ մերկա-
 ցած ատենը կրնար ինքզինքը իր Տէր Ետուած-
 մով մտիթարել . և դուն ի՞նչու պիտի չկրնաս :
 Գիցուք թէ ընտանիքդ կամ զուակդ ծովի մէջ
 ունեցածնին կորսընցընելով հին հանգերձներ
 հազած քեզի գան . կրնաս անոնց զէպ'ի քեզ

ունեցած յարարերութիւննին ուրանալ կամ մերժել զանոնք : Այթէ դուն չես կրնար , որ չափ ևս առաւել Մտաուած : Աւրեմն ինչո՞ւ այսպէս կը խոսովես : Թե՛ և վիճակդ փոխուի՝ բայց քու երկնաւոր Հօրդ սէրը պիտի չփոխուի :

Ե . Թե՛ որ արտաքին մտիթարութեանց կորուստովը Մտաուած կը պաշտպանէ քու հօգիդ փորձութեանց կործանիչ զօրութենէն , ալ ի՞նչ բան կ'ուզես : Աւտի յիրաւի շատ քիչ պատճառ ունիս այսպիսի ցաւաղին խորհուրդներով սիրտդ խոսովելու . չէ՞ որ աշխարհային վայելչութիւնները փորձութեանց ժամանակ մարդոց յաղթուելուն պատճառ կ'ըլլան : Արչափ շատերը ուրացան զՔրիստոս ասանկ բաներ սիրելնուն համար : Պատանին արամութիւնով բաժնուեցաւ Քրիստոսէն . վասն զի ինքը շատ ստացուածք ունէր : Այթէ Մտաուծոյ նպատակը աս է , ասոր համար իրեն զէմ արտունջ ընելը որչափ մեծ ապերախտութիւն է : Արտեսներ որ նաւաստիները ալէկոծութեան հանդիպած ժամանակնին , իրենց կեանքը պաշտպանելու համար նաւին մէջ եղած մինչև անգամ շատ ծանրազին բաները ծովը կը թափեն : Վիտներ ալ որ պաշարեալ քաղաքի մը մէջի զօրքերուն շատ օգտակար է պարիսպէն դուրս գանուած մինչև անգամ հոյակապ շէնքերն ալ կործանելը , որ չըլլայ թէ թշնամին անոնց մէջ ապաստանի . և աս բանը իմաստութեամբ ընելնուն մէկն ալ չտարակուսիր : Ընտեք՝ որոնց որ մէկ անգամը

ապականուած է՝ չէ թէ միայն շնորհակալութեամբ զանիկա վերարուծին առջին կը զնեն որ կտրէ : Հապա վարձք մըն ալ կը հատուցանեն : Արեմն Եստուծոյ գէժ արտունջ ընկնուեա : փոթորիկի տակն քեզ ընկղմեցընող բանք դուրս ձգելուն՝ փորձութեան մէջ թշնամիից օգնող չէնքը կործանելուն՝ և յաւիտենական կեանքի վտանգի մէջ ձգող ապականեալ անգամի քենէ կարելուն ու նեակելուն համար : Ավանդոյ ու ապերախտ մարդ . ասոնք՝ որոնց համար դուն կը արամիս , ան բաները չեն որոնք հազարաւոր անմահ հոգիներ կործանեցին :

Չ . Արտիդ մեծ միսթարութիւն պիտի ըլլայ ձախորդութեան ժամանակ խորհելը թէ Եստուած իր այսպիսի խոնարհեցուցիչ նախախնամութիւններովը կրնայ ան բանք կատարելու վրայ ըլլալ , որուն համար դուն շատ աղօթք բրած ու սպասած ես : Պիտի վշտանան ասոր համար : Ավ քրիստոնեայ , Եստուծոյ առջին աղօթք բրած չեն շատ անգամ որ ինքը քեզ մեղքէ պահէ , արարածոց ունայնութիւնը քեզի իմացունէ , սրտիդ ցանկութիւնները մեռցընէ , ու շնորհէ որ միայն Վրիստոսով հանդիստ գանաս ու չէ թէ ուրիշ բանով մը : Եհա՛ այսպիսի խոնարհեցուցիչ և աղքատացուցիչ հարուածներով Եստուած կրնայ քու փափաքներդ լեցընել : Կուզես մեղքէ ազատ մնալ , ահա՛ անիկա քու ճամբադ ցանկով պատեց : Կուզես արարածոց ունայնութիւնը գիտնալ , ահա՛ անիկա

քու նեղութիւնդ ցուցընող պայծառ հայելի մըն է , վասն զի արարածոց ունայնութիւնք ճշմարտապէս չենք կրնար տեսնել ուրիշ կերպով՝ բայց միայն մեր փորձառութիւնովը : Ա՛ռ զհէս որ ապականութիւններդ մաքրուին . մի միայն ճամբան զանոնք սնուցանող կերակուրներէն հեռանայն է : Ա՛ռ զհէս որ սիրտդ Մատուցա՞ զատ որ ե իցէ տեղ մը հանդիսա չգանէ , ս՛հ , ուրիշ աւելի յարմար ի՞նչ ընթացք կրնար բռնել նախախնամութիւնք քու փափաքդ լեցընելու , բայց միայն զլիսուդ տակէն աշխարհային զուարճութեանց ան կահուդ բարձր վերցընել , որուն վրայ առաջ պատկեր էիր : Այս տակաւին ասոր համար խոսովելով ինչպէս քու Հօրդ համբերութիւնք կը փորձես , ս՛վ ապերախտ օրդի : Այժմէ աղօթքներուդ պատասխանը ուշացընէ , ինդիրքներս չկատարուիր կ'ըսես . եթէ յուսացածէդ տարրեր կերպով աղօթքիդ ճիշտ պատասխանը տալու ըլլայ , ասոր համար ալ իրեն զէմ արաունջ կ'ընես թէ պատասխանելուն տեղը ամէն յոյսերդ ու նպատակներդ խափանեց : Եսանկ ընելդ աղէկ է : Բաւական չէ՞ որ Եստուած իր շնորհքովը քու փափաքներդ լեցընէ . ինչո՞ւ այդքան անզգամութեամբ կը յուսաս որ քու ուզած կերպովդ լեցընէ :

է . Արնաս սրտիդ մէջ քաջալերութիւն մը ստանալ նկատելով որ ասանկ նեղութիւններու միջոցով Եստուած քու հոգւոյդ սրբախութիւն տուող զօրձ մը կը կատարէ՝ եթէ ան նեղու-

Թիւններուն նպատակը տեսնալու կարողանաս :
 Մտուած իր նպատակները ինչ մասնաւոր նա-
 խախնամութեամբ կատարելուն վրայօր մենք
 շատ սղէա ենք . ուստի նախախնամութեան՝ մեզ
 դժուարութիւններով պատած անապատներու
 մէջ տանելուն համար . Վարայէլացոց անապա-
 տին մէջ բրածնուն պէս շատ անգամ արտունջ
 կ'ընենք . քանի որ կրնայ ըլլալ թէ մեզ ալ ա-
 նոնց պէս ուղիղ ճամբով նոյն ատենը ա-
 պահոյութեան երկիրը հասցընելու վրայ է :
 Թէ որ կրնաս քու փրկութեանդ համար Մտ-
 տուծոյ իր զազանի խորհուրդովք բրած ամէն
 կարգադրութիւնները տեսնել . մինչև անգամ
 ամենափոքր միջոցներու ու պարագաներու մէջ .
 և թէ որ կրնաս իմանալ Մտուածային անօրէ-
 նութեանց մէջ եղած զարմանալի ներդաշնա-
 կութիւնը . անոնց մէկգլխու ունեցած փոխա-
 զարձ յարարերութեան ու զէպ'ի ան վերջին
 վախճանին միարանութեամբ ծառայող ընդհա-
 նուր հայեցումքնուն հետ մէկտեղ . ու թէ որ
 զուն քու ընտրութիւնդ ընելու ազատ թողուե-
 լու որ ըլլաս . երբէր պիտի շնորհես աշխարհի
 մէջ եղածէդ ուրիշ վիճակ մը : Արովհետեւ Մտ-
 տուած ամէն բան իր կամքին խորհուրդովք կ'ընէ .
 ուստի 'ի հարկէ աս ըլլալու է քու փրկութեանդ
 համար կարգադրած ամենայարմար եղանակը :
 Մհա Մտուած իր բարի նախախնամութեամբ
 ամէն միջոց կը գործածէ՝ բոլոր հպարտ ու աշ-
 խարհային սիրտերը խանարհեցընելու և իրեն

Հնազանդեցընելու համար : Այս թէ որ մէկը միայն սս տեսնայ , ալ քաջալերական խօսք զրուցելու տեղ չմնար ինձի :

Ը . Հաս ոգտակար պիտի բլլայ սրտիդ հաստատութեանը՝ զիտելը թէ՛ զժգոհութիւնովդ ու խռովելովդ քու անձիդ աւելի մնաս պիտի հասնի քան թէ նեղութիւններէդ : Գժգոհութեանդ պատճառաւն է՝ որ նեղութիւններդ աւելի կը սաստկանան , դուն ես քու բեռերդ ծանրացընողը , անոնց տակը հոգիդ ձնչելով ու վշտացընելով : Թէ որ հեղութեամբ Աստուծոյ ձեռքին տակը խոնարհիս , վիճակդ եղածէն շատ աւելի զիւրին պիտի բլլայ : « Հիւանդին անհամբերութիւնը բժիշկը կը խտացընէ » : Աս բանը աւելի կը վշտացընէ Աստուած՝ ինչպէս որ կամակոր որդի մը իր հայրը , որն որ անոր խրատին ահանջ չկատեր : Ասկէց ՚ի զատ սս բանը հոգին իր նեղութեանցը համար ազօթք ընելու կամ անոնց միջոցովը Աստուծոյ պարզեկութարիքները ընդունելու անյարմար կ'ընէ : Անգութիւնը զեզահատ մըն է , որ եթէ համբերութեամբ ու հանդարտ Հնազանդութիւնով տարուելու բլլայ , զիւրութեամբ կրնայ ուսուիլ . բայց զժգոհութիւնը ծամելով անիկա՝ հոգին կը զառնացընէ : Ան մտիթարութիւնը՝ որ քեզի պիտի մնասէ , Աստուած մէկդի կ'առնէ . և պէտք չէ որ դուն ալ անոր ետեւն խաղաղութիւնդ կորսընցընես , ինքը քեզ մեզքէ ազատելու համար քու հանգերձներուդ նեւ մը կը նեւէ առանց

Հոգիդ փնասելու զիտաւորութեան , և պէտք չէ որ յուսահատութեամբ և զժգոհութեամբ սիրտը ծակելու համար խորունկ մտնո անիկա :

Թ . Ի՞նչ որ սիրտդ (Հոարելին սրտին նման) տակաւին ասոնցմով ալ չմխիթարուիր , աս բանն ալ բրէ . բազդատէ ներկայ Հաւնած վիճակդ ուրիշներուն ան թշուառ վիճակին հետ՝ որուն դուն ալ արժանի ես իրաւամբ : Այլ ի՞մ հոգիս՝ բռէ , որչափ երջանիկ է քու վիճակդ զժոխքին անշիջանելի բոցերուն մէջ պապակող անհամար հոգիներուն ան սոսկալի վիճակէն . միթէ քու վիճակդ անոնց վիճակին նման է . թէ որ կարելի ըլլար ան հազարաւոր հոգիներուն իրենց վիճակներն քու վիճակիդ հետ փոխել , ի՞նչ պիտի չտային արգեօք : Հեղինակին մէկը կը պատմէ թէ Գազզիոյ Գոնա նահանգին Գուքսը իր ասատաձեւնու թեամբը ինքզինքը կամովին աղքատիկ վիճակի մը մէջ խոնարհեցուցած ըլլալով , երբոր Գտալացի ազնուական մը անոր վրայ զխալով 'ի կարեկցութենէ շարժեալ ուզեց որ մարդասիրութիւն մը ցուցնէ , բարեսիրտ Գուքսը պատասխանեց ան ազնուականին թէ՛ . « Տէր իմ , մի վշտանար և մի կարծեր որ ես շքաւորութեանս պատճառաւ կը նեղուիմ . վասն զի ես իմ առջեւ կարապետ մը խրկած եմ ինձի օթեան պատրաստելու ու հոն փառաւոր ընդունելութիւն գտնելու համար » : Ազնուականը անոր կարապետն ո՛վ ըլլալը հարցուցած ատենը , պատասխանեց թէ՛ . « Իմ կարապետս ինքզինքիս վրայ

ունեցած գիտութիւնս ու մեղքերուս համար յա-
ւիտենական տանջանաց արժանի ըլլալս ճանչ-
նալս է, և երբոր աս գիտութիւնով սթեանս
հասնելու ըլլամ, անիկա օրչափ անպատրաստ
ալ գտնեմ, ինձի կ'երևնայ որ արժանի եղածէս
չատ աւելի պատուական պիտի գտնեմ" : Ըհա-
ասանկով սիրար կրնայ ձախորդութեանց մէջ
յուսահատութենէ ու զժգոհութենէ ազատ պա-
հուիլ :

Գ. Արտերնուս պահպանութեանը աւելի զգու-
շաւոր հսկողութիւն պահանջող Աբրորդ Ժամ-
նակը Սիօնին նեղութիւններու մէջ եղած ժա-
մանակն է : Աբրոր կկեղեցին՝ ան նախն նման՝
որուն մէջ Քրիստոս և իր աշակերտները նստած
էին, հալածանաց ահագին ալեաց տակը ընկզմե-
լու ու կործանելու վրայ է, ան ատեն բարի քրիս-
տոնեաներն ալ պատրաստ են իրենց վախերնուն
տակը նաւարկելու : Ճշմարիտ է որ շատերը
ան պարագային մէջ առաւել մտրակի կարտս
են քան թէ սանձի, սակայն կան ոմանք ալ՝ որ
կկեղեցին նեղութիւնները երբոր կ'զգան, յու-
սահատեալ կր'նստին ու կր'նային : Հեղե՛ երբոր
լսեց թէ տապանակը թշնամեաց ձեռքն անցած
էր, անմիջապէս ինկաւ ու մոռաւ : Ալեմի երբ-
որ տանինն բոլոր վայելչութիւններն ու հաճու-
թիւնները վայելելով կը զուարճանար, Աբու-
սահէմի վրայօք ցաւագին լուր մը առնելուն՝ ան-
միջապէս իր զէմքը փոխեց : Բայց թէ և Ըստ-
ուած իր կկեղեցին վրայ միշտ կը խրկէ այս-

պիսի նեղութեանց երկիւղ մը անիկա արթըն-
ցընելու համար, և յիրաւի ասանկ օրերու մէջ
կը կանչէ իր ժողովուրդը լալով ու ողբալով և
քուրձ հագնելով ապաշխարելու և կը պատժէ
չարերն ալ՝ որ չեն զգաստանար, սակայն իրեն
հաճելի չէ քեզի Աղիային նման տեսնալ՝ որն որ
գիհի ծառին տակը վհատեալ հողւով մը նըս-
տած իր մահը կը փնտռէր՝ ըսելով, «Ալ բա-
ւական է, ո՞վ Տէր Մտուած, իմ հոգիս ա՛ն» :
Պիօնի մէջ կրնաս և պարտաւոր ևս սգաւոր ըլ-
լալ, բայց գիտցիր՝ որ անձնաչարչար ըլլալու
չես, կրնաս Մտուծոյ բողոքել, բայց գիտցիր,
որ չես կրնար Մտուծոյ վրայօր բողոք ընել
թէ և լոկ գործքով ալ ըլլայ :

Երգ՝ քննէք թէ երկիւղած սիրտերը մինչև
անգամ Պիօնին դառն նեղութիւններուն տակը
հարստահարուած ատեննին ինչպէ՞ս կրնան զօ-
րութիւն գտնալ և հաստատուիլ : Նշմարիտ է
թէ Պիօնը իր գլխաւոր ու բախութիւնը սեպոյ
հոգիի մը անձնար է որ անոր նեղութեան ծա-
մանակը խորին տրամութիւն չզգայ կամ չու-
նենայ, սակայն աս տրամութեանը հետ պէտք է
որ քանի մը սրտին հաստատութիւն տուող խը-
րատներ ալ առնէ :

՛ա. Ես մեծ ճշմարտութիւնք քու սրտիդ մէջ
թող խորին տպաւորութի՛ թէ բնաւ նեղութիւն
չպատահիր Պիօնին, եթէ ոչ իր Մտուծոյն
թոյլտուութեամբը, և Մտուած բնաւ քանի մը
թոյլտուութիւն չընէր, միայն թէ ան բանէն իր

Ժողովուրդին ինքը վերջապէս շատ բարիք յա-
 աջ բերէ : Ինչպէս Եստուծոյ կամացը հրա-
 մաններու, անանկ ալ անոր թոյլտուութիւննե-
 րուն վրայ խորհրդածութիւն ընելէն կրնանք
 մոտեցարութիւն հանել : «Թող տուէք զանիկա,
 որ անիծէ, քանզի Տէրը ըսաւ անոր» : Ի Թոմ. 4 .
 Ժ 4 . 11 : Տէրն մեր ըսաւ՝ «Իուն իմ վրաս մէկ
 իշխանութիւն մըն ալ չէիր ունենար, թէ որ
 քեզի վերէն տրուած չըլլար» : Յով. 5 . Ժ 11 :
 Շատ հանգարտութիւն է հոգիներնու՝ Միօնին
 նեղուիլը Եստուծոյ կամքովը ըլլալը գիտնալնիս .
 և թէ նեղութիւնները շատ օգուտ ունին անոր
 հոգեւոր շինութեանը : Յոր՝ Հեղի՝ Գաւիթ՝ և
 Ազնկիա ճիշտ աս խորհրդածութիւնով հան-
 դարտութիւն գտան : Աթէ ան նեղութիւնները
 Եստուծոյ կամքովը անոնց վրայ գալը բաւական
 էր իրենց սրտին հանգարտութեանը, մեզի ին-
 չն՝ այնպէս պիտի չըլլայ : Աթէ Տէրը գաշտի
 մը պէս պիտի հերկէ Միօնը, և անոր պանծալի
 քարերը ձգէ որ հոգին մէջ կենան, եթէ իր հա-
 ճութիւնովն է որ Վրիստոսի հակառակորդները
 տակաւին զօրացած՝ Բարձրեալ Եստուծոյ զա-
 ւակները նեղեն, եթէ ինքը կ'ուզէ որ նեղու-
 թեան՝ տառապանքի՝ և զօրութեանց Տէր Ես-
 տուծոյն գէմ հակառակութեան օր մը գայ և
 բազի ձորին վրայ, որ արդարները չարերէն
 հալածուին, մենք ս'վ ենք՝ որ Եստուծոյ հետ
 հակառակութիւն ընենք : Յիրաւի վայելուչ է
 որ մենք ինքզինքնիս ան սուրբ ու իմաստուն

կամքին յանձնենք, ուսկից որ յառաջ եկանք. և թէ ան որ ստեղծեց մեզի, իր հաւնածին պէս պիտի կարգադրէ վիճակնիս ալ. և ինքը կրնայ առանց մեր խորհուրդին մեզի աղէկ եղածը բնել: Աղորմելի մարդը իր Արարչին հետ դաշնադրութիւն բնելու չափ ինքզինքը բարձրացընելու է, կամ թէ Աստուած անոր հաշիւ տալու է իր բրած որ և իցէ գործքին համար: Այնքան պատճառ ունինք Աստուծոյ մեզի համար բնարած կացութեանը՝ և մեզ անոր մէջ գնելուն համար գոհ ըլլալու, որ չափ որ ունինք իր պահանջմունքներուն նազանդելու: Բայց թէ որ աս ձեռնարկութիւնը աւելի յառաջ տանելով դիտելու ըլլանք թէ Աստուածային բոլոր թոյլատուութիւնները վերջապէս իր ժողովուրդին օգտին կու գան կը միանան, աս գիտողութիւնը շատ աւելօր պիտի հանդարտեցնէ հօգիներնիս: Մի թէ թշնամիները ժողովուրդին մէջէն ամենէն զլիսուոր սեպուածները գերութեան կը տանին, ասիկա վշտացուցիչ նախախնամութիւն մը կ'երենայ, բայց Աստուած անոնք գերութեան կը խրկէ իրենց օգտին համար: Աստուած Ասորեստանի թագաւորը գաւազանի մը պէս ձեռքը կ'առնէ անով իր ժողովուրդը խրատելու համար: Անոր ասանկ բնելուն նպատակը ուրիշ բան չէ, այլ իր բոլոր գործքը «Միտն լեռանը վրայ» կատարել: Եսայ. Ժ. 12: Եթէ Աստուած մեզքին ամենամեծ շարութենէն կրնայ շատ բարիք յառաջ բերել, որ չափ ևս առաւել

աշխարհային նեղութիւններէ . և իր պայտէս բնելու կարող ըլլալէն յայտնի է՝ որ պայտէս պիտի ընէ : Ասան զի մինչև անգամ մէկ հասարակ գործակալի մը իմաստութեանը շինարար՝ որ և իցէ բանի մը թոյլտուութիւն ընէ իր մեծ նպատակին արդեւ ըլլալու . բանի որ եթէ ուզէ կրնայ խափանել . և կրնանք երևակայել որ ամենիմասան Նստուած ասանկ բան մը ընէ : Աստի երևելի մարդու մը իր բնկերին ասած քաջալերութիւնը ևս ալ քեզի կու տամ : «Թնոյ տուր անհուն իմաստութիւնը՝ գորութիւնը՝ ուսերը» . վասն զի բոլոր արարածները ասանցմով կը կառավարուին և եկեղեցւոյն յարաբերութեանը և շինութեանը կ'առաջնորդուին : Մեր գործքը աշխարհքը կառուարել չէ : այլ միայն Ֆազանդիլ անիկա ստեղծող Վարդին : Աստիսնամութեանը ամէն շարժմանքները իմաստութեամբ են . անոր անիւները աշօր լեցուն են . ուստի բաւական է . որ Միսնին գործքերը պայտիսի բարի ձեռքով մը կը կառավարուի :

Ի . Ապլէ սա սիրտը հաստատող ճշմարտութեանը թէ Միսնին նեղութիւնները որչափ շատ ալ ըլլան . անոր թաղաւորը իր մէջն է : Կնչ . Տէրը իր եկեղեցիները մոռցան . անոնք թրչնամիներուն ձեռքը յանձնեց . և անոնց պատահած շարիքները շղիտեր որ մեր սիրտերը կը յուսահատեցնեն : Քանի որ Նստուած մեր մէջն է . արարածներէն վախնալը և դողալը որչափ անխելութիւն է . և յիբաւի ասանկ ընելը

ուրիշ բան չէ : բայց միայն անզօր մարդիկը խիստ զօրացրնելով ամենամեծ Աստուածը նուստացրնել :

Ահեղեցւոյն թշնամիները շատ և զօրաւոր են , թող անանկ բլլայ . բայց տակաւին աս փաստը , որով Վաղէր և Յեսու սիրահրնին զօրացուցին , նոյնչափ զօրութիւն ունի չիմա՝ որչափ որ ան ժամանակի ունէր . թո՛ւր . ժ Գ . 9 . «Տէրը մեզի հետ է , անսնցմէ մի վախնար» : Պատմաբանին մէկը կ'ըսէ թէ , երբոր Անտիքոնոս կերպով մը լսեց թէ իր զօրքերը իրենց թշնամիները հաշուելով մէկզմէկ կը վճատեցրնէին , յանկարծ ինքը անսնց մէջ կայնելով ըսաւ թէ «Չխրանի՞ տեղ հաշուեցիր» : Այլ վճատեալ ողիներ , դուք քանի՞ մարդու տեղ հաշուեցիր Տէրը : Ինքը միայն բաւական չէ՞ իր ամէն թշնամիներուն յազթելու . անիկա ձեր մէջը եղած զօրաւորներէն աւելի ամենազօր չէ : «Թե՛ որ Աստուած մեր կողմն է , ո՞վ պիտի բլլայ մեզի հակառակ» : Հո՛ւս . ք . 31 : Գեղէտնին ան մեծ քննութիւնը բնելուն պատճառը ի՞նչ կը կարծէր : Գառ . է : Ինքը Աստուծո՞ւ նշան մը կ'ուզէ , և անկէց ետքը մէյմըն ալ կ'ուզէ , և ի՞նչ էր աս ամենուն նպատակը , միայն կ'ուզէր որ Աստուծոյ իր հետը բլլալուն վրայ ապահով բլլալով կարող բլլար իր գրօշակին վրայ աս զեղեցիկ առածը գրելու . «Տէրոջը ու Գեղէտնին սուրբ» : Այսպէս եթէ դուն ալ կրնաս կատարելապէս վստահիլ թէ Տէրը իր ժողովուրդին

Հեռ է, անսով պէտք է քու ամեն վճատութիւններէզ քաջայերուիս, ե իր այսպէս բլլալուն համար պէտք չէ որ երկինքէն նշան մը ուզես՝ քանզի քու ասջեզ ունիս մէկ սրանշելի նշան մը, այսինքն՝ անսնց հրաշալի պաշտպանութիւնը իրենց բոլոր իշխամեացը մէջը : Ինչ որ Վատուած իր ժողովուրդին հետը շրլար, Ի նշակու եզու որ անսնց իշխամեները յանկարծ չկուեցին : Մի ինչ անսնք շարութեան, գորութեան և պատեհութեան կարսն էին : Ինչ որ այց անսնց վրայ մէկ անակասանելի ձեռք մը կար : Արեւմե անոր ներկայութիւնը ինչ մեզի հանգստութիւն բլլալը, ինչ որ լեռները ծովուն մէջ իշխան, ե երկինքը ու երկիրը մէկ տեղ խանսուին մի վախնար, քանզի Տէր Վատուած Արսնին մէջ է, Արսնը չպիտի շարժի :

Կ. Կիտէ ան մեծ սգուաները՝ որ Վատուծոյ ժողովուրդին ասջին կը կենան իրենց նեղեալ վիճակին մէջ, ինչ որ եկեղեցիին աշխարհիս մէջ նուաստ և նեղուած բլլալը իրար աղէկ կամ սգուասկար է իրեն, արեւմե քու վճատութիւնդ չէ ինչ միայն իրասացի չէ՝ այլ նաե տպերախտութիւն է : Հիրաւի եթէ եկեղեցւոյն երջանկութիւնը, անոր աշխարհային դիրութեանցը՝ շրեղութեանցը և յաջողութեանը մէջ եզած սեպելու բլլանը, ան ժամանակը այսպիսի նեղութիւնները իրեն ձախարչութիւն պիտի սեպենը : Կայց եթէ սեպելու բլլանը, ինչ անոր փառքը ինչ հուատքին խանարհութենէն և երկնաոր միտք

աւնենալէն յառաջ կու գայ : սասնց համար և
 սչ մէկ վեճակ մըն ալ պնշտօք սգաակար կրբ-
 նայ ըլլալ՝ բաց 'ի նեղեալ վեճակէ մը : Աշ-
 կեզեցիք թու՛նաւ սրտքները շէ թէ հայրածանր-
 ներն աւ բանաերն էին : պի աշխարհասիրութիւնն
 աւ փառասիրութիւնը : սչ ալ իրեն անգամեւե-
 բուն աշխարհային փառքերն էին իր սերմը : պի
 անոր մարտիրոսներուն արիւնն էր : Աստուած-
 պաշտութեան զօրութիւնը՝ ամենեկին պնրան
 զեզեցիկ չզարգանար : սրշտօք սր նեղութեանց
 մէջ : և երբէք պնրան շնուագեցաւ սրշտօք սր
 մեծ յաջողութեանց մէջ : «Աշրբօք սգորմէյի ա-
 վատացեալ ժողովրդի մը պէս մեանը : ան ժա-
 մանակը կր սորվենք Տէրօջր սնուանք յաւասար» :
 Արգարե աշխարհային աւնայնութեանց սրտ-
 զպլթներ յարող խնդութիւններէ : և սիրդ կա-
 պերէն բամուսիլը : սուրբերուն շուտով երկնից
 ճամբուն մէջ առաջ երթալու՝ բուն իրենց սրբ-
 աներնուն վրայսր աւելի պարզ գիտութիւններ
 ստանալու սգաակար և : առաւել ջերմեւանդու-
 թեանք՝ յաճախ և սրտանց ազնթեյ սորվելու : և
 յոյժ սաստիկ եռանդով ան եկող հանգստու-
 թեանք նայելու աւ սպասելու համար : թէ սր
 ասանք են իրենց սգաակար բաները՝ փորձատու-
 թեանք կր սորվենք թէ նեղութիւններով յեցուն
 վեճակի մը նման՝ բնաւ սրիչ մէկ վեճակ մը պն-
 պիսի արդիւնքներով սրջնում շէ : Արեմն ա-
 զէկ է՝ սր Հայրդ՝ բու սնտախ սրշնուանքներէզ
 կամ երեւակայութիւններէզ աւելի : հոգւղղ

դուար առաջ տանելու համար վշտանայ ու վհա-
տի . և քու երթալու կամք ունեցածէ՞լ աւելի
քեզ երկնից ճամբուն մտա բերելուն համար տա-
ռապի : Ա՛ն՝ որ հաճեցաւ քու բարբոս թիւնդ աշ-
խարհի մէջ գտնուած հազարաւոր մարդկանց հա-
մար ըրածէն աւելի հոգալու . այսինքն՝ նեղու-
թեանց դաւազանը չէ թէ անոնց , այլ քեզի եր-
կնցուց քու ճշմարիտ օգուտիդ նայելով . մի թէ
ըրածդ անոր ցուցուցած սա սիրոյն փոխարէն
արժան հատուցում է : Բայց աւա՛ղ՝ որ բանը
մեր զգայարանքներովը կը դատենք , և անոնք բա-
րի կամ չար կը սեպենք՝ միայն ներկայ ախոր-
ժակներնուս համեմատ :

Գ . Օգուշացիր՝ որ շքւայ թէ Աստուծոյ ժո-
ղովրդին կրած տառապանաց մէջ եղած ծանրա-
դին գթութիւնները անարգես . եթէ նեղու-
թիւններնուս մէջ թափած արցունքներնիս այն-
քան կուրացընելու ըլլան մեր աչքերը՝ որ մինչև
անգամ նոյն ատենը վայելած գթութիւններնիս
չտեսնանք , ի՞նչ մեծ ցաւալի բան մըն է ասի-
կա : Չեզի պարզեուած կեանքներնուդ վրայ չպի-
տի խօսիմ՝ ո՛չ ալ ան ամէն արատրին միիթա-
բութիւններնուդ՝ որ կը վայելէր մինչև անգամ
Վրիստոսի և իր հալածուած ծառաներուն վա-
յելածէն աւելի , որ անոնց արժանի չէր աշ-
խարհս : Ա՛բէր . Ժա . 38 : Բայց ի՞նչ կ'ըսէր՝
մեզաց թողութեան , Վրիստոսի հետ բաժին ու-
նենալնուդ , խօսամանը ուխտին , և քանի մը օ-
րէն կարը Աստուծոյ ներկայութեամբը ըլլալու

յաւիտենական երջանկութեանը : Ա՛հ . արդեօք
 սասնկ շնորհաց արժանացող ժողովուրդ մը՝ որ
 և իցէ աշխարհային փորձանաց մէջ պիտի վհա-
 տի . կամ մարդոց իրեն ունեցած զժամնութեա-
 նը , և այս ինչ շնչին բաներու կորուստին համար
 այնքան շատ պիտի խռովի : Այուք թէպէտ մե-
 ծամեծ մարդոց սէրն ու օգնութիւնը չէք վայել-
 լէք , բայց մեծին Աստուծոյ սէրը ու մարդա-
 սիրութիւնը կը վայելէք . թէպէտ դուք աշխար-
 հային բարիքներէ զուրկ էք , բայց Ա՛նոր հո-
 զեօր և յաւիտենական բարիքներովը շատ առա-
 տացած և հարուստ էք : Յիրաւի առաջուան
 պէս չէք կրնար այնքան առատութիւնով ապ-
 րիւ . բայց կրնար միշտ երկնային կեանք մը վա-
 բել . ուստի ձեր ստացուածքէն հրաժարելնուդ
 համար այսչափ վշտանալու էք . առ շնչին նե-
 զութեանցը պատճառաւ ձեր բնդունած ու վա-
 յելած մեծ ու երեւելի շնորհքները մոռնալու էք :
 Յիշեցէք որ եկեղեցւոյն ճշմարիտ հարստու-
 թիւնները բոլոր իր թշնամեաց բնելիք փնտէն
 ապահով են : Աստուած թէպէտ իր արտաքին
 նախախնամութիւնովը իրեններուն և ուրիշնե-
 րուն մէջտեղը խարութիւն չբնէր , և թէպէտ
 անոր գատաստանները անմեղք կ'ազատացնեն ,
 և շարը կը խնայեն , և թէպէտ Արեւը սիրոյ մէջ
 կ'սպաննուի , և Ապրիլն ատելութեան կամ թրշ-
 նամութեան մէջ կենդանի կը մնայ . արիւնարբու
 Վիոնէտիս մը իր անկողինին մէջ կը մեռնի , ու
 բարի Յովսիան պատերազմին մէջ կ'իյնայ , շա-

բերուն փոքր ծածկեալ զանձերով կը լնցուի . և սուրբերուն ակոսները խճային քարերով . սակայն և այնպէս ի՞նչ կայ վախճալու . ի՞նչու վշտանանք ու վհատինք . տակաւին շատ պատճառ կամ նիւթ կայ պարծանաց և զովու թեան . վասն զի ընտրող սէրը՝ սրտչած է սուրբերը , թէպէտ արտարին նախախնամութիւնը չէ սրտչած . և քանի որ յաջողութիւնները և անպատժութիւնը կ'սպաննեն շարք , բայց մինչև անգամ սատակիչն ու ձախորդութիւնը պիտի օգնեն ու ազատեն արգարք :

Ե . Վիտայի որ՝ ձախորդութեանց ալիքներուն տակը որչափ որ եկեղեցին ընկղմի , անշուշտ կրկին երեսը պիտի ելլայ : Մի վախճար , վասն զի ինչպէս որ Վրիտաոսի իր գերեզմանին վրայ եղած կնիքն ու հսկողութիւնը կործանելով իրեր սրէն յարութիւն ասնելը ստոյգ է , այնպէս ալ ստոյգ է որ Միսնը իր ամէն նեղութիւններէն պիտի յարութիւն անել , և պիտի բարձրացընէ քաջայայտ գլուխը իր բոլոր թշնամեացը վրայ : Ըն ժողովուրդը՝ որ իր կորուսաներովը կը մեծնայ և իր նուազելովը կը բազմապատկուի , պատճառ մը չկայ վախճալու թէ կը կործանի : Ընթան մի գրգռի եկեղեցին թաղելու , քանի որ զեռ մեռած չէ . սպասէ մինչև որ Վրիտաոս իր հանձարովը փորձ մը ընէ անոր վրայ՝ զուն անիկա կորսուած սեպելիզ առաջ : Մացառ կրնայ բոլորովին բոցի մը մէջ բլալ , բայց երբէք պիտի չայրի անոր մէջ բնակողին

բարի և օրհնեալ կամբօր :

Չ . Յիշէ առաջին դժուարութեանց մէջի Աստուծոյ իր ժողովուրդին վրայ ունեցած հոգն ու զթութիւնը . վասն զի հազար ութը հարիւր տարիէն աւելի է որ Վրիտանի կեկեղեցին նեղութիւններու ու դժուարութիւններու մէջ է , և զեռնեղութիւնները զազարած չեն . հալածանաց անհամար ալիքները կատաղութեամբ յարձակեցան անոր վրայ , սակայն ահա ընկզմած չէ . չար մարդիկ շատ Զարքներ բանեցուցին անոր դէմ , բայց մինչև հիմա անոնցմէ մէկն ալ չյաջողեցաւ : Աստուծոյ անգամը չէ՛ որ Համաններն ու Վրիտանիները անոր կործանմանը համար Զարքներ փնտռեցին , և Հերովդէս ձեռքը երկնցուց անիկա տանջելու , բայց ահա անիկա պաշտպանուած ու իր ամէն նեղութիւններէն ազատ և ապահով է : Միթէ կեկեղեցին առջի պէս սիրելի չէ՞ Աստուծոյ , և ինքը անիկա ազատելու համար առջի կարողութիւնը չունի : Թե՛ղէ՛ս մենք չենք զիտեր ազատութեան օրիկէց բլաւը , սակայն Տէրը զիտէ աստուածապաշտները փորձութենէ ազատելը :

Է . Թե՛ղէ՛ս որ վերոյիշեալ զիտողութիւններուն մէկէն ալ միթիթարութիւն չես կրնար հանել , ջանա՛ որ գոնէ քու նեղութիւններէդ հանես : Վրդարեւ աս նեղութիւնդ քու անկեղծութեանդ բարի վկայութիւն մըն է : Արեկեցութեան հիմը միութիւնն է . նաւին մէջ շատ ինչք չունեցողք՝ անոր վտանգի մէջ եղած ժամանակը չվախնար :

Ըսկէց 'ի զաս հոգիից աս զգացումէն աս քաջա-
լերութիւնը կրնաս ասնել որ՝ եթէ զուն պղ-
շափ կ'զգաս Սիօնին նեղութիւնները , հասցա-
նորան առաւել Յիսուս Քրիստոս կ'զգայ և
քեզմէ աւելի հոգ ունի անոր վրայ , և անոր հա-
մար սուգ ունեցողներուն վրայ ողորմութեան
կամ շնորհքի աչքով պիտի նայի :

Ի . Արտերնուս պահպանութեանը մեծ զգու-
շութիւն պահանջող Չորրորդ Ժամանակը . վե-
տանդի և ընդհանուր կամ հասարակաց խոսովու-
թեան Ժամանակն է : Ըյսպիսի Ժամանակներու
մէջ՝ ամենալուս. վիճակի մէջ եղող սիրտերն ան-
գամ , ծառայական վախով կը պաշարուին : Այժմ
Աշփրեմ Ըսորեստանի հետ զաշնագիր ըլլար ,
Դաւիթի տանը սիրտը սաստիկ հովերէ շարժուած
ծառերու նման ինչպէս պիտի դողար : Աբրոր
երկինքէն շարագուշակ նշաններ երևնան , կամ
նեղութեան պատճառաւ ազգերու վրայ աւե-
րուժ գալու ըլլայ , ծովը և ալիքները կատաղին ,
ան ատենը որչափ կը վհատին մարգոց սիրտերը
վախով՝ և երկրիս վրայ գալու բաները ակնն-
լով : Սինչև անգամ Պօղոս առարեալ երբեմն
կը գանգատէր զուրսէն վախեր ու ներսէն ալ
Կատերազմներ ըլլալուն համար : ք Աորն . է . 5 :

Բայց եղբայրներս , պէտք չէ որ ասոնք ասանկ
ըլլայ . քրիստոնեաները շատ վսեմ հոգիներու
ակը ըլլալու են . Դաւիթ իր սրտին բարի վի-
ճակի մէջ եղած Ժամանակը ասանկ էր : Ա՛ կ'ը-
սէր . Տէրը իմ լոյսս ու իմ փրկութիւնս է , ևս

սնակից պիտի վախճամ. Տեքք իմ կեանքիս ա-
 պաւննն է : Ես սնակից պիտի գողամ : Ի՛նչ . 1 :
 Թնոյ միայն մեզաց ճառայողները երկիրի գե-
 րութիւն կրեն՝ ու միայն անոնք վախճան շա-
 րէն՝ որոնք զուարճութիւն կ'ըզան շարութեան
 մէջ : Ընթանք՝ որ Մատուած իրրեւ պատուհաս
 շարերուն սրտին վրայ բերելու կ'սպասանայ . ար-
 զարներուն երբեք ներգործութիւն մը թող չը-
 նէ : Ըն սպասամք ժողովողին ըստ թէ՛ . «Աշ-
 ձեզմէ ողջ մնացողներուն սրտին՝ զողում պիտի
 բերեմ իրենց թշնամեացը երկիրներուն մէջ . ու
 հովնն քչուած տերեւին ձայնը պիտի հալածէ զա-
 նոնք» : Վճար . ից . 36 : Կնչ ողորմելի հոգի-
 ներու տէր մարդիկ են անոնք՝ որ տերեւներու
 շարժումն պիտի փախչին : Տերեւին ձայնը չէ
 թէ ահարկու : այլ հաճելի ձայն մըն է . Ե յի-
 բաւի բնական երամշտութիւն մը կրնանք ըսել .
 բայց յանցաւոր խղճի մը՝ տերեւներուն թեթեւ
 ձայնը անգամ թմբուկներ ու փողեր են : «Աս-
 կայն Մատուած մեզի երկշտութեան հոգի շը-
 տուաւ . հասպա գորութեան ու սիրոյ ու զգաստու-
 թեան» : Ի Տէ՛ն . ն . 7 : Օգասա միտքը կը նշա-
 նակէ առողջ կամ յանցանքով չվերաւորուած
 խիղճ . որով մարդ առիւծի պէս համարձակ կ'ըլ-
 լայ : Վիտեմ որ սուրբի մը համար աներկիւղ է
 շէնք կրնար ըսել . (ինչպէս որ Մատուած Վիտե-
 թանին համար ըսաւ .) ամէն մարդու մէջ կայ
 մէկ բնական վախ մը . որուն բոլորովին վերնաջ
 անկարելի է : Վախը մտաց խոսովութիւնն է՝

որ վասնդին մօտենայր խմանալէն կ'ելլէ . և որ-
բան ժամանակ որ կրնայ վասնդը մեզի մօտենալ ,
խոսովութիւն մը պիտի գանուի մէջերնիս : Իմ
միտքս Ստոյիկեան անդգայութիւն մը ունենալ
ըսել չէ . ոչ ալ այսպիսի պահպանողական վախէ
մը խոտորեցընել ձեզ , որ կրնայ արթուի նկատել
ձեզ նեղութեան , ու սղտակար ընել հողիներ-
նուդ : Խոհական վախ մը կայ՝ որն որ կը բանայ
աչքերնիս վասնդները առաջուց տեսնալու . ու
նակ մեզի կը զօրացընէ զանոնք արդիւելու հա-
մար խոհեմ և օրինաւոր միջոցներ գործածելու .
այսպէս էր Հնար նահապետին վախն ու խոհե-
մութիւնը , երբոր իր բարկացեալ Ասու եզրօրը
պիտի պատահէր : Բայց ես ձեզ կը համոզեմ
անվատահաւատեան վախէն սիրտերնիդ պահելու .
ան բռնաւորական կիրքէն՝ որ վասնդի ժամա-
նակ մարդու ստրակն վրայ յարձակելով կը բաժ-
նէ՝ կը տկարացընէ՝ ու անյարմար կ'ընէ իր
պարտաւորութիւնները կատարելու . ապօրի-
նաւոր միջոցներու ձեռք զարնել կուտայ մար-
դուս , և անով որոգայթ մը կը լարէ անոր :

Ըրգ՝ բնենք թէ քրիստոնեայ մը մեծ և սոս-
կալի վասնդներու մէջ Ինչպէս կրնայ իր սիրտը
պահել ան յարձակող ու խոսովիչ երկիւղէն :
Երբոր մերձակայ վասնդները մեզի երկիւղի մէջ
կը ձգեն , առ մեղսալից վախէն սիրտը պահելու
համար զանազան գերազանց կանոններ կան :

Ի . Այլ որ բոլոր արարածները Ասու ծոյ
ձեռքն են , որ կը կարգադրէ անոնք ամէն շարժ-

մանրնեքու մէջ՝ սանձելով, զսպելով և իր հաւ-
նածին պէս անոնք որոշելով: Եւ մեծ ճշմար-
տութիւնը հաւատարով աղէկ թող հաստատուի
սրտիդ մէջ, որ քեզի ամէն ծառայական վախե-
րուց յազմել կուտայ: Աշգեկիւնի առաջին
գլխուն մէջ նախախնամութեան մէկ սրանչելի
նկարագրութիւնը կայ. հոն կը տեսնես կենդա-
նինք՝ որոնք անխնեքը կը շարժեն Քրիստո-
սի գալով, որ արժասին վրայ նստած է՝ անկէջ
նոր հրաման ընդունելու համար: Յայտ. Գ.
գլխոյն մէջ ճերմակ սև ու կարմիր ձիեր ստո-
րագրուած է. որոնք միայն Եւստուծոյ գործիք-
ներն են, որ աշխարհիս մէջի իր գառաստաննե-
րուն գործադրութեանը համար կը գործածէ,
ինչպէս պատերազմներ՝ ժանախաններ և մահեր:
Արբոր աշխարհիս մէջ սա ձիերը վեր ու վար
կոխելով կը վազեն, մեր սիրտերը հանգստա-
ցնող գիտողութիւնը հաս է՝ որ անոնց սան-
ձը Եւստուծոյ ձեռքն է: Չար մարդիկ ելլեմն
ձիերու նմանեցուցուած են, որոնք Եւստուծոյ
ժողովուրդը սարերնուն տակը կոխել կ'ու-
զեն. բայց նախախնամութեան սանձը անոնց
բերնին մէջն է: Եւ ձակ թողուած առիւծի մը
պատահիլը շատ սարսափելի բան է. բայց պահա-
պանի ձեռք եզող առիւծէ մը սով կը վախնայ:

Բ. Յիշէ թէ սա Եւստուածը՝ որուն ձեռքն են
բոլոր արարածները, բու հայրդ է. և բու վրայ
մեծ խնամք կը տանի, որչափ որ գուն ինք-
նին կրնայիր ունենալ: Եւ անգի ան որ ձեզի կը

զպշի , իմ աչքիս բիրին կը զպշի" : Օգոստ . ք . 8 :
 Խիստ վախկոտ կնկան մը կը հարցընեմ , թէ
 տեսնալու ըլլայ արիւնարբու շարագործի մը
 թուր քաշէր , և տեսնալու ըլլայ որ նոյն թուրը
 բուն իր սիրելի էրիկն ալ կը քաշէ , արդեօք մեծ
 տարբերութիւն մը չկայ աս երկու տեսարաննե-
 բուն մէջ : Ինչպէս որ՝ արարածոց վրայ զգաց-
 ման մէկ աչքով նայելուն , և հաւատքի աչքով՝
 անոնց վրայ , իրրև Կստուծոյ ձեռքին տակը նա-
 յելուն մէջ տեղը՝ մեծ տարբերութիւն մը կայ :
 Ասայ . ծի . 5 համարը շատ յարմար է հոս յիշել :
 «Քու երկից քու Ստեղծիչդ է՝ անոր անունը
 Ահովայ Սարաւովթ է" : Ինքը ամէն արա-
 բածոց Տէրն է : Ա՛յ պիտի վախնայ բանա-
 կի մը մէջէն անցնելու՝ եթէ ան բանակին հրա-
 մանատարը իր բարեկամը կամ հոյրը ըլլայ ,
 թէ և ամէն զօրքերն ալ իրենց սուրն ու հրա-
 ցանը դէպ 'ի անոր ուղղին : Բարեպաշտ պա-
 տանի մը՝ ծովային ճամբորդութեան մէջ շատ
 ուրիշ ճամբորդներու հետ մէկտեղ մեծ փոթո-
 ըրիկի մը հանդիպելով , երբոր իր ամէն ընկերները
 կիսամուս մնացեր էին վախերնուն՝ ինքը շատ
 զուարթուն կ'երևար ան վտանգէն քիչ նեղու-
 թիւն զգացածի պէս . անոնցմէ մէկը անոր զուար-
 թութեան պատճառը հարցուցած ատենը ը-
 սաւ թէ՝ «Ա՛հ զուարթ եմ , վասն զի նախն
 նաւուղիդը հոյրս է" : Ասի զիտէ զՔրիստոս՝
 իրրև թագաւոր և գերագոյն Տէր նախախնա-
 մական թագաւորութեան , և յետոյ իրրև մեզի

գլուխ՝ երկի՝ և բարեկամ՝ ան ասկներ շուտով
 պիտի ըսես, «Մի իմ անձս դարձիր քու հան-
 գրատու թեանդ»։ Սող. ճժղ. 7 : Ըս ճշմարտու-
 թիւնը պիտի գողցեցընէ զքեզ դողալէն. և վո-
 տանգի մէջ պիտի երգել տայ քեզի թէ «Տէրը
 բուրձնեղբի վրայ թաղաւոր Ըստուած է, երգ
 երգեցէք անոր»։ Սող. ին. 7 : Ըս յիներն՝ ամէն
 մէկը որ իր սրտին նորոգութեանը, և մեր Ըօրը
 բուրձն արարածոց վրայ հաստատած իշխանու-
 թեան վարդապետութեանը ծանօթ է, թող գո-
 հու թեան երգ նուագէ ։

Գ. Ըս բանին վրայօք Քրիստոսի մասնաւոր
 պատուէրները աղէկ տպաւորէ քու սրտիդ մէջ
 և քու սիրտդ շատ վախի մէջ թող ըլլայ ան պա-
 տուէրները շաւրհու համար : Ինքը շխնայ
 հրամայեց մզի ըսելով «Երբոր լսէք պատե-
 րազմեք և խոսովութիւններ՝ մի վախնար»։ Ղ-
 իւ. 9 : Եւ մէկ բանով մըն ալ մի զարհուրիք հա-
 կառակորդներէն. Փիլիպ. Կ. 28 : Մատթ. Ժ. 28.
 Փրկիչն մեր երեք անգամ կը պատուիրէ այսպէս
 ըսելով «Մարդոցմէ մի վախնար» : Մարդու մը
 ձայնը քեզ կը գողացընէ. և Ըստուծոյ ձայնը
 չ՛գողացընէր : Եթէ գուն այսպիտի երկչոտ բը-
 նութիւն մը ունիս. ի՞նչպէս կ'ըլլայ որ Հիսուս
 Քրիստոսի հրամանին անհնազանդ դանուելէդ չես
 վախնար : Ինծի այսպէս կը թուի թէ՛ Քրիստոսի
 պատուէրը առաւել շատ զօրութիւն պիտի ու-
 նենայ հանգարակեցընելու, քան թէ՛ ողորմելի
 որդւոյ մը ձայնը քու սիրտդ գողացընելու : «Ես

եմ , եւ եմ , որ ձեզ կը միտնարեմ . զուհն ս՛վ ես որ
 մահնանայու մարդէն ու խոտի նմանելու մար-
 գու զուտակէն կը վախնաս . ե քեզ Ասեղծող ու
 երկրին հիմը գնող Տէրը՝ քու Արարիչը կը մտ-
 նաս՝ կ'ըսէ ինքը . Առաջ . ծն . 12 . 13 : Չենք
 կրնար մեզանչելով վախնալ արարածներէ . ա-
 սանց Աստուած մտնալու . եթէ յիշելու ըլ-
 լանք Աստուծոյ Ի՞նչ ըլլալը . ու անոր Ի՞նչ ըսե-
 լը . պայտիտի տկար հոգիներու . տէր պիտի չըլ-
 լանք : Արեւմտեան վառնորի մէջ եղած մամանակդ
 ա խորհրդածութիւնները ըրէ : Ի՞նչ որ մար-
 գոց ծառայական վախը իմ սրտիս մէջ մտնալու
 թողում . ես կը պարտաւորիմ Աստուծոյ յար-
 գական երկիւղը անկէց զուրս հանել . ուստի հա-
 մարձակելն եմ մարդու մը սրդողելու համար՝
 Ամենակարողին վախը մեկդի ձգել . ամբարտա-
 ւան փոշին ամենամեծ Աստուծոյ վեր բարձրա-
 ցընելն եմ . ե անստոյգ վառնորէ մը փախչելու
 համար յայտնի մեղքի մէջ խնայելն եմ . ահա
 ան խորհրդածութիւնով . պահէ քու սիրտդ :

Գ . Յիշէ թէ ունայն վախերդ սրբան աւելորդ
 նեղութիւններ բերած են քու վրայ արդէն : «Ա-
 բունաւորին սրամտութենէն միշտ ամէն որ կը
 վախնաս . իբր թէ քեզ կորսնցընելու պատրաս-
 տուած է . բայց հիմա սէր է բունաւորին սրամը-
 տութիւնը» : Առաջ . ծն . 13 : Կերեւար թէ ինքը
 կորսնցընելու պատրաստ էր . սակայն զուհն ա-
 հա կորսուած չես սահալուին : «Վու վրայ վախ-
 նալու խորհուրդներ չհանգրպցուցի . զուհն պա-

բայ անգը քու շունչը սպասեցիր՝ հողից խան-
 գարեցիր՝ և ձեռքերդ ակարացուցիր . թէ որ ու-
 զես , կրնաս ասանց ամենքն ալ ունենալ խաղա-
 զու թիւնով և համբերութեամբ քու հողից ըս-
 տանալով : Այս աս բանին մէջ՝ ես միայն սա-
 տանալին մէկ շատ խորին ճարտարութիւնը կրը-
 նամ անանալ , այսպիսի ունայն վախերով հողիին
 գէժ՝ իր մէկ նպատակը ՚ի գործ գնելու : Աս-
 խախտանութեան անոնք պատրանք սեպելուն նա-
 յիւրով , ես ալ ունայն կը կոչեմ . բայց ստուգիւ-
 ունայն չեն , ինչպէս որ ան վախճանն ալ՝ որուն
 հասնելու համար ստատանան կ'աշխատի , ունայն
 չէ . վասն զի աս բանին մէջ անանկ կը գործէ ,
 ինչպէս որ ամբողջ մը պաշարող զօրքերը կ'ը-
 նեն . որոնք պաշարուածներուն շարունակ հսկո-
 զութիւն ընել տալով ձանձրացընելու , և ասան-
 կով իրենց կատաղութեամբը անոնց վրայ յար-
 ձակած տաննին՝ անոնց գէժ՝ գնելու անշար-
 մար ընելու համար , ամեն գիշեր սուտ աղա-
 զակներով կ'արթնանցընեն անոնք . որ թէպէս
 այս օշինչ բան մը կ'երեւոյ , սակայն թշնամիին
 վերջի նպատակին մեծապէս կ'օգնէ : Ա՛հ . սա-
 տանալին ճարտարութիւններէն դուն երբ պիտի
 զգուշանաս :

Ե . Այլև ինքնէ որ թէ և ան բաները իրօք կը
 պատասխին ըսելով կը վախնաս , բայց աւելի վա-
 խից մէջ շարիր կոյ՝ քան թէ վախցած բանե-
 բուց . և չէ թէ միայն մեզքին ամենափոքր շա-
 բութիւնը՝ նեղութեան ամենամեծ շարութենէն

գեղ է : այլ ան մեզսուլնց ժախը առաւել նեղու-
 թիւն կու տայ քեզի՝ քան թէ ան վե՛հահը : որուն
 մէջ այնքան կը ժախնուա : Այսիք՝ թէ բազմա-
 պատկիչ է թէ ասնոջիչ կիրք զը բնաւով նե-
 զու թեանք՝ եղանկն մնն երկոյթ զը կու տայ . և
 այսպէս առաւել սաստիկ կը գողացընէ հոգին
 քան թէ նեղութիւնը ինքնին : Եւանկ եղաւ Կա-
 րայիւղացուց Ասորիք ծովուն մէջէն անցնելու ժա-
 մանակնին . անոնք ազազակեցին : և ժախցան :
 մինչև որ քայլիքն զըն մէջ առին . ու այնու-
 հետեւ ան զքերուն մէջէն շամբայ զը բացուեցաւ
 անոնց ապահովութեամբ անցնելու : որ քիչ զը
 առաջ կը խորհէին թէ պիտի ընկղմէին : Մենք
 ալ այսպէս կ'ընենք . մարմնաւոր երկիւղի գա-
 ւաճին մէջէն՝ նեղութեան զքերուն զբայ նայե-
 լով կը պոռանք թէ . « Ե՛հա՛ Յորդանանու ան-
 անցանելի ալիքները : որոնց մէջ մենք պիտի կոր-
 սուինք » : Բայց երբոր իրօքան հասանքներուն մէջ
 անզո գալու բնամբ . բարի խոստում զը եղած
 կը գաննենք թէ . « Եստուած փրկուելու շամբայ
 զը պիտի բանայ » : Եւանկ եղաւ որ Զեալ մար-
 տիրոսի զը . երբոր ինքը փորձ զը ընել ուղելով
 իր մասը ճրագին բռնեց . և չկրնալով համբերել
 անոր . ազազակեց թէ . « Ի՛նչ . պիտի չկրնամ
 մէկ մասիս այրելուն համբերել : Արեմե՛ ինչպէն
 պիտի կարենամ վաղը համբերել կամ դիմանալ .
 երբոր բոլոր մարմինս այրի » : Սակայն հետեւալ
 օրը շատ զուարթութեամբ գնաց ինքը ան ահա-
 գին բոցերուն մէջ . հետեւալ Եստուած ային պատ-

գամը իր բերանը ունենալով թէ՛ «Մի վախ-
նար, վասն զի ես քեզ փրկեցի • քեզ քու անու-
նովդ կանչեցի • դուն խփես ես • երբոր ջուրե-
րէն անցնիս, ես քեզի հետ պիտի ըլլամ • ու երբ-
որ գետերէն անցնիս, քեզ պիտի շնորհես • երբոր
կրակին մէջէն անցնիս, քեզ պիտի շայրէ • և
բոցը քեզ պիտի չբռնկեցնէ» : Առաջ • խնդ • 1, 2 :
Չ • Քննե՛ն ան շատ խոսամուկքները՝ որ ամէն
վասնդիդ մէջ քեզի միտիմարութեան ու անձդ
բռնելու համար գրուած են : Աստիք են քու
սպաստանարաններդ՝ որոնց գիմելով կրնաս ա-
պահով ըլլալ երբոր գիշերուան ժամանակ վը-
տանդի նետերը վրայ կը թափին, և կէս օ-
րուան մէջ հարուածները քեզ կը վհատեցը-
նեն : Մասնաւոր պարագաներու և կարօտու-
թեանց յարմար յատուկ խոսամուկքներ ալ
կան • նաև ամէն պարագայի ու վիճակի յարմար
ընդհանուր խոսամուկքներ ալ կան • ինչպէս •
Հովի • Ը • 28 : «Վէն բաները բարիի գործակից
կ'ըլլան անոնց որ Աստուած կը սիրեն» : Սող •
Ը • 12 : «Թե՛ և մեզուորը հարիւր անգամ շա-
բութիւն ընէ ու անոր կեանքը երկնայայտ, այ-
սու ամենայնիս սողոյդ գիտեմ որ բարութիւնը
Աստուծոյ վախոցողներուն պիտի ըլլայ» : Միայն
հետևապէս ու խոսամուկքները քու սիրադ պիտի
զմայլեցընեն : Միայն պահանջէ զանոնք (Հա-
կոթին ըրածին պէս • («Գուն ըսիր թէ անշուշտ
քեզի բարիք պիտի ընեմ» Ե՛ • Ծանոյ • լք • 12.)
անոնք ամէն խոսմութեանց մէջ քեզ պիտի քա-
ջալերեն :

է . Հանդարտեցնուր խոսովեալ սիրտդ Եսաու-
 ծոյ հաւատարմութեանն ու խնամածութեանը
 վրայսք քու ունեցած անցեալ փորձառութիւն-
 ներդ յիշելով ու քննելով՝ որոնք ան խոսովու-
 թիւններուդ մէջ ունեցար : Եւս փորձառու-
 թիւնները անապատի մը մէջ իբրև քու հողւոյդ
 կերակուրներն են : Գաւիթ և Պօղոս՝ վասնզի
 ժամանակ ասոնցմով պահեցին իրենց սիրտերնին :
 Արբոր մարդ մը քրիստոնեայի մը իմացուց թէ՝
 իր թշնամիները որոգայթ լարած են ճամբուն
 վրայ իր կեանքը վերցընելու համար , այսպէս
 պատասխանեց ինքը . «Թե որ Եսաուած ինծի
 համար հոգ չտանէր , ես ինչպէս մինչև հիմա
 պիտի ազատէի» : Հին փորձառութիւններով
 կրնաք Եսաուի մէջ խնդրել նոր փորձառութիւն-
 ներ ունենալ . վասն զի Եսաուի մէջ նոր ա-
 զառութիւն խնդրելը , նոր թողութեան հա-
 մար բրած խնդիրներնուս պէս է : Միտք առ թէ
 ինչպէս ազ բանին համար Վովսէս կը խնդրէ
 Եսաուի մէջ . ինքը կ'ըսէ . «Կ'ազաչեմ քու մեծ ու-
 ղորմութեանդ , որ ներես աս ժողովուրդին մեզ-
 քը , ինչպէս որ ներեցիր աս ժողովուրդին Աշ-
 քիպատուն մինչև հոս» : Ինքը մարգոց բրածին
 պէս չըսէր թէ՝ «Տէր աս առաջին յանցանքն է .
 դուն առաջ անսնց թողութիւնը ցուցընելու
 համար չես նեղանար» : Բայց կ'ըսէ թէ «Տէր ,
 որովհետև շատ անգամ ներեր ես անսնց , կ'ա-
 զաչեմ անգամ մըն ալ ներէ» : Եւսպէս ալ նոր
 դժուարութեանց ատենը , քրիստոնեաները թող

ըսեն թէ՛ Տէր, զսէն շատ անգամ լսեցիր՝ օգնեցիր՝ և ազատեցիր աւճի տարիներուն մէջ. ուստի հիմա կրկին օգնէ, վասն զի քու քովդ առատ փրկութիւն կայ. նաև քու բազուկդ կարճըցած չէ՛ :

ը. Քու պարտաւորութեանդ ճամբուն մէջ բլլալուդ՝ աղէկ ապահովութիւն ունեցիր. և ան վտանգի ժամանակները՝ սուրբ քաջութիւն մը պիտի պատճառէ : «Վճ ձեզի շարիք մը պիտի հասցընէ, թէ որ զուք բարիին հետեող բլլաք» : Թ. Պ. 13 : Կամ թէ որ մէկը համարձակի ձեզ շարշարելու, «Կրնաք համարձակութեամբ ինքզինքնիդ Մատուծոյ յանձնել բարիք դործելով» : Գ. 19 : Խիստ բարեպաշտ մարդու մը հոգին աներկիւզ պահողը՝ աս դիտողութիւնն էր որ ըսաւ թէ, «Մատուծոյ դասին համար միշտ համարձակ եմ. և յաւիտեան համարձակ պիտի բլլամ» : Բարի դատ մը՝ մարդուս հոգին կրնայ հաստատուն կամ անշարժ պահել : Արկշտ քրիստոնեաները՝ հեթանոսի մը խօսքը լսելով թող ամչնան. երբոր Ահապասիանոս կայսրը Տըրաման բրաւ Քլուիտոս Բրիտիոսին՝ (որ ծերակոյտին մէկ անդամն էր,) թէ ժողովքի չգայ. կամ թէ որ գալու բլլայ ալ, իր կամքին դէմ բան մը չխօսի : Քլուիտոս աս վսեմ պատասխանը տուաւ. «Աս խորհրդական բլլալովս պէտք է որ հոն գանուիմ. ուստի հոն գանուելովս՝ եթէ հարկադրիմ խօսել, պարտաւոր եմ ազատութեամբ խղճիս վկայութեանը պէս խօսիլ» : Արբ-

որ կայսրը վախցուց թէ պիտի մեռցընեմ զքեզ • Քլուխոսս կրկին պատասխանեց • «Աչս անմահ եմ ըսի քեզի , ինչ որ կ'ուզես ըրէ • և ես ալ ինչ որ պարտաւոր եմ ընել , ան կ'ընեմ • դուն զօրութիւն ունիս զիս անիրաւութեամբ մեռցընելու , և ես ալ զօրութիւն ունիմ քաջութիւնով մեռնելու » : Արդարութիւնը զրահ մըն է • թող միայն անոնք զողան , որոնց վտանգը չնազանդութեան ճամբայէն դուրս է :

Թ • Չանք ըրէ , որ խիղճդ մաքրուի Քրիստոսի արիւնովը ամէն մեղքերէն • և ան պիտի աներկիւղ պահէ քու սիրտդ : Խղճին վրայի մեղքն է՝ որ մեր հոգիները կը կարծրացընէ ու երկչոտ կ'ընէ • արդարները առիւծի նման համարձակ են : Այլէն իր խղճին մէջի յանցանաց ստիպումովն է՝ որ աղաղակեց թէ «Ո՛վ որ իս դանայ , պիտի մեռցընէ » : Յանցաւոր խիղճ մը՝ երեակայական վտանգներով աւելի կը սարսափի , քան թէ մաքուր խիղճ մը իրական վտանգներով : Յանցաւոր մեղաւոր մը՝ բուն իր կուրծքին վրայ կը կրէ իրեն գէմ եղած վկայութիւնը • յանցանքն էր Հերովդէսին աղաղակել առողջ թէ «Յովհաննէս միրտիչ մեռելներէն յարութիւն առած է » : Այսպիսի խղճմտանքը սատանային սայլն է՝ որուն վրայ ինքը կը շինէ ամէն ան սուրբին ու նիզակները , որոնցմով յանցաւոր մեղաւորը կը խայթէ ինքզինքը : Յանցանքին վտանգի հետ ունեցած յարաբերութիւնը՝ ճիշտ վառօդին կրակի հետ ունեցած յա-

բարեբուծեանը նման է : Մարդ մը թէ որ հետը կրակ չունի , չվախնար վառօդի տակառներուն քովէն անցնելու :

Ժ . Այսօրէ քու հոգիդ մեծ խռովութեանց առան սուրբ ապաւինութիւն ունենալու . քեզի գործ բրէ կեանքովդ և ամէն մտխոյզութիւններովդ Մատուցոյ ապաւինիլ : Եսանկ կ'ըսէ՝ Իսաւրիթ . «Այսօր օրս քեզի պիտի յուսամ» . այսինքն՝ Տէր , որ և իցէ ժամանակ եթէ փոթորիկ մը ելլայ , ես քու թեւերուդ հովանաւորութեանը ասկը պիտի պաշտպանուիմ : Հաւատքի և ապաւինութեան գործքերով Մատուցոյ դիմէ . և անոր քեզ ապահով ընելուն երբէք մի տարակուսիր : «Հաստատ մտքը՝ կատարեալ խաղաղութեան մէջ կը պահես . ինչու որ քեզի կը յուսայ» կ'ըսէ Ասայի մարգարէն . ից . 3 : Եստուած կը հաճի ձեզի՝ երբոր այսպէս ըսելով կուգար իրեն . «Հայր , իմ կեանքս՝ ազատութիւնս՝ և ստացուածքս վտանգի մէջ ինկած է . ու ես չեմ կրնար պահպանել զանոնք . ո՛հ . ես քու ձեռքդ կը յանձնեմ» : «Եզրատը քեզի կը յանձնէ ինքզինքը . և իբ Մատուածը անիկա կը թողնուի» : Այլ . «Իսկ ես որբերուն օգնականը» . այսինքն՝ դուն զրկեալին օգնականն ես . որ քեզնէ ՚ի զատ ուրիշ մէկը չունի որ անոր երթայ . այլ դուն ես իբ Մատուածը : Մաղձոսերդուին աս խօսքը շատ մտխոյզական խօսք մըն է . Մաղ . ճԺԹ . 7 : «Ինչ լուրէն չվախնար . անոր սիրտը հաստատ է . ու Տէրոջը կը յուսայ» .

չբռնէր թէ անոր ականջն շար լուրեր լսելէն պիտի պաշտպանուի . կարելի է որ ուրիշ մարդոց պէս շար լուրեր լսէ : բայց իր սիրտը ան լուրերուն երկիւղէն պիտի պահպանուի . քանզի հաստատուած է :

Ժն . Քրիստոսնէութեան պատուոյն վրայօր առաւել խորհէ . քան թէ քու անձնական ապահովութեանդ վրայօր : Արդեօք քրիստոսնէութեան պատիւ է՞ որ քրիստոսնեաները ամէն մէկ ձայն աննելնուն՝ նստաստակի պէս վախնան ու խոսովին : Այս բանը աշխարհք պիտի չգրգռէ խորհելու թէ՛ (քու խօսքերդ ինչ կերպով որ բլլան ,) տակաւին քու սկզբունքներդ ուրիշ մարդոց սկզբունքներէն ազլկ չեն : Խորհէ թէ ինչ ծանր փեսա կրնան ընել աշխարհքին առջևը քու վախերդ : Ինչ զեղեցիկ է՝ Ալեմփային խօսքը . զ . 11 . «Միթէ ինձի պէս մարդը կը փախչի՞» . և ո՛վ կայ ինձի պէս՝ որ աաճարը մանկ ապրելու համար . չեմ մանար» : Ազլկ չէ՞ր բլլար քեզի՞ որ մեանէիր . ու քու օրինակովդ աշխարհք Քրիստոսէ չգայթակղէր : Այսն զի՞ աւանդ . որ ինչպէս պատրաստ է աշխարհք (որ առաւել քու գործառնութեանցդ մէջ տեսածներէն կը դատէ բանը՝ քան թէ քու սկզբունքներէդ սորվածներէն ,) քու երկչոտութենէդ մակարերելութէ՞ որչափ շատ որ փառաւորես հաւատքը , և խօսիս ապահովութեան վրայօր , տակաւին չես համարձակիր ուրիշներէն առաւել ան բաներուն ապաւինելու՝ երբոր բանը փորձին կու գայ : ՄՏ . ԸԲԼ-

լոյլ թէ քու վախերդ կոյր աշխարհքին առջևը պայտօսի դոյլթակդու թիւն մը գնեն :

Տի . Ըն որ իր սիրաբ ապահով բնել կ'ուզէ վախէ՝ պարտաւոր է առաջ իր հոգւոյն յաւիտենական սգուար ապահով բնել Յիսուս Քրիստոսի ձեռքին մէջ , և ասանկով կրնայ ըսել աշխարհի թէ՛ ձեռքէդ եկած ամենամեծ գեշութիւնը , որ կրնաս բնել՝ բրէ : Արբոր անգամ մը քու ծանրադին հոգւոյդ յաւիտենական ապահովութիւնը ձեռք ձգես , ան ասենք շնչին մարմնի վրայդ շատ հոգ չպիտի տանիս : Փրկիչն մեր բնու . « Ի վախնար անոնցմէ՝ որ մարմնը կը սպաննեն , ու անկէ ետե աւելի բան մը բնելու կարողութիւն չունին » : Պր . 4 : ՏՐԶմարտապէս ապահով քրիստոնեան՝ իր թշնամեաց բրած ամեն արհամարհութիւններուն վրայ կը խնդայ և կ'ըսէ , ան է բրած գեշութիւնիդ : Ընչ կ'ըսես ո՞վ քրիստոնեայ : Վստահ ես՝ որ քու հոգիդ ապահով է . վստահ ես՝ որ երբոր մեանիս , Քրիստոս յաւիտենական բնակարանի մը մէջ պիտի ընդունի հոգիդ . թէ որ աս բանիս ապահով և վստահ ես , երբեք ինքզինքդ մի նեղեր մահուանդ գործիքին կամ միջոցին վրայդ :

Տի . Սարկէ Ըստուծոյ յարգական վախովը՝ ամեն ծառայական երկիւղները ջնջել : Քրիստոնեական իմաստութեան մէկ զօրութիւնն է , հոգիին առաւել ուժգին կիրքերը՝ հոգեւոր ջրանցքներու մէջ դարձրնելը . բնական բարկութիւնը՝

Հոգի որ նախանձու . և բնական ուրախութիւնը՝
 սուրբ զուարթութեան . նաև բնական վախն ալ
 Մատուածային սուրբ երկիւղի ու ակնածութեան
 զարձրեկը : Առաջ . ը . 12 . 13 : Այս կերպը
 մարդարէն ալ ստորադրած է : Արտէ թէ՛ . «Միայն
 զորաց Տէրը փառաւորեցէք . Անիկա բլույ ձեր
 վախը և զարհուրանքը» : Բնական վախը՝ բնա-
 կան պատճառով կամ պարագային փոխուելովը
 քիչ մը ատեն կրնայ զազրիլ . բայց անիկա՝ ան
 ատենը փշելով մարուած ճրագի մը նման է , որ
 կրկին փշելով կրնայ զիւրութեամբ վառիլ . սա-
 կայն եթէ այն Մատուծոյ երկիւղովը շիջանելու
 բլույ , ան ատեն ջուրի մէջ մարուած ճրագին
 նման այլ ևս զիւրութեամբ չվառի :

ԺԳ . Թնափէ աղօթքով Մատուծոյ առջին ան
 վախերը , որոնք սատանան և զու անհաստու-
 թիւնդ վտանգի ժամանակ վրայ բերին : Ար-
 կիւղը մեր սրտէն արտարուելու ամենալաւ միջոցը
 աղօթքն է . որ քրիստոնեան է ան , որ ստորա-
 սանկ բլուայուն չվկայեր : Վեղի առ բանին զի-
 ջանելու քաջալերութիւն տալու համար , Յիսու-
 սի Վրիտասի ամենամեծ օրինակը պիտի տամ :
 Արբոր իր վտանգի և մահուան ժամերը մտե-
 ցան , ինքը աշակերաներէն բաժնուելով պար-
 աւելզը գնաց և հոն Մատուծոյ հետ շատ սաստիկ
 ըմբշամարտեցաւ աղօթքով ան բանին համար՝
 որ Առաքելալը կը յիշէ . ԱԵԶ . Ե . 7 . «Ար իր
 մարմինն օրերը սաստիկ զոչումով ու արցուն-
 քով աղօթք և աղաչանք մատուց անոր՝ որ կա-

բող էր զինքը մահուանէ ազատելու, ու լսուեցաւ՝ իր երկիւղէն ազատելով՝ : Ար լսուէր ան վտանգին մէջէն անցնելու զօրութիւն և հաստատութիւն առնելով, թէ և չէ թէ անկէց ազատելու կամ ան դատարար իրմէ հեռացընելու կողմանէ . ո՛հ, երանի թէ ասոնք մարդ մնան, և համոզուելիք աս շար սրերուն մէջ ՚ի գործ զնելու . և թէ շատ վախկոտ քրիստոնեաներ ասոնցմով հաստատուէին :

Ե . Արտին պահպանութեանը զգուշութիւնը պահանջող ^{Վարդապետ} ժամանակն ազրատութեան ժամանակն է . թէ և այսպիսի ժամանակներ մենք ո՛չ թէ Աստուծոյ զէմ, այլ Աստուծոյ բողոքելու ենք . վանդի կարօտութեան ժամանակի համար կանգնած է շնորհաց աթոռ : Ասկայն երբոր քաջալերութիւնը և միտմարտութիւնը կ'սկսին նուազել, և ազրատութիւնը կ'սկսի նեղել, որչափ հակամտութիւն ունին մինչև անգամ բարի մարդիկ վերան երկրայելու : Արբոր ալիւրը աակաւէն և իւր անօթէն կը պակսի, ք թւաք . ժէ . 12 . գրեթէ մեր հաւատարմ ու համբերութիւնն ալ մէկ տեղ կը պակսի . և ան միջոցին գոսող և անհաւատ սիրար՝ քաղցր Ֆաղանդութեամբ և սուրբ հանդարտութեամբ մը Աստուծոյ հետ պահելը դժուար է : Ահուսն ամբարներ և քօակներ ունեցած ատեննիս՝ օրական հացի համար Աստուծոյ յուսալու ենք բնելը զիւրին բան է . բայց մարգարէին պէս՝ « թէ և թզնին ընծիւղ շտայ :

ու սրթներու վրայ պատուղ շքլայ , և ձիթենիին բերբը ստէ , և արտերը կերակուր շտան , ու փարախէն ոչխարը կարի . և գամերու մէջ արջու շքլայ , սակայն ևս Տէրոջմով պիտի ցնծամ . իմ փրկութեանս Աստուածովք պիտի ուրախանամ . Ըսելը՝ արդարեւ դիւրին բան չէ : Ա՛ճք . Կ . 17 , 18 :

Աւրեմն կ'ուզե՞ս գիտնալ՝ թէ քրիստոնեայ մը ազքատութիւնը իր վրայ եկած սեպած աւանը , ինչպէս պահելու է սիրար Աստուծու երկրայեղէն կամ անոր զէմ արանջալէն : Անանաւորապէս հիմա՝ որ նախախնամութեան նպատակը անանկ բլլալ կը թուի թէ՛ կ'ուզէ Աստուծոյ ժողովուրդը այս ինչ աշխարհային վայելչութիւններէ զրկելով ան զժուարութիւններուն ծանօթ ընել , որոնց որ մինչև հիմա բոլորովն ստար էին . վասնորոյ բանը շատ զգուշութեամբ դիտել արժան է : Աս վեճակին մէջ եղած վտանգէն սիրար ապահովցընելու համար՝ սա դիտուութիւնները Հոգւոյն Արքայ օրհնութեամբը կրնան օգտակար երեւալ :

Ո՞ր Այթէ Աստուած զքեզ կ'ազքատացընէ , քեզի հետ առջի սուրբերուն հետ վարուածէն տարբեր կերպով շխարուիք : Գուն եզական վեճակ մը շունիս , թէ և մինչև հիմա չէիր դիտեր թէ ի՞նչ է ազքատութիւնը . բայց ուրիշ քրիստոնեաներ շատ աղէկ տեղեկացած էին անոր : Այլ թէ ինչ կ'ըսէ Պօղոս առարեալ չէ թէ միայն իրեն՝ այլ նաև ուրիշ կատարեալ քրիստոնեա-

ներու համար ալ : «Մինչև աս օրուան ատենը
կ'անօթ ենանք ալ , կը ծարաւինք ալ , մերկ ալ կը
մնանք , կը ձեճկուինք ալ , աստանդական ալ
կը պարտինք” : Ինչպէս . Գ . 11 : Պօղոս ա-
ռաքեալի պէս մարդ մը , երբոր կը տեսնանք թէ
աշխարհիս մէջ մերկ' անօթի եւ աստանդական
պարտեցաւ , անանկ մէկը՝ որ շատ դերագանց էր
չնորհրի եւ սրբութեան մէջ . անանկ մէկը , որ
մէկ օրուան մէջ Մատուցոյ փառքին համար ա-
ւելի շատ աշխատեցաւ՝ քան թէ զուն բոլոր կե-
նացող օրերուն մէջ հազիւ կ'աշխատիս , ասիկա
կրնայ քու տրտունջիդ աղէկ վախճան մը տալ :
Մոռցա՛ր թէ ‘Կաւիթ ալ որքան նեղութիւն կը-
րեց . սրչափ մեծ էին անոր թշուառութիւննե-
րը . ‘Արքադին ըսաւ թէ , ‘Շնորհք բրէ քու
ծառաներուդ եւ քու որդւոյդ ‘Կաւիթին՝ ձեռ-
քէդ եկածը տուր” : Ինչպէս . Ին . 8 : Կայց ին-
չո՞ւ խօսիմ' ասոնց վրայօր . ահա՛ ասոնցմէ աւելի
մեծ մէկը՝ Մատուածորդին . որ ամէն բանի մա-
տանդ է , եւ աշխարհք անօթ տեղ ծուեցաւ , երբեմն
ուտելու բան մը չուենալով՝ շատ ուրախ կ'ըլ-
լար ինչ որ ձեռքը անցնէր : Մարկ . մտ . 12 , 13 :
“Ահ հետեւալ օրը՝ երբոր Կեղանիայէն կ'ելլէին ,
անօթեցաւ . եւ հետուանց տերեւալից թղենի մը
տեսնելով՝ եկաւ որ գուցէ անոր վրայ բան մը
գանէ . եւ երբոր անոր քովը գնաց , տերեւերէն 'ի
զատ բան մը չգտաւ . ինչու որ գետ թուղի տակն
էէր” :

Արեմն Մատուած քեզ աղքատացրնելովը ա-

տած չըլլար . ո՛չ ալ հացի կարօտութենէդ՝ սի-
րոյ պակասութիւն կրնաս մակարերել : Արբոր
քու զժկամակ սրտովդ կը հարցընես թէ՛ արդեօր
ինձի պէտ տառապեալ մըն ալ կ'ոյ՞ . սա երեւի
անձինքը քու հարցմանդ պատասխանելով , ահա
կ'ըսեն թէ՛ մենք թէ և քեզի նման չենք զան-
գատեր : բայց մեր վիճակը քու վիճակէդ աւելի
կարօտեալ էր :

Թ . Թէ՛ որ Մտուած սա վիճակին մէջ քեզ ա-
ռանց խոստմունքի ձգած չէ , ուրիմն դուն պատ-
ճառ մը շունիս տրտունջը ընելու կամ յուսա-
հատելու : Արդարեւ ան վիճակն է անտանելի վի-
ճակը՝ որուն վրայով ամենեին խոստմունք մը
չկայ : Արեւելի հեղինակ մը , Ասայ . Թ . Վ տա-
նը վրայ տուած մեկնութեանը մէջ՝ զերու թեան
մթութեանը , ինչ մտօր թագազամ Փաղասարին
փոքր արշաւանացը մթութեանը շափ մեծ չըլ-
լալը կը բացատրէ : Գերութեան ժամանակը
քաղաքը կործանեցաւ , և տաճարն ալ կրակով
այրեցաւ . անանկ որ նեղութեան սասակութեանը
կողմանէ՛ երկուքին մէջ տեղը բազգատութիւն մը
չենք կրնար ընել . սակայն մթութիւնը այնչափ
մեծ չէր որովհետեւ . « Վասպարային մէջ խոստ-
մունք մը եղած էր , բայց միտին մէջ ո՛չ ընաւ »
կ'ըսէ ինքը : Վշելի աղէկ է խոստմունքով մինչեւ
զժոխքը խոնարհիլ՝ քան թէ առանց խոստման
զբախտին մէջ կենալը : Մինչև անգամ բուն խի
զժոխքին մթութիւնը՝ բազգատմամբ ընաւ մը-
թութիւն չպիտի սեպուէր , եթէ միայն լու-

սաւորութեան մէկ խոստմունք մը բլլար :
 Երբ՝ Եսաուած շատ անուշ խոստմունքներ տու-
 ած է իր ազքատ ժողովուրդին այսպիսի վեճա-
 կի մը մէջ կենալու . ինչպէս , «Տէրոջմէ վախ-
 ցէք՝ ո՛վ անոր սուրբերը . վասն զի անկէ վախ-
 ցողներուն բան մը պակաս չբլլար : Եսիւծի կո-
 բիւնները չքաւորութիւն ու անօթութիւն կը
 կրեն սակայն Տէրը փնտռողներուն բարութիւն
 մը պակաս պիտի չբլլայ» : Առաջ . լի . 9 . 10 :
 «Ե՛հա՛ Տէրոջը աչքը իրմէ վախցողներուն , ու իր
 սղորմութեանը յուսացողներուն վրայ է , ա-
 նոնց անձը մահուանէ փրկելու , ու սովի ժամա-
 նակ զանոնք ապրեցընելու համար» : լի . 18 .
 19 : «Բարութիւն մը պիտի չպակսեցընէ ուղ-
 ջութեամբ քալողներէն» : ձի . 11 : «Ե՛ն
 որ իր Արդւոյն շինայից , հասցա մեր ամենուն
 համար մասնեց զանիկա . ալ ինչպէ՛ս անոր
 հետք ամէն բաները մեզի շտարգակէր» : Նը-
 սոմէ . ը . 32 : և Ասայ . խն . 17 : «Եղբաս-
 ները ու անանկները ջուր կը փնտռեն , բայց
 չկայ . անոնց լեզուն ծարաւն չորցեր է . ևս
 Տէրս անոնց խնդրուածքը պիտի լսեմ . ևս Խա-
 բայէլին Եսաուածը զանոնք երեսէ պիտի չձը-
 գեմ» : Տես անոնց վերջին ծայր կարօտութիւ-
 նը . ջուրը իրենց կեանքին պիտոյիցը , և մէկ
 միթիթարութիւններնուն տեղը դրուած է . և Ես-
 աուած կ'ըսէ , «Այս Տէրս անոնց խնդրուածքը
 պիտի լսեմ» . որ ըսել է թէ՛ անոնք իրենց թշուա-
 ոտութեանցը մէջ Եսաուծոյ կ'աղաղակեն . և ինքն

ալ անոնց աղաղակին կը լսէ : Աւտի սա խոսածունքներն ունենալով, քու կասկածոտ սիրտդ ինչո՞ւ Վաւթի պէս չըսեր թէ՛ «Տէրը իմ հովիւս է, ես բանի մը կարօտութիւն պիտի չունենամ» :
Սող . ինչ . 1 :

Վայց կ'ըսես թէ՛ սա խոսածունքները պայմաններ կը պարունակեն, որ եթէ անոնք բացարձակ ըլլային առաւել ևս ապահովութիւն պիտի տային : Քու գաղտնի խօսած պայմաններդ ասոնցմէ՛ ի զատ որո՞նք են, այսինքն թէ՛ ինքը կամ լեցընէր կամ սրբէր քու կարօտութիւններդ՝ թէ դուն Վստուծոյ՝ քեզի յարմար տեսածին չափ ունենայիր, ասիկա՞ դժուարդ կու գայ . Վստուած անոնք քեզի կամ յարմար սեպէ կամ չսեպէ, դուն կ'ուզես ձեռք ձգել զանոնք, երկրաւոր բաներու վրայսք սուրբերուն ունեցած ակորժակները այնքան անյազ ըլլալու չեն՝ որ առանց պարագաներու նկատմանը անյազարար անոնց փափարին :

Վայց կ'ըսես թէ՛ երբոր կարօտութիւնները կը ձնչեն ու ես չեմ գիտեր թէ՛ ուսկից պիտի օգնութիւն գայ, ան ժամանակը իմ խօսածանոս վրայ ունեցած հաւատքս կը տատանի, և արանջացող Խորայէլացւոց պէս կ'սկսիմ աղաղակել թէ՛ «Վն՝ որ հաց տուաւ, ջուր ալ կրնայ տալ» : Ա՛վ անհաւատ սիրտ, անոր խօսածունքները ե՞րբ չկատարուեցան, ս՛վ կայ որ անոր յուսալով վերջապէս ամչցաւ : Քու անիրաւ թերահաւատութեանդ հետ քեզ չ'կրնար յանդիմանել Վստ-

ուած . ինչպէս որ Արեմիայի բերնովք կ'ըսէ . Թ . 31 . «Միթէ ես անապատ կզայ Կորայէլին» : Կամ ինչպէս որ Քրիստոս իր աշակերտացը ըսաւ . «Քանի որ ես ձեզ խրկեցի . . . դուք բանի՞ մը կարօտ կըսիք» : Այս ինքրդինքնիդ մեղադրելով կարող չէք ըսել բարեպաշտ Պողեկարպոսին հետ թէ . «Այսքան տարի Քրիստոսի ծառայութիւն ըրի , և զիացայ՝ որ ինքը բարի Տէր մըն է» :

Արդարեւ կրնայ ըլլալ՝ որ ձեզի պէտք կզածէն աւելի բան մը չտայ . բայց պէտք կզածը չտալիք չընէք . ինքը ձեր ցանկութիւններուն ազազակին մտիկ պիտի չընէ , սակայն ս'չ ալ ձեր հաւատքին ազազակը պիտի անարգէ . թէ և ինքը ձեր զեզիս բաղձանքները չլեցընէք , սակայն իր հաւատարիմ խոստմունքները պիտի չաւրէ : Աս խոստմունքները յաւիտենական կեանքի համար ունեցած ապահովութիւններնուդ ամէնէն պատուականներն են , և անշուշտ պիտի ապահովցընեն ձեզ ձեր օրական հացին համար ալ : Յիշեցէք Տէրօջը խօսքը , և ամէն նեղութեանց մէջ սիրտերնիդ անոնցմով թող մտիթարուին : Այպիկուրոսի համար ըսուած է թէ՛ (որ Յոյն հեթանոս փիլիսոփայ մըն է ,) նեղութեանց մէջ իր փիլիսոփայական գիւտերուն յիշատակութեամբը ինքզինքը կը զովացընէք . ուրիշ փիլիսոփային մէկն ալ նոյն պարագաներուն մէջ կզած ատենը՝ բարոյական առաքինութեան վրայ խօսելով ինքրզինքը կը մտիթարէր , և հիւանդացած ժամաւ

նակները այսպէս կ'ըսէր : «Վ՛իցու . դուն բան մը ընելու կարող չես . թէ և քիչ մը կը նեղես , սակայն ես երբէք իբրեւ շար չպիտի խոստովանիմք քեզ" : Այժմ է անոնք ասանկ աստիկ նեղու . թեանց ու ցաւի տակ ինքրզինքնին կրնային այսպիտի հիմանց վրայ հաստատել , և մինչև անգամ անոնցմով իրենց հիւանդութիւնները կը յաղթէին . հապա որչափ ևս առաւել Աստուծոյ խոստմունքներն , և անոնցմով քայլ առ քայլ յառաջացած ան անուշ փորձառութիւններնից , ձեր բոլոր կարօտութիւնները մոռցընելով պիտի մոխրաբն ձեզ ամէն թշուառութեանց մէջ :

Ի . Թէ որ գէշ է քու վիճակդ , աւելի գէշ կրնար ըլլալ : Աստուած աս կենաց բարութիւնները չէ՞ պարզեւէր քեզի . կրնար ըլլալ որ Վրբիտոս անոր խաղաղութիւնն ու թողութիւնն ալ շտար , և ան ատենը քու վիճակդ շատ ահաւոր պիտի ըլլար :

Վիտես որ Աստուած այսպէս բրտ միլիոնաւոր մարդոց : Վանի քանի այսպիտի թշուառ արարածներ կրնաս ամէն օր տեսնել , որ ո՛չ վայելչութիւն՝ ո՛չ ալ յոյս ունին . հոս թշուառ են , և յաւիտեան թշուառ պիտի ըլլան . որոնք մէկ դառն գաւաթ մը ունին ձեռքերնին՝ սակայն անիկա անուշցընող բան մըն ալ չունին . մինչև անգամ յոյս մը չունին թէ անկէց աղէկ պիտի ըլլան : Բայց դուն անոնց պէս չես . դուն՝ թէ և աս աշխարհքիս մէջ ազքատ ըլլաս , սակայն հաւատքով հարուստ , և Աստուծոյ խոստացած թա-

գաւարութեանը ժառանգ ես : Հոգեւոր հարբա-
տութիւնները՝ մարմնաւոր ազբաստութեան գէմ
գնել սորվելով, հաւատարակչուէ բոլոր ներկայ
նեղութիւններդ քու վայելած ամէն հոգեւոր ար-
տանութիւններուն հետ : Երդարեւ եթէ Եստ-
ուած քու հոգիդ հազուեցրնելու համար, արգա-
բութեան պատմութեանը՝ և անիկա կերակրելու
համար պահուած մանանան՝ ու անոր բնուէն-
լութեանը համար երկնային օթեանը շտար,
պէտք էր որ արամէիր, բայց պէտքը չէ որ ե-
իցէ արտաքին խնամութիւններուդ մէջ միտ-
թարութիւն չմատակարարելուն համար արամիլ :
Վրիստոսի հաւատարիմ աշակերաները՝ կարօ-
տութեամբ ձեռուած ժամանակինն այսպէս կ'ը-
սէին, «Գոհ բլաներ մեր ձանձրալի կերակուր-
ներէն, վասն զի չէ՞ որ Վրիստոսով կենաց հա-
ցը կը վայելնը» : Պողոս առաքեալ ըսաւ .
«Օրջեալ է Եստուած՝ որ մեզ օրջեց ամէն հո-
գեւոր օրջութիւններով» : Եփ. 3 :

Գ. Թէ և առ նեղութիւնները մեծ բլան՝ ա-
ւելի մեծերն ալ կան, որոնցմով առ աշխարհիս
մէջ Եստուած կը խրատէ իր հոգւոյն օրամնե-
րը : Թէ որ ինքը ներկայ նեղութիւններդ մէկ զի
աւնելով, ան աւելի մեծերը վրայ բերելու բլայ՝
ան ժամանակը պիտի գիանաս որ ներկայ վիճակդ
օրբան միտթարական վիճակ մըն է եղեր, և պի-
տի օրջես Եստուած հիմակուան եղածիդ պէս
բլայու համար : Թէ որ Եստուած ներկայ նե-
ղութիւններդ մէկ զի աւնէ, և քու ամէն կարօ-

տու թիւններդ լեցրնէ , ան ամէն աշխարհային բարութիւնները պարզեցնելով՝ որոնց որ կը փափարխա , բայց իր երեսը քեզմէ ծածկելու . բլայ . իր նեակերը քու հոգւոյդ շիակէ , և անոնց թոյնը խմցրնէ անոր . թողելու . բլայ քեզ միայն քանի մը որ սատանային սպասակներուն , եթէ միայն քանի մը գիշեր բռնելու . բլայ քու աչքերդ՝ որ թողու . որ խղճին խայթերովը գլուխդ մէկ կողմէն միւս կողմը զարնելով տանջուիս մինչև առտու , և առաջնորդէ քեզ մահուան ստուերնէրուն մէջ խաւարին երազները ցուցնելու , և դասակարգէ քեզի գէմ իր սոսկումները , ըսէ ինձի՝ անտակներ կրկին քու առաջին կարօտեալ վեճակիդ դառնալ թէ որ կարելի բլար , անիկա մեծ շնորհք մը պիտի շնայեիր . և Աստուծոյ շնորհքովը՝ խղճի խաղաղութիւնով կզամ հացն ու ջուրը , երջանիկ վեճակ մը պիտի շնայեիր : Մհ ուրեմն , արտունջ բնելէն զգոյշ կեցիր : Մի բնը թէ Աստուած իմ հետս խառութեամբ կը վարուի , որ շրջայ թէ քու գառու մտիդ քեզ համոզելու գրգռես , որ ասանկ գծկամակ և գծողոհ աղայոց համար՝ գործածած գուազաններէն շատ աւելի գէշ գուազաններ ալ ունի :

Ե . Թե՛ որ վեճակդ հիմա գէշ է՝ քիչ ժամանակէն ետե շատ աղէկ և յաջող պիտի բլայ : Ան դիտողութիւնով պահէ քու սիրտդ թէ՛ տակառին մէջի ալիւրը հատած բլայուն համար ես ինչու պիտի նեղուիմ , թէ որ ես աս քաներուս գործածութենէն և կարօտութենէն անդին պի-

տի անցնիմ : Ճամբորդը իր ունեցած բոլոր ըստակը հասցրնելէն ետե կ'ըսէ թէ՛ . «Աղէկ . թէ ե ունեցած ստակիս բոլորն ալ գնաց : սակայն իմ ճամբորդութիւնս գրեթէ կը կատարի . ահա մտակեցած եմ իմ հայրենիքս , ե շուտով պիտի իմ կարօտութիւններս լինայ : Թէ որ տանը մէջ ճրագ չըլլայ՝ առաուն մօտ ըլլալը միտիմարութիւն մըն է , որ ան ատենը ճրագի կարօտութիւն պիտի չըլլայ : Ա՛յլ քրիտաննայ , վախնամ դուն բանը սխալ կը գատես խորհելով որ՝ բոլոր պաշարդ հատած է , ե դուն շատ ճամբայ ունիս երթալու . շատ տարիներ ունիս ապրելու . առանց ապրուստի . այսպէս մի խորհիւր . վասն զի կրնայ ըլլալ որ քու կարծիքիդ կէսին շափ ալ չըլլայ : Աս բանին վստահ եղիւր որ՝ եթէ պաշարդ հատնելու ըլլայ՝ շտեմած տեղէկ կամ նոր պաշարներ գալու վրայ են , կամ քու կարծածէդ աւելի ճամբորդութեանդ վախճանին մտակեցած ես : Ա՛յլ լրեալ ոգի . վայելուչ է որ երկնային քաղաքը ճամբորդող մարդ մը՝ որ իր Հօրը տունը հասնելու համար քանի մը աւուր ճամբայ մնացած է ուր որ իր ամէն կարօտութիւնները պիտի լինան , քիչ մը կերակուրի՝ խմելիքի՝ կամ հանգերձի համար՝ որ կը վախնայ թէ ճամբուն մէջ պիտի կարօտի , այնքան վշտանայ ու տարակուսի : Ա՛նչ աղնուութեամբ կը գոչէին ան քառասուն մարտիրոսները՝ որ մերկանդամ դուրս ձգուեցան ցրտասառոյց գիշերուան մէջ սովամահ ըլլալու : Արգարե ձմեռը սաստիկ ե ցուրտ

է : բայց երկինքը ասք է միտնարական . հաս-
թէ է ցուրտին պատճառաւ կը գողանք : սակայն
Վերահամու գողը հասուցում պիտի ընէ մեզի” :

Բայց լքեալ հոգին կ’ըսէ : “Մնօթու թեանս
պատճառաւ կրնայ բլալ որ մեռնիմ” : Այլ մե-
ռաւ անօթու թեանս պատճառաւ : արգարները
նէր տեղ երեսէ ձգուած են : Աթէ իբաւ պս-
պէս բլայ՝ քու ճամբորդութիւնդ լրացած է . է
ամեն կարօտութիւններդ պիտի լեցուին :

Բայց կ’ըսես թէ՛ ես աղ բանին վայոյսք վատահ-
շեմ . եթէ երկինքը երթալու վտահ բլայի . աղ-
ուրիշ բան է : Աստահ շեմ աղ բանին . ուրեմն
գուն ասնցմէ շատ մեծ պատճառ ունիս նեղուե-
լու : Կարծեմ ասնք քու հոգալու բաներէդ ա-
մեննն փորբազոյնն են : Չեմ կարծեր որ մե-
ղաց քաւիչ Քրիստոսի կարօտ բլայնուն վրա-
յոք շփօթութեան մէջ եղող քրիստոնեաները՝
սովորաբար շատ հոգ կը տանին աս բաներուն
համար : Մն որ սրտի մտօք կը հարցընէ թէ .
“Ի՞նչ ընեմ” որ փրկուիմ” : Ինչպէն պիտի
գիտնամ թէ մեղացս թողութիւնը բլալը .
ինքրդինքը շնեղեր պլայպիտի խորհուրդներով
թէ՛ “Ի՞նչ պիտի ուտեմ կամ խմեմ կամ
հագնիմ” :

Գ . Արնայ բլալ որ ալսպիտի Հօր մը գաւակ-
ները իրենց Հօրը ամենարաւականութեանը վը-
րայ երկրային . կամ բրած մատակարարութեան-
ցը որ է իցէ մէկուն համար արտունջ ընեն : Վ-
մեն մէկ նոր տազնապի հասնելուդ . անոր հոգա-

ծուխանք ու սիրոյն վրայօր երկրայեղ ազէկ
 կ'ընես . բսէ : Այսպէս ընկէզ արգէն ամէցած
 շէն : Առջի ժամանակները պատահած դժուար-
 ութիւններուց մէջ քու հօրդ տուած պաշար-
 ները քեզ ամօթով չձգեցի՞ն . ե որոշել շտուի՞ն
 որ ալ ես իր սիրոյն ու հոգածութեանը վրայ
 չերկրայիս : Այս տակաւին կը նորոգես անոր
 վրայ ունեցած անհիմն երկրայութիւններդ : Այլ
 անմիտ որդի . առ բանը խորհէ թէ՛ . Այլ թէ ես ին-
 ծի հարկաւոր ե բարի եղած բանի մը կարօտու-
 թեանն կը կորսուիմ , ստիկա պէտք է որ կամ իմ
 հօրս իմ ինչ բանի կարօտ ըլլալս չգիտնալուն
 համար ըլլայ՝ կամ ինքը շունի ան բաները . ու
 բնեցմով իմ կարօտութիւններս պիտի լեցուին .
 ե կամ ինչ որ ինծի կը պատահի , անոր հոգը
 չէ : Աս իրեքին սրը կրնամ ամբաստանել Աս-
 տուծոյ վրայ : Առաջինը շեմ կրնար . վասն զի
 հայրս իմ ամէն կարօտութիւններս գիտէ :
 Սաթլ . զ . 8 : Այլ ալ երկրորդը . ինչու որ
 երկիրը իր լիութեամբը Տէրոջն է : Իս Կորնթ .
 Ժ . 26 : Այլ երջինն ալ շեմ կրնար . վասն զի ինչ-
 պէս մէկ հայր մը կը գիտայ իր զաւակներուն վր-
 այոյ պսպէս ալ Տէրը կը գիտայ իրմէն վախճող-
 ներուն վրայ : Սաթլ . ճի . 13 : Տէրը խիստ զը-
 թած ե բազումօղորմ է . Յակ . ն . 11 . ե կը
 լսէ ազատի ձագերուն ձայնը երբոր անոնք կ'ա-
 զազակեն : Սաթլ . ճիսէ . 9 : Այլ ինծի պիտի չլսէ՞ :
 "Այլեցէր" կ'ըսէ Քոխատոս "երկիրքի թռչուն-
 ներուն" : Սաթլ . զ . 26 : Չէ թէ տանը մէջի

Թոշուհները որ ամէն օր ձեռքով կը կերակրեն , բայց օգին թոշուհները՝ որոնք իրենց համար բան պատրաստող շուհին : Ան որ իր թշնամիները կը կերակրէ , պիտի մտնայ իր զուակները . ինքը մինչև անգամ խորայէլին ձայնը անոր նեղութեան ժամանակը լսեց . **Օ՛հ՛հ** , ին . 7 : Ա՛յ իմ անհաւատ սիրտս , տակաւին կը տարակուսիս :

է . Քու ազքատութիւնդ՝ ո՛չ թէ մեզք , այլ նեղութիւն է . թէ որ դուն մեզսալից միջոցներով բերած չես անիկա քու վրայ , և թէ որ մայն նեղութիւն է՝ շատ դիւրին է անոր համբերելը : Յիրաւի շատ գէշ բան է անանկ նեղութիւն մը կրելը՝ որն որ իբրև մեզաց պատիժը և արդիւնքը վրանիս կու գայ : Արբոր մարդիկ ասանկ պատճառաւ նեղութեան տակ իյնան , կ'ըսեն թէ՛՝ ո՛չ եթէ աս ասանկ նեղութիւն մը ըլլար , որ Աստուծմէ փորձի ճամբով կու գայ կրնայի տանիլ . բայց և մեզքով ասիկա իմ վրաս բերի . իբրև մեզաց պատիժ մը վրաս կու գայ , և Աստուծոյ ահաճութեանը նշանները անոր վրայ են . արտաքին կարօտութենէն աւելի ներքին յանցանքներս են՝ որ կը նեղեն ու կը տանջեն զիս : Բայց բանը քեզի այսպէս ըլլալուն համար՝ անոր տակը ձեշուելու պատճառ մը չունիս : Բայց կ'ըսես որ՝ յի՛մ է և յանցանքի խայթոց ըլլայ , տակաւին աս վիճակը ուրիշ խայթոցներու կարօտ չէ . կրօնքին նախատիլը բաւական խայթ մըն է , իմ աշխարհային գործառ-

նութիւններովս եւ պարտաւորութիւններս շեմ կրնար կատարել . և հաւանականապէս սա բանին համար կը նախատի կրօնքը՝ : Ա՛յն պարտաւորութիւններդ կատարելու փափաքիլդ աղէկ է . սակայն թէ որ Աստուած իր նախախնամութեամբը անկարող ըրաւ քեզ՝ ընելու կարող չեղած բանդ չընելովդ , քու դաւանութեանդ նախաախնար մը բերած չես ըլլար՝ քանի որ կը ջանաս և կը փափաքիս քու կրցածդ ու պարտաւորեղանդ ընելու . և սա կերպով Աստուծոյ կամքը քեզի հետ քաղցրութիւնով և մարդասիրութիւնով վարուիլ է :

Արկին կ'ըսես թէ՝ «ուրիշներուն կարօտութիւնը տեսնելով անոնց օգնութիւն մը ընելու կարող չըլլալուս համար կը նեղուիմ՝ : Քանի որ երբեմն կրնայի քաջալերել և սփոփել՝ » . եթէ չես կրքնար , պարտքէ ազատ ես . և Աստուած քու հոգւոյդ կարօտեալներուն օգնելու համար ունեցած կարեկից և եռանդուն պատրաստութիւնը կ'ընդունի , թէ և չես կրնար օգնել և կերակրել :

Գարձեալ կ'ըսես թէ՝ «ես կը կարծեմ որ այսպիսի վիճակ մը՝ որ փորձութեամբ լեցուն է , երկնից ճամբուն մէջ մեծ արդելք է՝ : Այնպէս հիմա մէջ ամէն վիճակ արդելքներով և արդելք պատճառող փորձութիւններով լեցուն է . և թէ որ դուն յաջող վիճակի մը մէջ ըլլայիր , հիմակուան ունեցածներէդ աւելի փորձութիւններու և քիչ օգուտներու կրնայիր հանդիպել . վասն զի՝ թէպէտ ես կը խոստովանիմ որ աղքատութիւնը

Հարստութեան պէս փորձութիւններ ունի, սակայն վտաս՛ հեմ որ հարստութիւնը՝ աղքատութեան ունեցած օգուտները չունի: Այս վեճակի մէջ պատահութիւն ունիս Աստուծոյ վրայ ունեցած սիրոյց անկեղծութիւնը յայտնելու, երբ որ կրնաս անով ապրիլ և բուսական բան ճարել անոր օգնութեամբը. և շարունակ անոր հետեւի մինչև անգամ բոլոր արտաքին պատճառներուդ և շարժառիթներուդ պակասը առանձն ալ: Ահա ցուցուցի քեզի աշխարհիս մէջ նուստ վեճակի մը վերաբերեալ վտանգներէն և փորձութիւններէն սիրող պահելուդ կերպը: Արբոր աղքատութիւնը մեզ կը հարստահարէ և սիրտերնիս կ'սկսի ձնչուիլ, ան ատենը զօրանանք և անիկա պահելու պիտանի օգնութիւններուն համար օրձներ մեր Աստուածը:

Օ. Սիրտը պահելու համար աս զգուշութիւնը պահանջող Վեցերորդ ժամանակը հոգեւոր պարտաւորութիւններու ժամանակն է: Պէտք է որ սրտերնիս աղէկ հսկենք և պահենք երբ որ Աստուծոյ կը մտանանք, ընկերական և առանձնական ազօթք ընելու. վասն զի սիրտը իրեն ունայնութիւնը այսպիսի ատեններէ 'իզատ' ուրիշ քիչ անգամ կը տեսնայ: Ազորմելի հոգին սրբան անգամ կը գոչէ. ո՛վ Տէր, սրբան ուրախութեամբ քեզի ծառայել կ'ուզեմ, բայց ընչն խորհուրդները կ'արդիլեն զի՛ս քու առջիկ իմ սիրտս բանալու, և քեզի հետ հազարգահցութիւն ընելով զուարթացընելու կու գամ. բայց իմ

ազատականութիւններս զէմ՝ կը գնեն ինծի . Տէր ,
 ջնջէ վրայէս սա շնչին խորհուրդները , և արգիլէ
 անոնց որ քեզի նշանուած հոգին չպտանրկեն :

Ուրեմն խնդիրը սա է . ազօթքի ժամանակ
 շնչին խորհուրդներով մտաբը ցրուելէն ի՞նչ
 պէս կրնայ պահուիլ : Արկու կերպ արատ-
 զութիւն կամ սրտի խտորում կայ ազօթքի
 մէջ : «Աստ՝ կամու որ և սովորական . «Մանր
 իրենց սիրաը շին շխակած , ու իրենց հոգին հա-
 լատարիմ չէ Մատուծոյ վրայ» : Սուր . հը . 8 :
 Պաշտամանց արատքին ձեւերուն յուսացողները
 սասնկ են . և առ Մատուած՝ սրտի սուրբ հակա-
 մրտութիւն չունենալէն կը պատճառի : Մանց
 սիրաը իրենց ցանկութեանցը իշխանութեանը
 տակն է . և անոր համար զարմանք չէ անոնց՝ ի-
 րենց ցանկութիւններնուն ետէն երթալը . մի-
 չե անգամ երբոր սրբազան պաշտամունքներու
 վրայ ալ ըլլայ : Արկրորդ՝ ակամայ և ողբալի
 խտորութեանք : «Սուտի ես կը դանամ որէնք
 մը՝ որ երբ բարին ընելը կը կամենամ , չարը իմ
 քովս է : Ի՞նչ խղճալի մարդ եմ ես» : Հոգ .
 է . 21 , 24 : Մտիկա ո՛չ թէ սուրբ հակամարտ-
 թիւն կամ գիտաւորութիւն չունենալէն յառաջ
 կու գայ . այլ շնորհաց տկարութենէ , և ներք-
 սարնակ մեղաց զէմ՝ գնելու արթնութիւն չու-
 նենալէն : Բայց մեր նպատակը ցուցնել է թէ
 ինչպէս սա խտորութեանքը դուրս հանելու , և նո-
 րէն անգամ ալ ներս մտնելնին արգիլելու է :

Ո . Սերժէ անձգ ամէն աշխարհային զբաղ-

մունքներէ , և ժամանակ որոշէ պատրաստութիւն մը ընելու Եստուծոյ դէմը ելլալու համար՝ հոգեոր պարտաւորութիւններդ կատարելով : Չես կրնար աշխարհէն ուղղակի Եստուծոյ ներկայութեանը դալ՝ առանց քու ազօթքներուդ մէջ աշխարհին մէկ հոտը դանելու : Վանի մը բոպէ առաջ աշխարհին մէջ ընկղմած , և հիմա Եստուծոյ ներկայութեանը մէջ մտած սիրան է՝ որ փոթորիկը նոր անցած ծովի նման , զեռ կը բանի խոռվայոյզ և անհանգարտ . թէպէտ և հովը զաղբած և փոթորիկը անցած է : Աիրտզ հանգստանալու քիչ մը ժամանակ ունենալու է . շկայ մէկ նուագածու մը՝ որ նուագարանը առնէ ու շալէ առանց ժամանակ վաճառելու և աշխատութեան , զանիկա ներդաշնակելու համար : Վիչ քրիստոնեայններ կը դանուին Վաւթի հետ «Աիրտս պատրաստ է՝ սիլ Եստուած» բող : Սող . ծէ . 7 : Երբոր ինչ և իցէ ազօթքով մը Եստուծոյ կ'երթաս , առանձնացիր քու սրտիդ հետ ու ըսէ . սիլ իմ հոգիս . արարածի մը երբէք ձեռք զարկած ամենամեծ գործին մէջ եմ հիմա . ահա ես Եստուծոյ ահաւոր ներկայութեանը կ'երթամ՝ յաւիտենականութեան վերաբերեալ գործքով : Աիլ իմ հոգիս . ձգէ հիմա ունայն բաները . հանգարտ եղիք , արթուն և զգաստ . ափկա հասարակ գործք մը չէ՝ հոգւոյն գործն է . յաւիտենականութեան համար գործ մըն է . և անանկ գործ մը՝ որ կենաց կամ մահուան պտուղ կը բերէ հանդերձեալ աշխարհին

մէջ : Կանկ սա վայրկեան մը , և զիտէ քու մեզքերդ՝ կարօտութիւններդ՝ և նեղութիւններդ . քու խորհուրդներդ քիչ մը ատեն առ բաներուս վրայ պահէ ընկեր աղօթքիդ սկսելէդ առաջ : Վաւիթ առաջ կը մամտար , ետքը կը խօսէր :

բ . Վախկին խորհրդածութեամբ սիրտդ հանդարտեցընելով , անմիջապէս պահապան մը զիր զգայարանքներուդ : Վանի՞ քանի անգամ քրիստոնեաները իրենց մարմնոյն աչքովը՝ հողիին աչքը կորսնցընելու վտանգի մէջ ինկեր են : Ըս բանիս զէմ՝ Վաւիթ աղօթք բրաւ այսպէս ըսելով . «Նա գարձուր իմ աչքերս , որ սնտի բան չտեսնեն , և զիս քու ճամբուդ մէջ կենդանացուր : Սաղ . ճիթ . 37 : Ըսիկա Ըրաբացուոց սա առաջ կը մեկնէ : «Վոցէ պատուհանները՝ որ տունը լոյս ըլլայ» : Ըղէկ կ'ըլլար որ՝ ըսէիր սկսած ատենդ ինչպէս որ քրիստոնէին մէկը անգամ մը ըսաւ աղօթքը ընելէն ետքը . «Վոցուէ սով իմ աչքերս , վասն զի անկարելի է որ երբէք այնպիսի զեղեցիութիւն և փառք տեսնաս մէկ արարածի մը վրայ՝ ինչպէս ես հիմա տեսայ Ըստուծոյ վրայ» : Պէտք է որ զուրտէն կեող խոտորումներուն ամէն առիթներէն փախչիս , և Ըստուծոյ դործքին մէջ ան հոգւոյ ջերմութիւնը ունենաս՝ որն որ աչքն ու ականջը կը փակէ ունայնութեան զէմ :

գ . Ըստուծու հանդարտ երեւակայութիւն մը ինդրէ : «Ընչոյ՞՞ երեւակայութիւնը» , կ'ըսէ մէկը՝

որչափ որ գովեն մարդիկ : այնչափ ալ մեծ որո-
գայթ մըն է հոգիին՝ թէ որ Աստուծոյ հետ հա-
ղորդութիւն բնելու մէջ ուղիղ բանականու-
թեամբ և սուրբ սրտով շարժէ : Արեւակա-
յութիւնը՝ զգայարաններուն ու իմացողու-
թեան մէջ տեղը կանգնած , հոգւոյն մէկ զօրու-
թիւնն է , ան բանն է՝ որ նախ հոգւոյն մէջ կը
շարժէ , ինքզինքը , և իր շարժումներովը հոգւոյն
միւս կարողութիւնները զործել կ'սկսին , ան
բանն է՝ որուն մէջ նախ խորհուրդներ կը ձևա-
նան , և ինքը ինչպէս որ է՝ անոնք ալ անանկ
են : Այթէ երեւակայական խորհուրդները նախ
և առաջ մէկդի շնորհներ , անկարելի է որ սր-
տին ամէն խորհուրդը Վրիստոսի Հազանդի :
Արեւակայութիւնը բնականապէս հոգւոյն ամե-
նէն վայրենի և անբնաել զօրութիւնն է : Վրիս-
տոնեաները շատ բան բնելու են ասիկ ազատելու
համար՝ և սրբան որ սիրաբը հոգեւոր ըլլայ , այն-
բան առաւել կը խոսովէ վայրենի և ունայն ե-
րեւակայութիւնը : Հաւալի բան է որ մէկուն
երեւակայութիւնը՝ հոգին արդիլէ Աստուծոյ հե-
տեւելէն , երբոր Անոր հետ հաղորդութիւն կ'ը-
նէ անիկա : Աղօթք բրէ ջերմեռանդութեամբ
և յարատեւութեամբ՝ որ քու երեւակայութիւնդ
ուղղուի և մարբուի , և երբոր աս ըլլայ՝ քու
խորհուրդներդ կանոնաւոր և հաստատուն կ'ըլ-
լան :

Գ . Այթէ կ'ուզես աղօթքի կեցած ասանդ քու
սիրադ պահել ունայն խոտորումներէ , հաւատ-

քով իրականացուր քեզի Մատուցոյ սուրբ ու ա-
 չաւոր ներկայութիւնը : Այժմէ մէկ ալիւոր մար-
 դու ճը ներկայութիւնը քեզ լուրջ կ'ընէ , սը-
 քան ես առաւել սուրբ Մատուցոյ ներկայու-
 թիւնը բնելու է : Աը կարծես թէ զուարթ ե
 թեթեալարոյ պիտի ըլլայիր եթէ Մատուցոյին
 էակին ներկայութիւնը ու զիտողութիւնը ի-
 րականացնէիր : Յիշէ որ ըլլալը՝ երբոր հո-
 զեւոր պարտաւորութիւններու կ'զբաղիս , ե Մա-
 տուցոյ ամենազիտութեանը հաւատացողի պէս
 զործէ : «Վճն բան բաց ու յայտնի է անոր
 աշքերուն առջեւ , որուն պիտի արուի մեր հա-
 շխը" : ԱԶԳ . 4 . 13 : Իրականացուր անոր
 անհուն սրբութիւնը՝ մարբութիւնը՝ ե հոգեւո-
 րութիւնը :

Ծանր ըրէ Մատուցոյ մեծութեանը վրայօր
 այնպիսի սղացութեան ստանալու՝ որ բաւ պատ-
 շաճի պիտի ներզործեն քու սրտիդ . ե յիշէ
 որ ինքը շատ նախանձաւոր է իրեն մատուցուած
 երկրպագութեանը վրայ : «Վո է որ Տէրը խո-
 սեցաւ՝ ըսելով . ինձի մատիկցողներուն մէջ սուրբ
 պիտի սեպուիմ , ու բոլոր ժողովրդին առջեւ պի-
 տի փառաւորուիմ" : ՎԷԳ . 3 . 3 : «Վզօթքի
 կայնող մարդ ճը" , կ'ընէ մէկը «պէտք է որ իր
 անձին վրայ այնպիսի զգացում ունենայ՝ թէ
 երկնային արբունիքը պիտի մանէ , ուր որ ինքը
 պիտի տեսնայ Տէրը իր ակտիւ վրայ՝ որ հաղա-
 րաւոր հրեշտակներ ու սուրբեր ինքը շօջապա-
 տած իրեն կը ծառայեն" : Արբոր այնպիսի ա-

զօթքէ կու գաս՝ որուն մէջ սիրաց խառնած և
 անփոյթ եղած է, ի՞նչ կրնաս ընել: Բիցուք
 թէ ջերմեռանդ ազօթք մը բնելու ասենդ՝ միա-
 քից մէջէն անցած ամէն ունայնութիւններն ու
 շնչին բաները, քու խնդրուածքներուդ հետ մէկ-
 տեղ գրուէին. երես կրնայի՞ր ունենալ զանոնք
 Եսաուծոյ ներկայացընելու: Աթէ սրտիդ ա-
 մէն խորհուրդները՝ աստուածային պաշտամունքի
 գանուած ասենդ լեզուդ արաստանելու ըլլայ:
 մարդիկ քեզ պիտի շանարգեն: Սակայն Ես-
 ասուած կատարելապէս գիտէ քու խորհուրդ-
 ներդ: ՄՏ. խորհէ Սուրբ Գրոց սա խօսքին
 մտայ: «Եսասուած խիստ զարհուրելի սուրբերուն
 ժողովքին մէջը, և ահաւոր է ամէն իր բոլոր-
 տիքը եղողներուն»: Սաղ. 3թ. 7: Ի՞նչ-
 չու համար Տէրը որոտմունքով և կածկըլ-
 տուքներով, ու խաւար ամպերով իջաւ Աինա
 լեռանը մտայ. ի՞նչու համար լեռները կը միա-
 յին անոր տակը՝ և ժողովուրդը Մովսէսի հետ
 կը դողային ու կը սասանէին անոր բոլորտիքը.
 միայն սա մեծ ճշմարտութիւնը ժողովրդին սոր-
 վեցընելու համար. «Անշարժ թագաւորութիւ-
 նը առած ըլլալով՝ ամուր բաններ ան շնորհքը,
 որով Եսասուած պաշտենք հաճոյական կերպով,
 ակնածութեամբ և վախով, ինչու որ մեր Ես-
 սուածը մաշող կրակ է»: Աշո. ԺԲ. 28, 29:
 Եսասուծոյ ներկայութեանը և բնութեանը վրա-
 յօք այսպիսի գիտողութիւնները՝ ունայնու-
 թեան հետեող սիրա մը շուտով առաւել հաս-

տատուն կերպարանքի մը կը փոխեն :

է . Մշտարին գործքերու ժամանակ՝ որտե՞տ
 զօթասեր բնուորութիւն մը ունեցիր : Ազօթը
 բնելու ասեմնիս մեր սրտերուն պարան զան-
 զաղ : անհոգ : և թափասեալ ըլլալուն ինչ
 պատճառ կրնայ ցուցուիլ . միայն թէ մեր Աս-
 տուծոյ հետ ունեցած հազարգակցութիւններ-
 նուս մէջտեղը կրկար բնոյժնահաստած մը ե-
 ղած ըլլալը : Այլ թէ այն Աստուածային շնորհքը .
 և ան հոգեւոր եռանդը . և ան սուրբ ազգեցու-
 թիւնները . որ ազօթը բրտած ասեմնիս Աստուծոյ
 կ'ընդունինք՝ մնան մեզ քաջալերելու : և մարա-
 նեցընելու համար ուրիշ ազօթքի ասեմն ալ : ա-
 նանք մեր սրտերուն եռանդուն և երկիւղած մեա-
 լուն մեծապէս օգտակար կ'ըլլան : Աս նպատա-
 կին համար՝ որոշեալ և կանոնաւոր ազօթքի
 ժամանակ . Աստուծոյ հաստատուն խնդրուածք-
 ներ մատուցանելը շատ օգտակար է . անանք չէ
 թէ միայն մարքը հանդարտ և երկիւղած վիճա-
 կի մը մէջ կը պահեն . այլ մէկ որոշեալ ազօթ-
 քը՝ ուրիշէ մը հետ կը կապակցեն . և հոգեղն
 մտազրութիւնը՝ իր ամեն օգուաներուն և պար-
 ասուցը վրայ արթուն կը պահեն :

զ . Թե՛ որ դուն քու խորհուրդներուդ խո-
 տարումը արդիւիւ կ'ուզես . ջանք բրէ փափաք-
 ներդ առ Աստուած հանել . ու ջերմութեամբ
 արթնցընել անանք ազօթքներուդ մէջ : Արբոր
 հոգին սերտիւ պարապած է որ և իցէ գործ մը
 բնելու . զորութիւնները մէկտեղ ժողովելով՝ իբ

ամէն խորհուրդները ան դործին կը շիակէ . և խորունկ ազդուելէն ետե՛ջ ջերմեռանդութիւնով նպատակին ետեւէն կ'երթայ . իր փափաքները՝ ան ասեւնը իր խորհրդոցը վրայ իշխանութիւն մը կ'ունենան , և կ'առաջնորդեն զանոնք : Ասոյց թուլութիւնը՝ խոտորում կը պատճառէ . խոտորումն ալ թուլութիւնը կ'աւելցրնէ : Թե՛ւ որ միայն քու ազօթքներդ իբրեւ ան միջոցը նկատելու ըլլայիր որ անով Աստուծոյ հետ հաղորդակցութիւն ունենալով կրնաս քալել . և որուն մէջ քու հոգիդ Աստուծոյ ներկայութեանը շքնորհած անդուդական և անպատմելի բերկրութիւններովը կրնար լեցուիլ . ահա՛ ան ժամանակը անոնք զանց առնելու հակամտութիւն չէիր կրնար ունենալ : Ասոյց եթէ խոտորեցուցիչ խորհրդոց կրկին վրայ զայն կ'ուզես արդիւնել , և ասանկով քու երջանկութիւնդ ազօթքի մէջ դանել , պէտք է որ չէ թէ միայն պարտքդ եղած ազօթքը մատուցանես , այլ համբերութեամբ և մշտապէս ջանքով քու զգացմունքդ անոր մէջ արթնցրնես : Ի՞նչու քու սիրտդ այսպէս անհաստատ է մասնաւորապէս առանձին ազօթքի մէջ . ինչո՞ւ Աստուծոյ ներկայութեանը մանկու ու ելլելդ մէկ կ'ընես . թէ չէ՛ քու զգացումներդ արթուն չըլլալուն պատճառաւ :

Է . Աշրբոր ունայն խորհուրդներով խոտորած ես . խոնարհեցուր ինքզինքդ Աստուծոյ առջին , և երկինքէն օդնութիւն կանչէ : Պօղոս առաքեալը , սասանայի հրեշտակ մը՝ (ինչպէս որ

կը կարծուի .) միտքը շար խորհուրդներ ձգելով
 ղինքը նեղած ատենը՝ Եստուծոյ անջին ողբաց
 աս բանին համար : ի ԱորձԷ . ժբ . 7 : Կնաւ
 պղտիկ բաներու տեղ մի դներ աղօթքի մէջ խո-
 տորող խորհուրդները . մեծ ցաւով տրամէ այս-
 պիտի խորհրդոց վրայ , և այսպէս ըսելով Եստու-
 ծոյ դարձիք . «Տէր , քու հետդ հաղորդութիւն
 ընելու եկայ , և հոս արթուն հակառակորդ մը , և
 ուստ , և սիրտ մը մեկտեղ սխարայած ինձի դէմ
 կը հակառակին : Ա՛յ իմ Եստուածս՝ ինչպէս
 սիրտ մը ունիմ ես . երբէք քեզի պիտի շաղո-
 թեմ՝ առանց խոտորման . երբ պիտի ազատ հա-
 ղորդակցութիւն վայելիմ՝ քեզի հետ : Կնձի ող-
 նութեան հասիր աս ժամուս մէջ , յայտնէ ինձի
 քու փառքդ , և իմ սիրտս շուտով պիտի բժըշ-
 կուի : Այս քեզ վայելելու համար հոս եկայ . և
 առանց քեզի՞ պիտի ես դառնամ : Տես իմ նե-
 ղութիւնս և օգնէ ինձի՞ » : Այթէ կրնայիր միայն
 բաւականապէս սուգ ընել քու մարիդ խոտո-
 րումներուն վրայ , և առանցմէ ազատելու համար
 Եստուծոյ աղաչել , ազատութիւն պիտի դրա-
 նայիր :

Ը . Քու աղօթքներուդ ընդունելութեանը , և
 անոնց կատարումէն ելլալիք մոտիմարութեանը
 վրայ նայէ՝ անոնց մէջ սիրտդ Եստուծոյ հետ
 մտա պահելէն ըստ մեձի մատիւ կախում ունեցող
 բաներու պէս : Ես երկու բաները՝ աղօթքի ըն-
 դունելութիւնը , և անոր կատարումէն ելլալիք
 ներքին մոտիմարութիւնը , անպատմելի կերպով

սիրելի են քրիստոսնեային • բայց անհոգ վեճակի մը մէջ եղող սիրար՝ ասոնց երկուքն ալ կրկորսընցընէ : «Մըգարե Աստուած ունայնութիւն մտիկ չընէր , և Մեննակարողը անոր չընայիր» : Յոբ • 13 : Խոստամունքը եռանդուն սրտի մը եղած է : «Այլ զիս պիտի փնտռէր , և պիտի գտնէր • վասն զի ձեր բոլոր սրտովք պիտի խնդրէր զիս» : Եզրբ • 13 : Եզրբոր սիրտդ խոտորման և թուլութեան տակը կ'ըլլայ , ըսէ Խեղդինքիդ • սէ , Տիմա անհոգ սրտով մը ես սրչափ բան կը կորսնցընեմ : Կենացս ամենաշարդի մասերը՝ իմ աղօթքի ժամանակներս են • եթէ միայն կարող ըլլայի սիրտս Աստուծոյ վերցընել , այնպիսի ողորմութիւններ պիտի ստանայի Տիմա՝ որ մեծ գովութիւն պիտի պատճառէին բոլոր յաւիտենականութեան մէջ :

Թ • Աս բանիս մէջ քու հոգածութիւնդ կամ անհոգութիւնդ՝ զիտէ իրրե մեծ վկայութիւն մը քու անկեղծութեանդ կամ կեղծաւորութեանդ : Աղջամիտ սիրտ մը արթնցընող՝ ասկէց աւելի բան մը չկայ : Ինչ • սրտին սովորաբար Աստուծմէ խոտորած պտըտելուն տեղի՞ պիտի տամ : Կեղծաւորութեան արատը պիտի երեւնայ իմ հոգոյս վրայ : Յիրաւի կեղծաւորները կրնան երկայն աղօթքներ ընել , ասոնց իրենց սրտին վեճակը նկատելու • բայց ես ասանկ կրնամ ընել • բնաւ թող զո՛հ չըլլամ ես սնտի աղօթքներով : Ազրբէր չըլլայ որ մէկ աղօթք մը վերջացընեմ , մինչև որ տեսնան իմ աչքերս թագաւորը՝ զթերուանց Տէրը :

Ժ . Աղօթքի մէջ սիրտդ Աստուծոյ հետ պահելու համար մասնաւոր օգուտ մը ունի դիտելը թէ՛ քու բրան մէն աղօթքներդ ինչ ներգործութիւն պիտի ունենան քու յաւիտենականութեանդ վրայ : Հոգւոր պաշտամանց ժամանակներդ՝ սերմի ժամանակներդ են . և աս կեանքին մէջ սերմանածներուդ պտուղները՝ գալու աշխարհի մէջ պիտի չնձեռնեն : Թէ որ մարմնոյն մէջ կը ցանես , ապահանութիւն պիտի չնձեռնեն . և թէ որ հոգւոյն մէջ կը ցանես , յաւիտենական կեանք պիտի չնձեռնեն : Օգուշութեամբ պատասխան տուր աս հարցումներուն : Գալու աշխարհին մէջ կ'ուզես ունայնութեան պտուղներ չնձեռնել : Արբոր աղօթքի մէջ քու խորհուրդներդ աշխարհիս ծայրերուն մէջ կը խոտորին , կը համարձակիս ըսելու թէ՛ «Տէր , ահա հիմա ես հոգիին մէջ կը ցանեմ , ահա հիմա յաւիտենականութեան համար կը պատրաստեմ ու կը շտեմարանեմ , ահա հիմա փառք՝ պատիւ՝ ու անմահութիւն կը փրնտունեմ , ահա հիմա կը ջանամ նեղ գուռնէն մտնելու , ահա հիմա սուրբ յափշտակութիւնով մը երկնից թագաւորութիւնը կ'աննեմ" : Այսպիսի խորհրդածութիւններով զանուած է որ՝ ունայն խորհուրդները կը ցրուին :

ԱՅ . Արտի պահանջութեան առաւել զգուշութիւն պահանջող Աշխիշորդ ժամանակը՝ մարդոց մէջ մնաս և զգիտե՛ք ընդունած ժամանակնիս է : Այսպէս է մարդոց շարութիւնն ու ապահանջութիւնը՝ որ մէկը միւսին գայլի կամ վագրի պէս

կ'ըլլայ : Աշու որովհետեւ մարդիկ բնականապէս
անգութ են : և կ'ուզեն մէկզմէկ հարստահարել ,
վասն որոյ շարերը միշտ Մատուծոյ ժողովուրդը
նեղելու : և անոնց շարիք հասցրնելու կը ջա-
նան : Մարտիշար՝ իրմէ արդար եզոզը կը կլլէ :
Մ. Բ. Կ. 13 : Մ. Բ. Կ. երբոր այսպէս փնտա կը կրենք ,
և ուրիշները մեզի կը հարստահարեն , դժուար է
սրտերնիս վրէժխնդրութենէ պահել , և հանգար-
տութեամբ ու մեղմութեամբ բանը արդար գա-
տաւորին յանձնելն ու որ և իցէ մեղատից կիւ-
րերէ ազատ ըլլայր : Ան հոգին՝ որ մեր մէջն է ,
վրէժխնդրութեան կը ցանկայ . բայց պէտք չէ
որ ասանկ ըլլայ . Սուրբ Աշուարանէն ընտիր
օգնութիւններ ունինք՝ սրտերնիս մեր թշնամե-
ցը դէմ շար խորհուրդներ ունենալէ պահելու ,
և մեր գառնացեալ հոգիները անուշցրնելու :
Աշիւ հարցրնես հիմա թէ քրիստոսնեայ մը՝ մար-
դոցմէ մեծամեծ շարիքներ ու փնտաներ կրած ժա-
մանակը , ինչպէս կրնայ պահել իր սիրտը վրէժ-
խնդիր խորհուրդներէ կամ զգացումներէ , կը
պատասխանեմ : Աշբոր սիրտը վրէժխնդիր զգա-
ցումներով բռնկած կը գանաս , անմիջապէս խոր-
հէ հեռեկալ բաներուն վրայօք :

Կ . Տպաւորէ քու սրտիդ վրայ վրէժխնդրու-
թեան ան սաստիկ արգելքները՝ որ Մատուծոյ օ-
րէնքները կը պարունակեն : Վու ապահանեալ
յօժարութեանց որքան հաճելի ալ ըլլայ վրէժ-
խնդրութիւնը՝ յիշէ որ արդիլուած է : Անկ Մա-
տուծոյ խօսքը . . . Չարութեան փոխարէնը հա-

տուցանեմ՝ մի ըսեր՝ : Ըստի . ի . 22 : Մի ըսեր որ ինձի բրածին պէս պիտի ընեմ : « Չարութեան փոխարէն մէկուն շարութիւն մի հատուցանէր . սիրելիք՝ վրէժխնդրութիւն մի ընէր ձեր անձերուն համար . հասցա բարկութեան տեղ աուէր . ինչու որ գրուած է . Վրէժխնդրութիւնը իմն է . ես պիտի հատուցանեմ՝ կ'ըսէ Տէրը՝ : Բնդհակառակն « թէ որ քու թշնամիդ անթեցիր է՝ հայտուր անոր . ե թէ որ ծարաւ է՝ ջուր տուր անոր՝ : Ըստի . թ . 17 . 19 . 20 : Վրիտանեաները՝ իրենց կրօնքին զերբնական եմարուր ըլլալը ցուցնելու համար . իբրև փաստ մէջ կը բերեն՝ անոր վրէժխնդրութեան արդիւիւյն . որն որ մարդուս բնութեանը հաճելի բան մըն է . ե մենք ուզելու ենք որ . այսպիսի փաստ մը չբխափանուի : Արեմն՝ Սուրբ Գրոց մէջ եզած Ըստուածային իշխանութեան այսպիսի ահագն լեցնուր քու սիրտդ . ե երբոր մարմնաւոր մարքը կ'ըսէ թէ « թշնամիս պէտք է որ առեմ՝ » . խիզճը անմիջապէս թող պատասխանէ թէ « Բայց պէտք է որ՝ դուն Ըստուծոյ շնորհակցի » : Գուն կ'ըսես թէ՝ « Ինքը այսպէս ե այնպէս ընելով փեսա հատուց ինձի » : « Բայց Ըստուած ի՞նչ ըրաւ՝ որ անիկա բարկացրնես : Այժմ թշնամիդ կը համարձակի խաղաղութիւնդ աւրել . դուն ալ անոր շարութեանը հետեւելով օրէնքը աւրելու ես : Այժմ ինքը քեզի շարութիւն ընելէն չփախնար . դուն ալ պիտի չփախնաս Ըստուծոյ զէմ շարութիւն ընելէն » : Ըստպէս Ըստուծոյ լախար

Թող սանձէ՛ , և Հանդարտեցընէ՛ քու զգացմունք-
ներդ :

Ի • Հեղու թեան և ներողամտութեան ամենա-
վսեմ՝ օրինակները քու աչքիդ առջին բեր՝ որ
կարող ըլլաս զգալու անոնց օրինակին զօրու-
թիւնը • Վրէժխնդրութիւնը մեր մէջէն կարելու
ու նկատելու մի միայն ճամբան առ է : Մի բներ
թէ՛ • «Աչս թէ որ ուրիշներուն բրած շարութեանը
փոխարէն հատուցումն չընեմ , մարդիկ զիս երկ-
չտա ու յիմար պիտի սեպեն» • քանի որ դուն
աւելի իմաստուն , և աւելի սուրբ մարդոց օրի-
նակին հետեիս : Հոգ չէ ինչ որ մարդիկ քու
վրայօրդ կ'ըսեն : Մէկը չկայ որ մեր Տիրոջմէն
աւելի նեղութիւն կամ մեծ նախատինք կրած ըլ-
լայ մարդոցմէ • ոչ ալ մէկը կայ՝ որ առաւել
խաղաղասէր և ներողամտ հոգւով երբէք համ-
բերէ նախատանաց , թշնամանաց , և ամէն մէկ
տեսակ շար վարմունքի : Տէրը կը բամբասէին ,
և փոխարէնը չէր բամբասէր • կը շարշարէին և
սպառնալիք չէր ըներ : Արբոր ինքը կը խա-
չէին , այսպէս կ'աղօթէր • «Հայր ներէ անոնց»
և առ քանիս մէջ մեզի օրինակ մը թողուց՝ որ
մենք իր քայլերուն հետեիներ : Այսպէս իր օր-
բելի աշակերտներն ալ իրեն հետեւեցան : Անոնք
ըսին • «Արբոր մեզ կը բամբասեն՝ կ'օրհներ •
երբոր կը հալածեն՝ կը համբերենք • երբոր զէշ
կը խօսին՝ կ'աղաչենք» : Եւ , ին Աորթի • Գ • 12 , 13 :
Այլ ի՛նչու երկար ըսենք • չէ՛ որ շատ անգամ
լսած ենք , թէ ինչպէս համբերեցին Քրիստոսի

Նազանց ծառաները նեղութեան՝ շարշարանաց՝
 սրոյ և հրոյ՝ մահուան , եւ . նոյն տանը անոնց
 շքութենքը ամէն պարագաներու մէջ օրհնութեան
 անուշ հոտեր կը բուրելին : Ար յիբաւի քրիս-
 տոնէական հոգւոյն ամենազերազանց օրինակը
 սա բանիս մէջ կը տեսնանք : Աւրիմն ջանք բրէ՝
 որ դուն ալ սա հոգին ունենաս , որուն մէջ է քրիս-
 տոնէութեան գերազանցութիւնը : Ըն բանք՝ որ
 ուրիշները չեն կրնար բնել , դուն բրէ . միշտ սա
 խաղաղաւոր հոգին ունեցիր . ու ստով խաղա-
 դութիւն պիտի ունենաս քու հոգւոյդ մէջ , և թըշ-
 նամեացդ վրայ ալ յաղթութիւն պիտի ստանաս :

7 . Վիակ բեզի փեսա հասցրնող մարդուն բը-
 նաւորութիւնը : Կներ կամ բարի մարդ է , կամ
 չար . թէ որ բարի մարդ է , իր խղճին մէջ ե-
 զած լուսին և փափկութեանը պատճառաւ՝ թէ
 կանուխ թէ ուշ պիտի խմանայ որ ինքը բեզի
 շարիք հասուցած է : Թէ որ բարի մարդ է ,
 Վրիտանոս անոր ասկէ մեծ շարութիւններուն
 թողութիւն տուած է՝ որոնք բեզի հասուցած
 փեսաներէն շատ մեծ են . և դուն ի՞նչու չես նե-
 բեր : Թէ որ Վրիտանոս անիկա պիտի շանդի-
 մանէ կը բրած շարեացը համար , ոյլ ձրիապէս
 ամենուն ալ պիտի ներէ , ուստի դուն անոր վե-
 զէն պիտի բռնես բեզի շնչին փեսա մը հասցը-
 նելուն համար :

Թէ որ բեզի փեսաողը կամ նեղողը շար մարդ
 է , ճշմարտապէս կը պարտաւորիս բարեպիտո-
 թիւն ցուցրնելու անոր՝ քան թէ սխալալու-

Թիւն . ինքը խարուած և թշուառ վիճակի մը
 մէջ է . մեղաց զերի , և թշնամի արգարութեան :
 Թե՛ որ երբէք ապաշխարէ , ան տունը պատրաստ
 պիտի ըլլայ քեզի հասուցումն ընելու . և եթէ
 իր անապաշխար վիճակին մէջ մնայ միշտ , անանկ
 օր մը կու գայ՝ որ արժանապէս կը պատժուի :
 Գուն պէտք չէ որ անոր վրէժխնդիր ըլլաս ,
 վասն զի Աստուած իր բարկութեան վրէժը անկէ
 պիտի առնէ :

Կ . Յիշէ՛ որ յսակալութիւնով միայն չար
 կիրք մը կրնաս յազեցընել , բայց ներողամտու
 թեամբ կրնաս յաղթել ան կիրքին : Գրեթէ
 յսակալութիւնով կրնաս թշնամի մը կործանել .
 սակայն քրիստոնէական բնութեամբ վար-
 ուելով՝ երեք թշնամեաց կրնաս յաղթել . բուն
 խի քու կիրքիդ , սատանային փորձութեանը , և
 թշնամեոյդ սրտին : Այթէ յսակալութեամբ թըշ-
 նամիդ յաղթես , յաղթութիւնը փնտսակար և
 անարգելի պիտի ըլլայ . վասն զի դուն՝ ան յաղ-
 թութիւնը ստանալու համար , քու գէշութիւնդ
 պիտի յաղթէ քեզ , բայց ներող և հեզ բնա-
 րութեամբ վարուելով , միշտ յաջողութեամբ
 ու պատուով պիտի դառնաս : Բայց ան մար-
 դը՝ որուն բնութիւնը քու ցուցուցած հեզու-
 թիւնդ ու մարդասիրութիւնդ չզգար՝ արգարե
 շատ գէշ բնութիւն ունի , և հարկաւ շատ կարծր
 սիրտ մը պիտի ունենայ անանկը՝ որ կրակով
 չհալիք : Օգոր օրինակ . Գառիթ իր հալածչին՝
 այսինքն Կառուղին վրայ այսպէս յաղթութիւն

մը ստացաւ : «Եւ Սաւուղ իր ձայնը վերցուց ,
ու լացաւ . ու Գաւիթիւն ըսաւ . զու՛ն ինձ մէ ար-
գար ես'' : Ին ԽԵՄԴ . ԻԳ . 17 , 18 :

Ե . Օգուշութեամբ սա հարցումը առաջարկե-
քու սրտիդ . «Իմ ընդունեամ փեսաներուս և շա-
րիքներուս միջոցովք որ և իցէ բարութիւն մը
ստացայ ես'' : Աշխէ անոնք բարիք մը շքրին քե-
զի՛ սխդ քու անձիդ զարձուր : Եւ յսպիսի նեղու-
թիւններէ բարութիւն հանել չկրնալուդ , և
Քրիստոսի բնաւորութեանը պարան աննման
սիրտ մը ունենալուդ համար , շատ պատճառ ու-
նիս ամօթով և արամութեամբ լեցուելու : Աւ-
րիշ քրիստոնեաները՝ համբերութեամբ և հեղու-
թեամբ իրենց վրայ բերուած ամէն փեսաները
բարիի փոխեցին . անոնք աշխարհին նախատինք-
ներովք լեցուած ամեննին , հողիներնուն մէջ նոր
կենդանութիւն կ'ստանային Եստուած օրջնելու :
Ենոնք «ու բախացան որ Տէրոջը անուանը հա-
մար արժանի եղան անարդուելու'' : ԳՈՂԴ . Ե .
41 : Եւրդ՝ թէ որ քու ուրիշներէն կրամ փեսա-
ներէդ և շարիքներէդ որ և իցէ սղուտ մը հա-
նեցիր՝ թէ որ անոնք պատճառ տուին քեզի՛ որ
սիրտդ քննես , և ինչպէս վարուելուդ վրայովք ա-
ւելի զգուշութիւն ընել սորվես , սրբացուցուած
բնաւորութեան արժէքն իմանաս , պիտի չներեն
անանկ մէկու մը որ՝ քու պարան բարութիւննե-
րուդ զործիդ եղաւ : Ինչ կ'ըլլայ՝ թէ և ինքը
շարութեան համար ըրած ըլլայ . թէ որ անոր
ըրածը՝ Եստուածային օրջութեամբ քու եր-

ճանկու թիւնդ առաջ տարաւ . ի՞նչու զէջ պիտի
խորհիս անանկ մէկու մը վրայ :

Չ . Վիտէ թէ ո՞վ է քու նեղութիւններդ կար-
գազրոզը : Մերաց սխալալութենէդ պահելու
համար շատ օգտակար է աս զիտողութիւնը . և
շուտով պիտի մեղմացընէ ու անուշցընէ քու
բնաւորութիւնդ : Աչբոր Ամէի նախատելով
կ'անիծէր Վաւիթը . Վաւիթի հոգին երբէք չը-
թուենաւորեցաւ անոր զէմ սխալալութեամբ .
ժամն զի Մրեսա Ամէին զլխատելու համար թա-
ղաւորին հաճութիւնը ուղած ատենը . այսպէս
պատասխանեց թաղաւորը . «Թո՛ղ տուէր որ
այսպէս անէճք տայ . քանզի Տէրը ըսաւ անոր .
Վաւիթը անիծէ . ու ո՞վ կրնայ ըսել , թէ ի՞նչու
համար այդպէս ըրիր» : Ի թո՛ւ . Ժ . 10 : Կրնայ
ըլլալ որ Մատուած զիս խրատելու համար իբրև
գաւազան գործածէ անիկա . ժամն զի ես իմ
մեղքովս Մատուծոյ թշնամեացը հայհոյութեանը
պատճառ եղայ . և բարկանամ գործիբին . որ-
բան անմտութիւն է աս : Յոր ալ Վաւիթի պէս
հանգարա էր ուրիշներէն վեաս ընդունած ատե-
նը . ինքը առանց Սարայեցիներէն և Վաղգէա-
ցիներէն վրէժ առնելու խորհուրդ մը ունենա-
լու . Մատուած իբրև իր նեղութիւններուն կար-
գազրոզը նկատելով ըսաւ . «Տէրը տուաւ . ու
Տէրը առաւ . օրհնեալ ըլլայ Տէրօջը անունը» :
Յ . 21 :

Է . Վիտէ թէ ինչպէս դուն ամէն օր և ամէն
ժամ Մատուծոյ կամացը զէմ բան մը գործեցիր .

և պիտի գործես . և աս զհատողութիւնը պիտի շնորհու որ այսպէս զիւրաւ քեզի փեսա հասցընողներէն վրէժ առնելու բորբոքիս : Գուն շարունակ Մատուծոյ դէմ կը մեղանշես . սակայն ինքը անյիշաշար ըլլալով քեզի կը ներէ . և հիմա դուն ուրիշներէն վրէժ առնելու պիտի ելլես : Ալ Տեառն մերոյ ահաւոր յանդիմանութիւնը . « Չոր ծառայ՝ այն բոլոր պարտքը ևս քեզի շնորհեցի՝ ինծի աղաչելուդ համար . ուրեմն պէտք չէր քեզի ալ քու ծառայակցիդ ողորմիլ , ինչպէս որ ես քեզի ողորմեցայ » : Մատթ . ԺԸ . 32 , 33 : Ընտնք որ Մատուծոյ իրենց ցուցուցած առատ ողորմութեանը փորձառու են , պէտք է որ մարդասիրութեամբ ու ողորմութեամբ վարուին իրենց շարիք հասցընողներուն հետ : Ըստուծոյ մեզի ցուցուցած ողորմութիւնը՝ շարժելու է սիրաւորնիս ուրիշներուն վրայ գթալու : Ըստուծոյ ընդունած բարերարութիւններնիս և ողորմութիւններնիս չմոռնալով , անկարելի է որ ուրիշներուն անգթութիւն ցուցընենք : Այլ թէ որ բարերարութիւնը մեզ չհամոզէր , ինծի կ'երեւայ թէ՛ պէտք է որ վախը համոզէ : « Հապա թէ որ դուք չներէք մարդոց իրենց յանցանքները , ձեր Հայրն ալ ձեզի չներէր ձեր յանցանքները » : Մատթ . Գ . 15 :

Ը . Տերոջը վրէժ ինդրութեանն օրը մօտ ըլլալուն զհատողութիւնը՝ թող զսպէ քեզ ոխակալութեան գործքերէ : Ինչու այսքան կ'աճապարես , չէ որ Տէրը իր շար ծառաներէն վր-

բէժ առնելու վրայ է : « Համբերող եղիք եղբայր-
ներ՝ մինչև Տէրոջը գալուստը . ահա երկրա-
գործը կը սպասէ . . . Համբերելով ե՛ք : Ինչ
այլ համբերութիւնը բրէք , սիրտերնիդ հաս-
տատ բռնեցէք . ինչու որ Տէրոջը գալուստը մտ
է : Իրարու դէմ մի հառաչէք՝ եղբայրներ , որ
չգատապարտուիք . ահա՛ Իստաւորը դրանք քո-
վը կայներ է՛ » : Հռոմ . ն . 7—9 : Արէժ առնելը
Ըստուծոյ միայն կը վերաբերի . և քեզի պէտք է
որ զգոյշ կենաս՝ որ չըլլայ թէ անոր գործը առ-
նելով , անձիդ մեծ վնաս մը հասցընես :

Ը . Սիրտը պահելու համար մասնաւոր ճիգ
պահանջող Ուրիշորդ ժամանակը՝ մեծ փորձերու
պատահած ժամանակնիս է : Ըյսպիսի պարա-
զաներու մէջ՝ սիրտը շատ ընդունակ է գոռոզու-
թիւնով , անհամբերութիւնով , կամ ուրիշ չար
կիրքերով լեցուելու . մինչև անգամ շատ բարի
մարդիկ՝ աս վտանգին ենթակայ ըլլալնուն պատ-
ճառաւը , ամէնքը կարօտ են հետեւեալ միջոց-
ները զգուշութիւնով 'ի գործ զնել՝ մեծ փոր-
ձերու ժամանակ սիրտերնին խոնարհ և համբե-
րող պահելու համար :

• ւ . Խոնարհ և անձդ նուստացընող խոր-
հուրդներ բեր քու վրայ : Խոնարհ մարդը միշտ
համբերող է . և գոռոզութիւնը ամէն չար ու
անկանոն կիրքերուն աղբիւրն է : Բարձրամիտ
մարդը միշտ աննուաճելի ու զանգատող հոգի մը
կը կրէ : Արբոր մենք ինքզինքնուս վրայ մեծ
համարում կ'ունենանք , այն ժամանակ ամէն

վիճակի մէջ դժգոհ ըլլալով՝ կը դժուարինք ու կը արանջենք : Ո՛վ քրիստոնեայ , դուն քու վրայօրդ այնպիսի խորհուրդներ պէտք է ունենաս՝ որ երբեք տեղի չտան ասանկ տրտունջներուն : Գուն պէտք է ուրիշէն աւելի քու վրայօրդ նուստ ե խոնարհ համարում՝ ունենաս . խոնարհութիւն սորվէ , ե ինչ որ զխուզ գայ՝ խաղաղութիւն պիտի ունենաս :

Թ • Եստուծոյ հետ հաղորդակցութիւն ունենալու սովորութիւնը ունեցիր , ե աս ամէն բանի պիտի պատրաստէ քեզ : Ես այնչափ պիտի անուշընէ քու բնաւորութիւնդ , ե այնքան պիտի հանդարանցընէ քու միտքդ , որ ապահով պիտի ըլլաս ամէն յանկարծահաս գիպուածներէ : Ես՝ քու մէջդ ան ներքին խաղաղութիւնը յոռաջ պիտի բերէ , որով ամէն փորձութիւններէ ազատ պիտի ըլլաս : Եստուծոյ հետ ունեցած սովորական հաղորդակցութիւնդ՝ անանկ երջանկութիւն մը պիտի տայ քեզի , որ երբէք չպիտի կրնաս հաճիլ չար զգացումներով անիկա ընդմիջելու : Աչրոր քրիստոնեայ մը՝ իր վիշտերուն մէջ հանդարտ ե խոնարհ ըլլայ , հաւանականաբար ինքը աս ճամբով հաստատութիւն ե միտքարութիւն կրնայ ունենալ . բայց ան՝ որ խռովեալ , անհամբեր , ե զիւրագրգիռ է՝ յայտնի է թէ իր ներսի դին ուղիղ չէ , ե չենք կրնար սեպել թէ անանկը Եստուծոյ հետ հաղորդութիւն ունենալու սովորութիւն ունի :

ձ • Մտացդ մէջ խորին թող տպաւորուի ա-

պըստամբ, և անհանգարտ բնաւորութեան ար-
դիւնքներուն գէշութիւնը : Ասոնք՝ կը տրամե-
ցընեն Աստուծոյ Հոգին, և անոր բաժնուելուն
պատճառ կ'ըլլան : Իր բարեշնորհ ներկայու-
թիւնն ու ներգործութիւնը՝ միայն խաղաղու-
թիւն և հանգարտ խոնարհութիւն եղած տե-
ղերը կը գանուին : Այսպիսի բնաւորութեան
մը անհոգութիւն ընելը, հակառակորդի մը ոգ-
տին համար աշխատիլ է : Ստանան՝ բարկացող
և դժգոհ ոգի մը ըլլալով, անհաստատ սիրտերէն
'ի զատ' ուրիշ տեղ մը հանգիստ չկրնար գանել :
Արբոր կը նայի որ հոգիները խոռովութեան մէջ
են, ինքզինքը կը քաջալերէ. երբեմն ապերախտ
և ապստամբ խորհուրդներով կը լեցընէ մար-
դուս սիրտը, երբեմն ալ լեզուն անհամեստ խօս-
քերով կը բռնկցընէ : 'Կարձեալ' առանկ բնա-
ւորութիւն մը, խղճին վրայ մեծ խայթեր կը բե-
րէ. հոգին որ և իցէ պարտաւորութիւն մը կա-
տարելու անյարմար կ'ընէ, և քրիստոնէական
անունը կ'արատաւորէ : Ահ, պահէ քու սիրտդ,
և քրիստոնէութեան զօրութիւնն ու զերազան-
ցութիւնը՝ ամենամեծ տառապանքներու մէջ եղած
ժամանակներդ թող բացարձակապէս յայտ-
նուին :

Կ. 'Ասյէ, ու նկատէ թէ՛ որբան փափարելի է
քրիստոնէայի մը իր շար կիրքերուն յաղթելը :
Որբան աւելի ներկայ երջանկութիւններ յա-
ռաջ կը բերէ աս բանը. որբան լաւ է ըստ ամե-
նայնի մեռցընելն ու նուաճելը ամէն պիղծ զգա-

ցուցնեբը , քան թէ անոնց տեղի տալը : Արբոր
 մահուան անկողինից մէջ հանգարտութեամբ
 պառկած քու կեանքդ կը քննես , որքան մեծ միտ-
 թարութիւն պիտի ըլլայ քեզի՝ քու սրտիդ շար-
 զգացումներուն վրայ ըրած յաղթութեանց
 խորհրդածութիւնը : Այդ նոյնտիանոս կայսեր մա-
 հուան անկողինին մէջ ըրած խօսակցութիւնը՝
 յիրաւի յիշատակութեան արժանի է : Ըսա-
 թէ՛ « Ըմէն ըրած յաղթութեանցս մէջ , միայն մէկ
 հատ մը կայ՝ որ հիմա զիս կը միտիթարէ » : Արբոր
 անոր ինչ ըլլալը հարցուցին , պատասխանեց թէ՛
 « Իմ ամենաշար թշնամուդս , այսինքն՝ բուն իմ
 շար սրտիս յաղթեցի » :

Ե . Ըմչցիր ինքիրմէդ , ան մարդոց բնաւորու-
 թեանը վրայ խորհելով՝ որոնք հեղութեան ու
 խոնարհութեան կողմանէ շատ համբաւաւոր
 հանդիսացեր են : Սննդանոց բազմաթիւ քու
 բնաւորութիւնդ , Վրիստոսի Հոգւոյն հետ :
 Ընկիա ըսաւ թէ՛ « Սորվեցէք ինձմէ վասն զի
 հեզ եմ , ու սրտով խոնարհ » : Այսինչու մէ-
 կիկ մէկիկ յիշենք . չէ՞ որ մինչև անգամ հե-
 թանոսներէն շատերը՝ իրենց սաստիկ վիշտեր-
 նուն մէջը մեծ հանգարտութիւն ու ժուժկա-
 լութիւն ցուցուցին : Աւստի մեծ ամօթ ե նա-
 խատիր չէ՞ որ անոնք քեզի յաղթեն :

Զ . Քու կիրքերդ գրգռող ամէն բաներէն ետ
 կեցիր : Մեղաց ճամբաներէն ազատ մնալու կա-
 թող ըլլալու շար՝ հոգեւոր քաջութիւն պէտք է
 որ ունենանք : Այթէ կրնաս միայն ուժգին ե

անզուսպ կիրքերուդ զբզիռէն հրատարիլ, և անոնց սկզբնաւորութեան ատենը զանոնք նուաճել, քիչ առիթ ունիս վախնալու: Հասարակ մեղաց առաջին գործողութիւնները՝ բողոքատմամբ տկար են. անոնք կամաց կամաց կ'ուժովեան. բայց փորձութեան ժամանակ՝ մեղքին զբզիռները առջի բերանը շատ զօրաւոր կ'ըլլան. աննուաճելի բնաւորութիւնը՝ յանկարծ ուսաստիկ կերպով կը բորբոքի: Բայց թէ որ առջի անզամին քաջութեամբ դէմ դնելու ըլլաս, յաղթութիւնը պիտի ստանաս:

ԹՎ. Սիրտդ պահելու համար մեծ զգուշութիւն և վարպետութիւն պահանջող Իննէրորդ Համաձայն՝ փորձութեան ժամանակն է. ան ժամանակը՝ երբ որ սատանան կը պաշարէ քրիստոնէին սիրտը, և անհոգ եզոզը յանկարծակի կը բռնէ: Եսանկ ատեններ սրտին վրայ պահպանութիւն ընելը՝ շատ մեծ պարտաւորութիւն մըն է: Հասարիչ քրիստոնեաներ կան այնքան ճարտարամտութիւն ունեցող՝ որ իմանան հակառակորդին խաբէութիւնները, և մերժեն ան ամէն փաստերը՝ որոնցմով անիկա իրենք մեղքի կը զբզուէ. և սասանկով ապահով և անվնաս ազատին անոր որոգայթէն: Հատ երևելի քրիստոնեաներ՝ սասանկ առիթներու մէջ զգուշութեան և հսկողութեան կարօտ ըլլալնին զգալով, դառնապէս լացին: Արեմն՝ քրիստոնեայ մը ինչպէս կրնայ փորձութեան մէջ իյնալէն պահել իր սիրտը. զանազան երևելի առիթներ կան՝ որոնցմով հակառակոր-

դը փորձու թիւններ մէջ բերելով, մեղ զիջանե-
լու կ'ստիպէ :

՞ . Սատանան կը թելադրէ, թէ այս ինչ զու-
արձու թիւնը կայ՝ որ արժան է վայելել, փոր-
ձու թիւնը զուարթ գէւրով մը, ու հրապուրիչ
ձայնով մը կը ներկայացընէ : Ինչ, այնքան
կուպիտ և թանձրամիտ ես, որ զուարձու-
թեան զօրաւոր հրապոյրները չես զգար . ո՞վ
կրնայ այսպիսի բերկրու թիւններէ ինքզինքը
զսպել : Աւրդացող՝ զուարձու թեան հրապոյր-
ները մերժելով, այսպիսի փորձու թեանց վը-
տանդներէն ինքզինքդ կրնաս ազատ պահել :
Սատանան կ'ստիպէ, թէ մեզքին դորձադրու-
թիւնը բեզ պիտի հաճեցընէ : Գիցուք թէ ճըշ-
մարիտ ըլլայ . բայց խղճին ամբաստանող և դա-
տապարտիչ յանդիմանու թիւններն ու զժոխքին
բոցերն ալ հաճելի են : Իողճմտանքին հա-
րուածներուն մէջ հաճու թիւն կայ : Այն թէ այս-
պէս է, ինչու համար Պետրոս զաննապէս լա-
ցաւ . ինչու համար Գաւիթ «կտրած ոսկոր-
ներուն» համար աղաղակեց : Սող . ծն . 8 :
Մեղաց հաճու թեանն ու անոր արդիւնքներուն
վրայօքը Գաւիթ ըսածները չնս կարգացեր :
«Ինչ նետերդ իմ ներսի դիտ միտուեցան, և քու
ձեռքդ իմ վրաս կ'իջնէ : Իմ մարմնոյս մէջ ա-
ռողջութիւն չկայ քու բարկութեանդ համար,
ու ոսկորներուս մէջ հանգստութիւն չկայ իմ
մեղքիս համար : Սող . 1Ը . 2, 3 : Թէ որ փոր-
ձու թեան տեղի կու տաս, պէտք է որ ներքին

խոսովութիւն զգաս, կամ փորձուելուց համար՝ կամ զժողովին թշուառութեանցը համար: Բայց մեղաց խարերայ հաճութիւնը ինչո՞ւ պիտի հրապուրէ քեզ՝ երբոր գիտես թէ ժուժկայութեանն անպատմելի կերպով աւելի հիմնաւոր հաճութիւն պիտի ելլայ, քան թէ կրնայ ելլել մեզր գործելէն: Աւելի նախապատիւ պիտի սեպես շար ցանկութեան մը հաճութիւնը՝ անոր յառաջ բերած մահաբեր թոյնին հետ մէկտեղ Աստուծոյ Զազանդութիւն մատուցանելէն, և իրմէն վախնալէն յառաջ եկած ան սրբազան հաճութենէն՝ որ խղճին թելադրութեանն ալ համաձայն, և ներքին խաղաղութիւնն ալ հաստատ պահող է: Արնայ մեզքը որ և իցէ անանկ բերկրութիւն մը տալ՝ ինչպէս որ ան մարդը կ'զգայ փորձութեան տեղի շտալէն, իր սրտին անկեղծութիւնը յայտնելէն, և վկայութիւն ստանալէն թէ՛ ինքը Աստուծմէ կը վախնայ, սրբութիւն կը սիրէ, և մեղքը կ'ատէ:

Ի. Ան զազանութիւնը՝ որով կը գործես մեզքը, մէկ միջոց մը եղած է՝ քեզ փորձութեամբ մեղաց գործադրութեանը համոզելու համար: Փորձիչը քեզ կը համոզէ որ՝ այսինչ բանը ընելովդ մարդոց առջևը ատելի պիտի չըլլաս, վասն զի մէկը պիտի չիմանայ ան բանը: Բայց խելքդ գլուխդ բեր, Աստուած չտեսնա՞ր քեզ, ինքը ամէն տեղ ներկայ չէ՞: Թե և դուն կարենաս մեզքերդ աշխարհին վրայ ծածկել, բայց չես կրնար անոնք Աստուծմէ ալ ծածկել: Այլ մթութիւնը,

նչ ալ մահուան ստուերը կարող են քեզ Մստուծոյ տեսութենէն ծածկել : Ասկէց 'ի զաա' քու անձիդ նկատում չունիս : Կնքիբննդ կրբնան ընել ան բանը , որն որ չես համարձակիր ընել՝ որ ուրիշները կը տեսնան : Հազարաւոր վկաներէն աւելի չէ՞ քու խիղճդ : Հեթանոս մը անգամ կարող եղաւ բսկու թէ՛ « Արբոր մեզ զործելու փորձութեան մէջ իյնաս , առանց որ ե իցէ ուրիշ վկայի մը ինքզինքէդ վախցիր :

դ . Աշխարհային օգուաներու յոյսը՝ շատ անգամ փորձութիւններ յառաջ կը բերէ , կամ կը գրգռէ այսպէս . « Կնչո՛ւ համար դուն երկշտ ես այսչափ , ե խղճահար պիտի բլաս . քիչ մը ինքզինքդ ազատութեան տուր , ե վիճակդ աւելի աղէկ պիտի բլայ . վասն զի հիմա ե ժամանակդ » : Ասիկա վասնգաւոր փորձութիւն մըն է , ե շատով պէտք է մերժել : Ասանկ փորձութեան տեղի տալը՝ քու հոգւոյդ աւելի փնաս պիտի հասցընէ , բան թէ ժամանակաւոր ստացուածք մը պիտի կարենայ օգուտ ընծայել քեզի կարելի եղածին չափ : Աւ ի՞նչ շահ պիտի ունենաս թէ որ բոլոր աշխարհ վաստրկիս ե քու հոգիդ կորսընցընես : Քու հոգեւոր օգուաներուդ հետ ի՞նչ բան կրնայ բաղդատուիլ , կամ ինչ բան կայ որ կարենայ անոնց ամենափոքր փնասը փոխարինել :

դ . Քու ցէ մեղքին պզտիկութիւնը անիկա գործելու համար իբրեւ պատճառ մը մէջ կը բերէ սատանան՝ սասնկ բսկով . « Աս փոքր , ոչինչ , ե չնչին բան մըն է՝ որ այսպիսի դուարձութիւն

ներ պիտի պատճառէ՝ : Բայց երկնից իշխանու-
թիւնն ալ պղտիկ է : Այթէ աս մեզքը գործելու
ըլլաս . Եստուծոյ զէմ մեծապէս կը մեղանչես :
Այն պղտիկ զժոխք մը պղտիկ մեղաւորները պատ-
ժելու համար : Այ . զժոխքին մէջի ամենակրտսեր
մեղաւորներն անգամ թշուառութիւնով լե-
ցուած են : Մեծ բարկութիւն դիզուած է ամէն
անոնց համար . որոնք աշխարհի առջեւ պղտիկ
մեղաւորներ սեպուած են : Բայց որքան որ պղտիկ
ըլլայ մեզքը՝ անիկա գործելու համար եղած հրա-
պոյրն ալ այնքան պղտիկ կ'ըլլայ : Մէկ շնչին
բանի մը համար բարկութեան պիտի շարժես
Եստուած . պիտի կորսնցնես խաղաղութիւնդ ,
պիտի վերաւորես քու խիղճդ , և պիտի արամե-
ցնես Սուրբ Հոգին . անոնց ամէնը պիտի բ-
նես փուճ տեղը : Ի՞նչ յիմարութիւն է աս :

Ն . Արբեմն մեղաց թողութիւն զանալու յոյ-
սէն , և Եստուծոյ ողորմութենէն ալ փորձու-
թեան պատճառաւ փաստ մը կը հանեն . Եստ-
ուած ողորմած է . աս բանը տկարութիւն սե-
պելով պիտի զանց ընէ . ո՞ր գաար յանգուզն
մեղաւորներու ողորմութեան խոստմունք մը ե-
ղած : Եկամայ փնասները , և ան տկարութիւն-
ները՝ որոնց համար սուգ կ'ընենք , կը ներութիւն .
« Բայց ան անձը որ յանգուցութեամբ բան մը
կ'ընէ , անիկա Տէրը կը նախատէ . ան անձը իր
ժողովուրդին մէջէն պիտի կորսուի » : Թա-
ժն . 30 : Թէ որ Եստուած այսքան ողորմած
էակ մը է , ի՞նչպէս կրնաս անիկա բարկացը-

նել . ի՞նչպէս կրնաս Մատուցոյ օգտութու թեան աս
 փառասօր ստորոգելիքը մեզաց շարժառիթ սե-
 պել : Իբր բարի ըլլալուն համար շարութիւն պի-
 տի ընես անոր գէմ : Թո՛ղ իբր բարութիւնը մա-
 նաւանդ ապաշխարութեան առաջնորդէ քեզ , ու
 անձեզանդութենէ պահէ :

Չ . Սասանան երբեմն կը գրգռէ կը թեկադրէ
 մեզ մեզք գործելու , սուրբ մարդոց օրինակները
 առջևնիս բերելով : Մայսպէս և այնպէս մեզան-
 չեցին անոնք , և կրկին դարձի եկան . ուստի դուն
 ալ կրնաս աս մեզք գործել , սակայն և այնպէս
 սուրբ մը ըլլալ և փրկուիլ : Մասնկ փորձու-
 թիւնը պէտք է որ անմիջապէս մերժենք : Թո՛ւ որ
 բարի մարդիկ անանկ մեզք մը գործեցին՝ որով
 հիմա դուն ալ պաշարուած ես , որ և իցէ բարի
 մարդ մը՝ երբէք այսպիսի հրատուրանքներով
 մեզանչեց , որ հիմա քու առջեզ ներկայացու-
 ցած է : Ի՞նչ պատճառաւ Մատուած անոնց
 օրինակը պատմել տուաւ , միթէ իբր միտքը ան
 էր՝ որ դուն ալ անոնց նման ըլլաս , կամ թէ
 զգուշանաս : Չէ՞ որ անոնք իբրեւ աշտարակներ
 կանգնած են , որ դուն ազատ մնաս նոյն ժայռէն՝
 որուն իրենք զարնուեցան : Անշուք զգալ դուն
 ալ ինչ որ անոնք զգացին մեզքի համար . կը
 համարձակիս մեզքի մէջ անոնց հետեւելու , և մղե-
 լու քու անձգ ան վտանգներուն ու ապահանու-
 թիւններուն մէջ՝ որոնց մէջ անոնք ինկան :
 Անորդացող , աս կերպովս սորվէ փորձութեանց
 ժամանակը քու սիրտդ պահել :

Ժ . Տարակուսանաց ու հոգևոր մթու-
թեան ատենն է սրտի պահպանութեան ամենա-
զժուար կէտը ու ժամանակը : Արբոր Աստուա-
ծային ներկայութեան լոյսն ու մոխթարութիւնը
կը հեռանայ , երբոր հաստացեալը իր յոյսերէն
թուլնալու վրայ է մեղաց այլ և այլ կերպերով
զօրանալէն , և իր վրայօք անյոյս համարումներ
մակարերելու վրայ է , իր առջի մոխթարութիւն-
ները , ունայն խարերայութիւնները , և իր դա-
ւանութիւնն ալ իրրե կեղծաւորութիւն սեպելով
այսպիսի ժամանակի մը մէջ սիրաբ յուսահատու-
թենէ պահելու համար՝ շատ զգուշութիւն հար-
կուոր է : Քրիստոնեային յուսահատութիւնը՝
անոր իր հոգևոր վեճակին վրայօք ունեցած եր-
կիւղածութենէն կ'ելլայ , և ընդհանրապէս ինքը
կը վեճէ իր ճշմարիտ քրիստոնեայ ըլլալուն զէմ-
կամ կրկին նոյն մեղքերուն մէջ իյնալուն հա-
մար , որոնցմէ ինքը ամօթով և արամութեամբ
առաջուց դարձած էր , կամ իր զգացումներուն
Աստուծմէ հեռանալուն պատճառաւ , կամ իր
զգացումները զօրաւոր կերպով աշխարհային
վայելչութիւններու հեռեկէն , կամ ընկերա-
կան ազօթքի մէջ ջերմեանդութիւն զգալէն՝
քանի որ առանձնական ազօթքի մէջ պաղ է ,
կամ սատանային մէկ ահագին թեկադրութենէն՝
որով իր հոգին մեծապէս կը խռովի , կամ վեր-
ջապէս Աստուծոյ լուսութենէն և երկար ատեն ա-
նոր ազօթքները կախ թողելէն : Արդ՝ որպէս զի
ասանկ պարագաներու տակ սիրաբ հաստատուն

և ապահով մնայ, հարկաւոր է որ քանի մը ընդհանուր ճշմարտութիւններու ծանօթ ըլլաս՝ որոնք հակամարտութիւն մը ունին նեղեալ և տարակուսած հոգին հանդարտեցընելու, և որ ազէկ վարժուիտ խոսովութեան վերոյիշեալ պատճառներուն նայելով: Աւստի հետեւեալ ընդհանուր ճշմարտութիւններուն միտք դիր:

ա. Կեղծաւորութեան ամէն մէկ երեւոյթ, անիկա յայտնող մարդուն կեղծաւոր մը ըլլալուն վկայութիւն չեն կրնար ըլլալ: Պէտք է որ զուն մեծ փութով հոս տեղս սրտում ընես: Ընկալաւ սիրտերուն մէջ անգամ կան խաբէութեան մնացորդներ՝ որուն օրինակը Վաւթի և Պետրոսի վրայ կը գտնենք. բայց անոնց սրտին սովորական վիճակը ուղիղ ըլլալով, ան վարժուներուն համար կեղծաւոր չեն ըսուիր:

բ. Մենք ինչպէս որ մեզի գէժ ըսուելու կարելի եղածը, անանկ ալ մեր կողմէն ըսուելու կարելի եղած բաները պէտք է որ նկատենք: Վարի մարդոց՝ երբեմն ինքզինքնուն հետ ապօրինաւոր խստութեամբ մը վարուելին մեզք է: Ընտր իրենց հոգիներնուն վիճակը անկողմնաբար չեն դիտեր: Մարդիկ իրենց վիճակը ճշմարտապէս եղածէն աւելի ազէկ ցուցընել ուզելնին, արդարեւ այն զատապարտող ինքնահաւան կեղծաւորներուն մեղքն է. և իրենց վիճակը իրօք եղածէն աւելի գէշ ցուցընել ջանալնին ալ, բարի մարդոցմէ ումանց մեղքն ու յիմարտութիւնը: Վայց ինչո՞քու խաղաղութեանց այսպիսի թշնամի պիտի ըլ-

լիս զուն : Ա՛նչու կը կարգաս Աստուծոյ բու-
հոգւոյդ ցուցուցած սիրոյն վկայութիւնը ան
մարդուն պէս , որ զիրք մը կը կարգայ անկիւ
հերքելու միտքով : Ա՛նչու Ֆարքներ կը Ֆարես
որ քեզի տրուած միտքարութիւնները մերժես :

դ . Ա՛մէն բան որ Աստուծոյ ժողովրդին ցա-
կը պատճառէ , բաւական պատճառ չէ՝ որ իրենց
ճշմարիտ քրիստոնեայ բլալուն վրայ տարակու-
սին : Հաա բաներ կրնան ցաւ տալ , որ պէտք չէ
որ զայլմակղեցրնեն քեզ : Թե՛ որ ամէն մէկ զիպ-
ուածի մէջ պիտի տարակուսիս ան բոլոր բանե-
րուն վրայով՝ որ երբէք զործուեցան վրադ ,
բու կեանքդ տարակուսանքով և վախով լեցուն
կեանք մը պիտի բլայ , և բնաւ պիտի չկրնաս
ստանալ ան հաստատուն ներքին խաղաղութիւ-
նը , և վայելել զոհութեան և շնորհակալու-
թեան կեանքը՝ որ Աստուծոյ կը պահանջէ :

դ . Հոգին ամէն ժամանակ ինքի վրան
ուղիղ զատաստան մը բնելու յարմար վիճակի
մը մէջ չէ : Ան մասնաւորապէս անյարմար է
աս բանիս , երբոր Աստուած մեզ կը ձգէ և ստա-
նան մեզ կը փորձէ : Ասանկ ժամանակներ պէտք
է յաւէտ զգուշութիւն բնել և մարանչիլ ,
բան թէ դատել և վճիռ կարել մեր վրայ :

ե . Անչ որ բլայ մէկու մը ցաւին հիմը , ան
պէտք է որ Աստուծոյ մօտեցրնէ զինքը և ոչ
թէ անկէ հեռացրնէ : Վիցուք թէ այս ինչ
և այն ինչ կերպով մը մեղանչեցիր , կամ թէ
այսպէս երկար առնէ և ցաւալի կերպով ե-

բեռն ինկար • սակայն իրաւունք չունիս այսպիսի մակարերութիւն մը ընելու թէ ես հարկաւ յուսահատեալու եմ, իբր թէ Աստուծակ քեզի համար օգնութիւն մը չըլլար :

Արբոր աս ճշմարտութիւններուն վրայ աղէկ խորհելէ՞ղ ետքը տակաւին տարակուսութիւններ և խռովութիւններ կը մնան, դիտէ ինչ որ հիմա պիտի ըսեմ :

1 • Արտաքոյ կարգի նեղութեան մը հանդիպելուց համար՝ պիտի մակարերես թէ Աստուծոյ շնորհքէն բաժին չունիս : Այթէ այսպէս է՝ ուրեմն իրաւամբ կը մակարերես թէ մեծ նեղութիւնները Աստուծոյ ատելութեանը նշաններն են : Աս բանը Սուրբ Գիորգը կը սորվեցընէ : Այլ կը համարձակին նոյն մակարերութիւնը ամէն անոնց համար ալ ընելու՝ որոնք քեզմէ շատ աւելի վշտացած են : Թէ որ քեզի նայելով փատարդ իրաւացի է, անոնց նայելով աւելի իրաւացի է • ճիշդ ան համեմատութիւնով՝ որքան որ անոնց նեղութիւնը քու նեղութենէ՞ղ շատ է : Աւրեմն վա՛յ Բաւթին՝ Յորին և Պօղոսին, որոնք այնքան նեղութիւն քաշեցին : Բայց թէ որ երկայն ժամանակ հանգարտութիւն և յաջողութիւն վայելած ըլլայիր, և Աստուած անանկ կերպով մը վարուէր քեզի հետ՝ ինչպէս որ իր ժողովուրդը խրատելու համար ըստ կանոնի կը վարուի անոնց հետ, հիմակուանէն աւելի պատճառ պիտի չունենայիր տարակուսելու և ցաւելու :

2. Տէրը իր երեսին լոյսը ետ պահելուն համար՝ անխորհրդաբար կը մահաբերեն որ քեզ շտիրէր: Քու վիճակդ մութ է և անմիտութար ըլլալուն համար՝ կ'երեւակային թէ ան անյոյս վիճակ մըն է: Բայց այս վճիռները բնելու մի աճապարեր: Աթէ Լատուճոյ նախախնամութիւններէն որ և իցէ մէկը՝ իր ժողովրդեանը աղէկութեան կամ գէշութեանը համար է, ուրեմն ինչո՞ւ համար աւելի աղէկի մտօք չառնենք անկա . և չ'կրնար ըլլալ որ Լատուճ քեզի առաւել սէր ցուցընելու նպատակ ունենայ քան թէ ատելութիւն՝ ան նախախնամութեամբ, որուն տակը դուն կը վշտանաս: Չկրնար քիչ մը ժամանակ ինքը քեզմէ հեռանալ՝ առանց յաւիտեան հեռանալու: Լատուճոյ ինչ նպատակաւ իր սիրելիներէն հեռանալը չ'հասկընալով՝ անիկա սխալ մեկնող միեակ դուն չես: «Սիօնը ըսաւ» թէ . «Ահովան զիս թողուց, ու Տէրը զիս մոռցաւ»: Բայց այսպէ՞ս էր . ինչ պատասխան տուաւ Լատուճ: «Միթէ կնիկը իր կաթնկեր մանուկը կրնայ մոռնալ»: Լատուճ . խթ . 14, 15:

Բայց դուն կ'ընկզմիս ան երկիւղին տակը թէ՛ քու փորձառութեանդ մէջ բոլորովին երեսէ ինկած ըլլալու վեհալութիւն մը կ'երեւնայ: Արեմն կորսնցուցիր դեպ ՚ի մեզքը ունեցած երկիւղած զգուշութիւնդ . և հակամիտա՞ծ ես Լատուճ մոռնալու: Աթէ այսպէս է՝ արդարեւ պատճառ ունիս վախնալու: Բայց թէ որ քու խիղճդ արթուն է, եթէ մտքիդ մէջ որոշած ես Տէրոջը յարիւլ:

Եթէ աս է քու սրտիդ խօսքը թէ ևս չեմ կրնար
 ձգել Մատուած . առանց իր ներկայութեանը չեմ
 կրնար ապրիլ՝ թէ և ինքը զիս մեռցընէ . սակայն
 իրեն պիտի յուսամ . ուրեմն պատճառ ունիս
 յուսալու թէ ինքը կրկին այցելութիւն պիտի ը-
 նէ քեզի : Քու սո զգացմանդ համար է որ՝ ինքը
 տակաւին իր սէրը անփոփոխ կը պահէ վրայ :

Պարձեալ՝ մեր զգայարանքներն ու զգացում-
 ները . Մատուածային նախախնամութեան վրայօր
 դատաստան ընելու յարմար են . կրնանք անոնց
 վստահիլ : Եւսպէս ձեռնարկութիւն ընելն ապա-
 հով է . Այթէ Մատուած իմ հոգւոյս վրայ սէր
 մը ունի . պէտք է որ զգամ ինչպէս որ առջի
 ժամանակները կ'զգայի : Բայց սրովհետեւ չեմ
 զգար . ուրեմն սէր չկայ : Երեզական քեզի շտե-
 նուած ատենն ալ՝ ճիշտ այսպէս մակարեբութիւն
 մը չես կրնար ընել . թէ ան այլ ևս պիտի չերեւայ .
 կարգաւ Ասայ . Թ . 10 :

Երդ թէ որ Մտուածոյ քեզի հետ բռնած ըն-
 թացքին մէջ քու յուսահատութեանդ ու ցաւիդ
 իրաւացի հիմ մը չկայ . ուրեմն հարցընենք թէ
 քու վարքիդ մէջ ի՞նչ բան կայ՝ որ անոր պատ-
 ճառաւ այսչափ յուսահատիս և արամիս :

Թ . Ընանկ մեղքեր գործեցի՞ր որ անոնց հա-
 մար անգամ մը ամօթով և արամութեամբ զող-
 ջում բրած էիր : Այլ կը մակարեբես անկէց որ
 դուն յօժարութիւնով և սովորաբար կը մեղան-
 չես . ու թէ քու մեղացդ գէմ ցուցուցած ընդդի-
 մութիւնդ կեղծաւորութեամբ էր : Բայց չու-

տով յուսահատութեան մէջ մի իյնար : Աժէն
անդամ որ մեզք կը գործես , բու զղջումդ ու
հոգդ չ'նորոգուիր : Երբքը չէ՞ որ քեզ կը նեղէ ,
և ճշմարիտ չէ՞ թէ որչափ յաճախ որ մեզան-
չես , այնքան աւելի ցաւի մէջ կ'իյնաս : Աովո-
րարար մեզանչելուն մէջ բանը ասանկ չէ . ինչ-
պէս որ երևելի հեղինակին մէկը ըսած է անոր
վրայօր թէ՛ «Արբոր ինքզինքը սանձելու սովո-
րած մարդ մը գոթաղգարար կը մեզանչէ , ան
անտանելի կը թուի անոր . աս իրեն անանկ կը
թուի թէ կենդանի գոթախը կ'իջնայ . ժամանակէ
մը ետև ան չէ թէ անտանելի , այլ ծանր կը թուի
իրեն . բայց անտանելիին ու ծանրին մէջտեղը մեծ
տարբերութիւն կայ : Աերջը այսպէս մեզանչե-
լով կը թեթեանայ մեզքը . իր խղճին խայթելը
կ'սկսի տկարանալ , անոր յանդիմանութիւնները
այլ ևս նկատմունք մը չեն ունենար իր առջին :
Աս ասանկով ինքը չէ թէ միայն ըրած յան-
ցանքը չզղար , այլ ան բանը որ երբեմն դառն
ու անհաճոյ կը թուէր իրեն՝ հիմա աստիճանաւ
մը անուշ և հաճելի կ'երևնայ . և այսպէս մեզքը
իրեն սովորական ըլլալով՝ սովորարար հաճու-
թիւն մը կ'զգայ անոր մէջ : Աերջապէս սովո-
րութիւնը բնութիւն կ'ըլլայ , և ինքը անկէց
չկրնար բաժնուելէն՝ ի զատ՝ պաշտպանութիւն ու
ջատագովութիւն ալ կ'ընէ անոր» : Աս է սիրով
և սովորարար մեզանչելը . աս է չարերուն ճամ-
բան . բայց քու ճամբադ ասոր հակառակ չէ :

Ի . Աստուծոյ և հոգևոր բաներուն վրայօր սի-

բոյ պակասութիւնն կ'իմանաս քու մէջդ : Թէ որ այսպէս ըլլայ ալ վիճակդ՝ տակաւին կրնայ յոյս ըլլալ . բայց կրնայ ըլլալ որ սխալած ըլլաս աս բանին վրայ : Քրիստոնէական փորձառութիւնով սորվուելիք շատ բաներ կան , և շատ մեծ ու զանազան առարկաներու յարարերութիւն ունի : Ուստի դուն հիմա կրնայ ըլլալ որ ան բանը կը սորվիս , որ իբրև քրիստոնեայ շատ հարկաւոր է որ դիմանաս : Արդ՝ եթէ զգայուն չես , այնչափ կաթողին սիրոյ և զմայլեցուցիչ տեսութիւններու՝ ինչպէս որ երբեմն էիր , չ'կրնար ըլլալ որ աս քեզի դաս մը ըլլայ բարեպաշտութեան մէջ աւելի հաստատուն և պատշաճ կերպով աճելու , և աւելի աղէկ դործնական նպատակներու յարմարելու համար : Հանապազ միտք մի և նոյն վիճակին մէջ չ'ըլլալէն , կամ ան իրողութենէն՝ թէ նոյն առարկաները ամէն ատեն նոյն զգացումը չեն գրգռեր , կը հետեւի որ ճշմարիտ քրիստոնեայ չես : Վուցէ յաւելա ներկայ վիճակիդ վրայօք խորհելու տեղդ՝ անիկա երբեմն եղածիդ հետ բազդատելով , կը խարեօ ինքզինքդ դէպ 'ի յառաջ ըլլալիքիդ նայելով :

Գ . Այթէ քու վրայօքդ անյոյս վճիռներ ընելու հիմը՝ քու դէպ 'ի երկրաւոր վայելքներու ունեցած սիրոյդ զօրութիւնն է , գուցէ ըրած ձեռնարկութիւնդ այսպէս է : « Ար վախճամ թէ արարածը արարչէն աւելի կը սիրեմ , որ եթէ այսպէս է , չունիմ առ Աստուած ճշմարիտ սէր : Արբեմն անանկ կ'զգամ որ երկրաւոր բա-

ներու վրայ՝ երկնաւոր առարկաներու վրայ ու
 նեցած սէրէս աւելի սէր ունիմ . ուստի իմ հոգիս
 ուղիղ չէ Մատուծոյ առջևը՝ : Արդարեւ աս քու
 բրած մահարերու թիւնդ ճշմարիտ եղած կ'ըլլայ՝
 եթէ արարածը . կամ որ և իցէ երկրաւոր բան
 մը՝ իբրև քու վերջին բաժինդ կը սիրես . և իբրև
 անոր հասնելու միջոց մը բաներ ես . վասն զի աս
 գէպ'ի Մատուած ունենալու գերագոյն սէրեր-
 նուս հակառակ է : Բայց շնորհաբար ըլլալ որ
 մարդ՝ թէ և խիստ եռանդուն ու անփոփոխ սէր
 ունենայ Մատուծոյ վրայ որ և իցէ ուրիշ բանէ
 մը աւելի . և սակայն երբոր իր խորհուրդները
 ուղղակի անոր վրայ ուղղուած չեն՝ ան ժամա-
 նակը երկրաւոր բանի մը համար աւելի ուժգին
 սիրոյ զգացում մը ունենայ . ինչպէս որ սովո-
 րական շարութիւնը աւելի զօրաւոր առելու
 թիւն կը յայտնէ . քան թէ յանկարծական՝ թէ և
 աւելի ուժգին կիրքը . անանկալ մենք պէտք է որ
 սրտերնիս չէ թէ անցեալ և ներկայ շարժումե-
 րուն . այլ անոնց արմատին խորութեանը և
 գործածութեան շարունակութեանը նայելով
 դատենք : Վուցէ քու դժուարութիւնդ ասկէ է
 որ՝ քու անձդ փորձելու համար մէկ անյարմար
 փորձ մը միտքդ կը բերես : Շատ մարդիկ վախ-
 ցան որ երևելի փորձի մը կանչուած ատեննին՝
 աշխարհին յարելով պիտի մերժեն Վրիստոսը .
 բայց երբոր փորձին եկան՝ Վրիստոս ամէն բան
 էր անոնց . և աշխարհ բոլորովին ոչինչ : Մասնկ
 էր քաջայազմ մարտիրոսներէն ոմանց վախը :

Բայց դուն կրնաս կարօտ եղածիդ շափ օգնու-
թիւն միայն ան ժամանակը ակնկալել : Թե՛ որ
կ'ուզես քու սէրդ փորձել՝ քննէ սիրտդ , և տես
թէ արդեօք հիմա Վրիստոս մտնալու կամք ու-
նի՞ս :

Գ . Ընկերական ժողովքի մէջ զգացած ջերմե-
ռանգութիւնդ՝ առանձնութեանդ մէջ շունենա-
լուդ համար կը տարակուսիս ու կը վախնաս :
Աւրեմն դիտէ թէ ընկերական պաշտամունքի վե-
րաբերեալ այնպիսի պարագաներ կան՝ որոնք
մասնաւորապէս յարմարութիւն մը ունին քու
զգացումներդ գրգռելով միտքդ բարձրացնե-
լու , որ առանձնութեան մէջ չգտնուիր : Թե՛ որ
ասանկ է՝ առանձնական աղօթքիդ մէջ եթէ հա-
ւատարիմ գտնուելու բլլաս , թէ և անոնք ընկե-
րականին ամէն յատկութիւնները շունենան ալ՝
նոյն ատենը կրնան շատ օգտակար բլլալ , թէ որ
կը կարծես թէ ընկերական աղօթքի մէջ հոգեւոր
զգացում և ուրախութիւն ունիս . քանի որ ա-
ռանձնական աղօթքներդ զանց կ'ընես՝ անտա-
րակոյս ինքզինքդ կը խաբես : Յիրաւի եթէ ա-
ռանձնական աղօթքներուդ մէջ անհոգ և զան-
ցառութեամբ կ'ապրիս , շատ մեծ պատճառ ու-
նիս վախնալու : Բայց թէ որ կանոնաւորապէս
և հաւատարմութեամբ կատարես անոնք , երբեմն
անոնց մէջ այնպիսի ջերմեռանգութիւն չզգալէդ՝
որոնք ընկերական աղօթքի մէջ կը վայելես , չը-
հետեիր որ քու կանոնաւոր և հաւատարմու-
թեամբ բրած առանձնական աղօթքներդ չնչին

և անարժէք բաներ են : Այլ ինչ, թէ որ Հոգին Սուրբ իր բարեշնորհ ներգործութեամբը կը հաճի որ այս ինչ ժամանակ մը՝ ուրիշ անդամ ըրածէն աւելի գերազանց շնորհ ընէ քեզի, առ բանը տրտունջի և անհաւատութեան՝ թէ շնորհակալութեան պատճառ ըլլալու է :

Է . Սատանային անարգ կամ ամբարիշտ թեւազորութիւնները՝ երբեմն մեծ շփոթութիւն և ցաւ կը պատճառեն : Արեւի թէ անոնք սրտին մէջ ապականութեան բաց անդունդ մը կը բանան, և կ'ըսեն թէ ալ ևս հոն շնորհ չկրնար ըլլալ : Բայց անանկ սիրտ մը՝ որ ասանկ խորհուրդներ կ'զգայ՝ տակաւին կրնայ շնորհ ունենալ, միայն թէ ինքը հաւանութիւն չտայ անանկ խորհուրդներու և շնուցանէ անոնք : Արեմն դուն կ'ատեն այսպիսի խորհուրդները, և կը հակառակիս անոնց : Ար մերժես բոլորովին, և կը խորշիս անոնց գործածութենէն, ու նաև Աստուծոյ և ամեն հոգեւոր առարկաներու վրայ քու սրտիդ մէջ սուրբ ու յարգական խորհուրդներ պահելու կը ջանաս : Թէ որ ասանկ է՝ այնպիսի թեւազորութիւնները ահամայ ըլլալովին քու բարեպաշտութեանդ գէմ վկայութիւն չեն :

Զ . Աստուած ազօթքներուդ պատասխան չտալուն համար կը յուսահատիս : Երգեօք համոզուած ես ըսելու թէ Աստուած իմ հոգիիս վրայ թէ որ նկատմունք ունենար՝ ազօթքներուս արդէն լսած ըլլալու էր . բայց իմ ըրած ազօթքներուս պատասխան չառնելէս կը հետեցընեմ որ ա-

նորը չեմ ես : Մի աճապարեր՝ թէ և Աստուծոյ անարգելը , ու վերջապէս անիկա մերժելը վկայութիւն մըն է՝ որ ինքը ան աղօթքը մատուցանող անձը կը մերժէ . սակայն քու աղօթքիդ պատասխանը ուշացրնելէն , կամ անոր պատասխանուած ըլլալը կամ չըլլալը չիմանալէդ մի համարձակիր մակարերելու թէ Աստուած քեզ մերժած ըլլալու է : Աստուած իր ընտրեալներուն իրաւունք պիտի չընէ , որոնք ցորեկ ու գիշեր իրեն կ'աղաղակեն , թէ և երկայնամիտ ալ ըլլայ անոնց վրայ : Վճռ. 1 . ԺԸ . 7 :

Արիշներն ալ աս նոյն հիմանը վրայ քեզի հետ սահեցան : Սաղմոսերգուն կ'ըսէ . « Իմ շիոթութեանս մէջ ըսի թէ՛ կտրուեցայ ես քու աչքերուդ առջևէն . սակայն դուն իմ աղօթքիս ձայնը լսեցիր՝ երբոր քեզի աղաղակեցի » : ԼՄ . 22 : Փորձառութեանդ մէջ այնպիտի բաներ չես դգար՝ որոնք աղօթքներուդ ընդունուած ըլլալը կը ցուցրնեն , թէ և անոնց պատասխանը ուշանայ : Աղօթքը ընելդ չես շարունակեր , թէ և պատասխան առած ըլլալդ չիմանաս : Սովորութիւն չունի՞ս արգարութիւնը տակաւին Աստուծոյ սեպհականելու , քանի որ անոր լուռ կենալուն պատճառը քու մէջդ ըլլալը կը տեսնաս : Ասանկ ըրաւ Դաւիթ . Սաղ . իբ . 2 , 3 : « Ո՛վ իմ Աստուածս՝ ցորեկը քեզի կը կանչեմ , ու չես պատասխաներ , և գիշերը կը կանչեմ , ու չեմ դադարիր : Բայց դուն Սուրբ ես » : Ա՛ : Աղօթքներուդ պատասխանը երկարիլը քեզ չ'զրդաէր սիրտդ քննելու ու ճամբ

բաներդ փորձելու՝ որ գանաս թէ ի՞նչ է այսպէս ըլլալուն պատճառը, և անոր դէմ աննա : թէ որ ասանկ է՝ աւելի պատճառ կայ որ խոնարհ ըլլաս : քան թէ յուսահատիս :

Ընտանիքի միջոցով և անուր անձանց ժամանակ սիրտդ պահելուն կերպը : Վասն լիցի՝ որ կեղծաւոր մը աս ըստաններնէս քաջալիրու թիւն մը աննէ : Այս աս է ցուալին որ՝ երբոր բարեպաշտ և ամբարիշտ մարդոց անջիւր իրենց յարմար բաժինները կը դնենք, ամէն մէկը հակամտած են չէ թէ իրենցը՝ հապա մեկայր բաժին աննելու :

Ժ.Ե. Սրբիշ ժամանակ մը՝ որուն մէջ սիրտդ պէտք է որ ամէն զգուշութիւնով պահուի, հաւատքի համար հալածուած ժամանակնիս է : Օրհնեալ է ան մարդը որ ասանկ ժամանակ մը Վրիստոսի վրայ չզայթակղիր : Ըրդ նեղութիւններդ, ինչ աստիճան կամ ինչ տեսակ որ ըլլան՝ եթէ անոնք Վրիստոսի և Ընտանիքի համար են, սիրտդ պահելու համար զգուշութիւն մի խնայիր : Թէ մը ան նեղութիւններուն տակը՝ ետ քաշուելու կամ բռնորովին հաւատքէն իյնալու կը փորձուիս, ասկէց (այսինքն ետ քաշուելէն կամ իյնալէն) հետեւիլը շարիքները թող սգնեն քեզի ան շար թելազրութեանը յազմելու և մերժելու :

Թ. Վրկչին և իր Արբազան կրօնքին վրայ ինչ մեծ անարգանք մը պիտի ձգես, թէ որ այսպիսի ժամանակի մը մէջ անիկա թողելու ըլլաս : Ը-

սանկ բնեւոյժ պիտի քարոզես աշխարհին թէ՛ Մ. աս. անպի՛ն խոստմանց վրայ որ շափ որ պարծենցեր եմ ալ, փորձի գրուած ժամանակս չեմ համարձակիր բան մը վտանգի մէջ ձգելու՝ անոնց ապաւինելով։ Երգ՝ աս բանը Վրխատոսի թըշնամեաց հոյհու թեանը մեծ պատճառ մը պիտի բլլայ, և դուն աս վարձուներով պիտի կատարես անթլփատին յաղթութիւնը, ո՛հ թէ որ Վրխատոսի անուանը արժէքը միայն այնքան գիտնալու բլլաս՝ որքան որ շար մարդոց շատերը գիտեն իրենց անուան արժէքը, երբէք չկրնաս պիտի տանել որ անոր պատուական անունը այդպէս շարաշար կերպով ամբարտաւան մարդոց նախատանացը ենթակայ բլլայ։ Հոգ ու մտիւր ամբարտաւան արարածները՝ իրենց անուանը անարգանք մը չբերելու համար ինքզինքնին մինչև անգամ մահուան և դժոխքի ենթակայ կ'ընեն, ու դուն Վրխատոսի պատույն համար բնաւ բանի մը չպիտի համբերես։

Բ. Ար համարձակին խիղճդ կուրցընելու, մարմինն ու արիւնը հաճեցընելու համար։ Արկից կրնաս մոտիմարութիւն մը բնդունիլ, երբոր խիղճդ քեզ կ'անդոսնէ և կը գատապարակ։ Արբոր մարդ իր ներքին խաղաղութիւնը կը կորսընցընէ, ալ ինչ երջանկութիւն կրնայ ունենալ կեանքի՝ ազատութեան, կամ բարեկամներու մէջ։ Եղէկ գիտէ ինչ բնեւորդ։

Գ. Վրխատոսի և իր գառին բնդհանուր օգուտը՝ բուն քու օգուտներուդ հետ բազգատելով ան-

Հունացես աւելի մեծ ու հարկաւոր չէ՞, և դուն պարտաւոր չե՞ն սմէն ուրիշ բաներէ աւելի անոր փառքին ու իր թագաւորութեանը բարորու թիւնը նախամեծար սեպելու : Ար և իցէ ժաւ մանակաւոր նեղութիւն մը, կամ իրաւունքի մը զոհը՝ որն որ բնելու կրնայ բլայ որ կանչուիս, պէտք է որ Վրիստոսի պատիւին հակառակելու թողուի :

Գ. Վրկիչը՝ որ քեզի համար շարշարեցաւ, իր անասնելի նեղութիւններուն մէջ զանց անանքու սգուաց, մտայն քեզ, և եւս քաշուեցան, ոչ : «Ինքը համբերեց խաշին, ամսիք բանի տեղ շնեպելով» : Այս ան որ քեզի համար շարունակ համբերութեամբ և յարատեւութեամբ պնդան նեղութիւններու ու շարշարանքներու տարաւ, դուն անոր գտաին համար կրած վայրկենական նեղութիւններուց պատճառաւ պիտի վհատին, կամ պիտի թողնուի ինքր :

Ե. Արնան պսպէս գիւրութիւնով սուրբերուն արտանութիւններն ու անոնց բնկերութիւնը մէկտեղ մերժել, ու թշնամուղին կողմը անցնիլ : Անշն մէկ գիւտնել քու քաջայերութիւնդ անոնցմէ՝ որոնց հաստատ անաջադրութիւնը բաւ էն Վրիստոսի ճշմարտութեանցը մէջ յարատեւելու, ու գնել քու ազգեցութիւնդ անոնց զեմ եղամ կշտաքին մէջ, զան՝ աւելի ազկէ և որ հոգիդ ու մարմինդ մէկզմէկէ բամնուին : «Ինչ որ մէկը եւս քաշուի, իմ հոգիս անոր շահիք» կ'ըսէ Նստուան : Աջբ. Ժ. 38 :

գ. Գառաւստանին սրբ ի՞նչպէս պիտի կարող
 ըլլաս Վրիստասի առջեւ կայմեկու՝ թէ որ հի-
 մա կը թողուս զինքը, որ ըստ թէ՛ «Ով որ զե-
 ւ իմ խօսքերս գաւանդիւր ամօթ սեպէ առ շնա-
 ցող ու մեղաւոր ազգիս մէջ, Արդին մարգղայ ալ
 զանիկա գաւանդիւր ամօթ պիտի սեպէ՝ երբոր գոյ
 իր հօրը փառքովք սուրբ հրեշտակներուն հետ» :
 Մարկ. ր. 38 : Վիչ ատենէն ետքը Արդին
 մարգղայ երկնից ամպերուն մէջէն պիտի գոյ զո-
 բութեամբ և մեծ փառքով աշխարհքը գառե-
 լու : Ինքը գառաւստանի ամսօր պիտի նստի՝
 երբոր ամէն ազգերը անոր առջեւ զան : Գուն
 անանկ սեպէ թէ ան որուն ըլլալիք բաները կը
 տեսնաս : Տես շարերը, տես ուրացողները, և
 լսէ ան սպասիչ վճիռը՝ որ կը կարգացուի անոնց
 վրայ, և տես անոնք անհուն և յախանալի ան
 վայի ձորին մէջ բնկզմած : Այս հիմա պիտի թո-
 զուս Վրիստասը, բիչ մը նեղութենէ ազատե-
 լու, կամ երկրի վրայ անոգուտ կեանք մը պաշտ-
 պանեկու համար՝ պիտի ձգես իր գառը, և պայակ-
 ինքզինքդ ուրացողի մը գառապարտութեանք
 ենթակայ պիտի ընես : Այնչ որ եթէ զուն հի-
 մա խղճիկ ձայնը կարենաս լսեցունել, ան ա-
 տենք գառաւստանին վճիռը շեռ կրնար խափա-
 նել : Ե՞ս միջոցներով պահէ սիրտդ՝ որ ինդամէ
 Եստու-ձե՞ ըլլա՞նուս :

Եւ Վ. Ե՞մն զգուշութեամբ սրտի պահպանու-
 թիւն պահանջող վերջին ժամանակը՝ որ պիտի
 յիշեմ, ան է՝ երբոր հիւանդանալով մեռնեկու

մօտ ըլլալնիս կ'իմանանք : Արբոր Աստուծոյ ծառան յաւիտենականութեան կը մօտենայ , հակառակորդը կը սկսի իր վերջին ճիգը անոր գէժ 'ի դարձ զնեւ . և երբոր չկրնար անոր հողին Աստուծոյ բաժնել ' չկրնար հողին Վրիստոսի հետ միացընող կապը լուծել , ան ժամանակը կ'սկըսի միտքը մարմինէն լուծուելու խորհուրդին զգուանքովն ու սոսկուժովք լեցընելու համար ' մահուան երկիւղներ արթնցընել անոր մէջ : Անինչ զող ու սարսափ է ' որ երբեմն Աստուծոյ ժողովրդին մէջ աս պատճառաւ կը տեսնուի . կը զողան պսպիտի բաժանումէ մը , կը վախնան մահուան ցուրտ թեւերը շօշափելու , և ամենեին բաժնուելու կամք չունին : Վայց մենք պէտք է որ ինչպէս կ'ապրինք , անանկ ալ մեռնինք սուրբերու պէս :

Հիւանդութեան ժամանակ Աստուծոյ ժողովուրդը ' սրտերնին աշխարհային առարկաներէ հեռու պահելով , զուարթութեամբ մեռնելու պատրաստ ըլլալու օգնող քանի մը զիտողութիւններ յառաջ պիտի բերեմ :

Թ . Ո՞րքա՞նք Աստուծոյ ժողովրդին անվնաս է . իր նեակերը անոնց վրայ մէկ խայթ մը չեն կրնար թողուլ : Արեւմն ինչո՞ւ կը վախնաս ' թէ որքուհիւանդութիւնդ մահուան հիւանդութիւն ալ ըլլայ : Աթէ քու մեղքերուդ մէջ մեռնելու ըլլայիր , եթէ մահը իրբեք բանաւոր մը թագաւորելու ըլլար վրադ , և առիւծ մը իր որսին վրայ կերակրուելուն նման մահը քու վրադ կե-

բակրէր, եթէ մահը զժողովի կարապետը ըլլաբ քեզի, ան ատենը կրնայիր իրաւամբ ահովու զողող սարսափիլ և ետ փախչիլ անկէջ: Բայց թէ որ ջնջուած են քու մեղքերդ, թէ որ Վրիստոս յազթեց մահուան քու տեղդ՝ անանկ որ մարմնաւոր ցաւերէդ ՚ի զատ բան մը չունիս մենամարտելու, և կարելի է ան ալ չունիս, թէ որ մահը երկնից առաջնորդ մը կամ սուրհանդակ մը պիտի ըլլայ քեզի, ինչո՞ պիտի վախնաս, ինչո՞ պիտի շարքես անիկա: Ընդհանրեալ քեզի փնաս մը հասցընել, զիւրին և անփնաս բան մըն է, ան քու հանդերձդ փոխելուդ, կամ հանդստութիւն առնելուդ պէս բան մըն է:

բ. Արնաս սիրտդ աներկիւղ պահել՝ զիտելով թէ մահը հարկաւոր է կատարելապէս Ըստուած վայելելու քեզ յարմարցընելու համար: Ինչո՞նելու կամք թէ ունենաս թէ չունենաս, ստոյգ է որ հոգւոյդ երջանկութիւնը կատարելու համար ուրիշ ճամբայ մը չկայ: Պէտք է որ մահը անաղէկ պաշտօնը կատարէ քու վրայ, այսինքն՝ մէկդի առնէ աս մարմնեղէն ծածկոցը՝ աս կենդանական կեանքը՝ որ քեզ կը բաժնէ Ըստուածմէ զինքը կատարելապէս տեսնելէդ առաջ: Ընտրեալը կ'ըսէ. «Վիտենք՝ թէ որչափ որ մարմինի մէջ կը կենանք, Տէրոջմէ հեռու ենք»: Բ. Կորնթ. Ե. 6: Այս կատարելապէս Ըստուած վայելելու համար ո՞վ չուզէր մեռնիլ: Ինձի անանկ կը թուի որ, աս մահկանացութեան վանդակներուն մէջէն՝ բանտարկեալի պէս պէտք է որ մարդ նայի

ու հառաչելով ըսէ . « Արանի թէ աղանիի նման
 թեկեր ունենայի , որ թռչէի ու հանդիսա ըլլայի » :
 Սող . ծն . 6 : Յիրաւի մեռնելու՝ շատ մարդիկ
 համբերութեան կը կարօտին . բայց բարի քրիս-
 տոնեայ մը որ կը հասկընայ մահուան իր վրայ
 ինչ բան յառաջ բերելը , ան՝ աւելի ապրելու
 համար համբերութեան կը կարօտի : Արբոր
 մահուան անկողինը պահած է՝ շատ անգամ
 դուրս կընայի , և իր Տէրոջը գալտեանը կ'սպա-
 սէ . մահուան իրեն մօտ ըլլալը իմացած տակնը՝
 ուրախութեամբ կ'ըսէ . « Կամ սիրականիս ձայնն
 է , ահա անիկա լեռներուն վրայէն ցաթ կ'ելով՝ ու
 ըլուրներուն վրայէն ցաթ կ'ըսելով կու գայ » :
 Աբդ . Ի . 8 :

Դ . Վիտէ թէ երկնից երջանկութիւնը՝ մահէն
 ետքը անմիջապէս կ'սկսի : Ըն երջանկութիւնը
 մինչև յարութեան օրուանը պիտի շտպասէ .
 բայց խեղճն երբոր մահը վրայէն անցնի , բու-
 հողիկ կենաց մէջ պիտի առնուի : Արբոր ան-
 գամ մը աս կղերքէն արձակուելու ըլլաւ , շու-
 տով պիտի հասնիս ան փառաւոր յաւիանա-
 կանութեան եզերքը : Աւրեմն շն կընար բոկ .
 « Մեկնելու ու Վրիստոսի հետ ըլլալու փափար
 ունիմ » : Փիլ . Թ . 23 : Թե որ մարմինն ու հո-
 զին մեկտեղ մեռնելու ըլլային , կամ մինչև յա-
 րութեան օրը քնանալու ըլլային՝ ոմանց կար-
 ծածին պէս , Պօղոս յիմարութիւն բրած պիտի
 ըլլար Վրիստոսի հետ ըլլալու համար մեռնելու
 փափարելովը . վասն զի ինքը մարմինն մէջը ա-

ւելի կրնար վայելել Վրխասոր՝ քան թէ անկէց
 ելլելով :

Սուրբ Գիրքը միայն երկու կերպ կը ցուցընէ .
 որոնցմով Հոգին վայելուչ կերպով կրնայ ապ-
 ըիլ . այսինքն՝ հաւատքով , և տեսութիւնով . և
 սա երկու կերպերն ալ՝ ներկայ և ապանի գո-
 յութիւններ կը պարունակեն իրենց մէջը : Երգ՝
 թէ որ հաւատքին զազրած ժամանակը՝ տեսու-
 թիւնը անմիջապէս չյաջորդէ , հոգին ինչ պիտի
 բլայ . բայց սա բանին ճշմարտութիւնը Սուրբ
 Գրոց մէջ պարզապէս յայտնուած է : Տես՝ Գլ .
 ինչ . 3 : Յովհ . ԺԳ . 3 : Եւ : Աւրեմն մահը քու-
 վիճակիդ ինչ օրէնեալ փոփոխութիւն մը պիտի
 ընէ : Այլ մահուան մօտը եղող քրիստոնեայ ,
 ոար ելիք և՛ ուրախացիր . թող անիկա իր գործքը
 կատարէ՝ որ հրեշտակները կարենան լուսոյ աշ-
 խարհը տանելու քու հոգիդ :

Գ . Մեռնելու համար ունեցած յոժարու-
 թիւնդ՝ սա խորհրդածութիւնով ալ կ'աւելնայ ,
 թէ Ըստուած իր ժողովուրդը մեծ նեղութիւն-
 ներէ ու փորձութիւններէ կ'ազատէ մահուան
 միջոցովը : Արբոր աշխարհի վրայ արտաքոյ կար-
 զի չարիք մը գալու վրայ է , Ըստուած երբեմն իր
 ծառաները անկէց կը վերցընէ՝ ան չարիքէն ա-
 զատելու համար . զորօրինակ , Սաթուսաղա
 ջրհեղեղէն տարի մը առաջ մեռաւ , և շատ ու-
 ըիչ կերպ կերպ օրինակներ ալ կան . և կ'ըսուի
 թէ բոլոր Ըստուածները Արուսաղէմոյ կործա-
 նումէն առաջ մեռան : Երգ կրնայ բլալ որ՝

դուն մեռնելով անանկ դառն շարիքէ մը պիտի ազատիս, որն որ ոչ կրնաս, ոչ ալ կարօտ ես տանելու: Եւ այց թէ և քու վրադ արտաքոյ կարգի շարիք դալու չըլլայ, թէ որ կեանքդ երկըննալու ալ ըլլայ, սակայն Մատուած կ'ուզէ մահով անանկ անթիւ շարիքներէ ու բեռներէ ազատել քեզ՝ որոնք անբաժանելի կերպով ներկայ կեանքին հետ կապուած են: Մասնկով կ'ազատիս ներքսարնակ մեղքէ որ մեծապէս կը նեղէ և կը տանջէ քեզ. դարձեալ կ'ազատիս որ և իցէ պատճառաւ յառաջ եկած փորձութիւններէն, մարմնաւոր ցանկութիւններէն ու շփոթութիւններէն, և աս կեանքին ամէն մէկ տրամութիւններէն և ցաւերէն: Ազոյ օրերդ կը վերջանան, և Մատուած բոլոր արցունքներդ քու աչքերէդ պիտի սրբէ: Յայտ. ին. 4: Աւրեմն ովքրիստոնեայ, ինչու համար չես աճապարեր որ շուտով աս կեանքէն ելլաս և հանգրստանաս:

Եւ թէ որ Ղովտի Սողոմ քաղաքին մէջ ըրածին պէս տակաւին կը անանաս, ինչ փաստեր և սնոտի պատճառներ ունիս դուն աւելի երկար ապրելու համար: Ինչու չես ուզեր մեռնիլ: Եզգականներուդ օգուտին համար կը մտմտաս: Աթէ այդպէս է՝ անոնց ժամանակաւոր ապրուստուն համար տարակուսած ես: Աւրեմն Մատուծոյ խօսքը ապահով թող ընէ քեզի. «Արբերդ թող տուր, ես զանոնք ողջ կը պահեմ. ու քու որբեարիներդ թող ինծի ապաւինին»: Աբե. խթ. 11: Արեւելի քրիստոնեայ մը իր մեռնելու

ժամանակը այսպէս ըսաւ . «Տէր, դուն ինձի կին մը ու զաւակներ ալ տուիր . ես անոնց թողելու բան մը չունիմ, միայն քեզի կը յանձնեմ անոնք : Ա՛յ որբերուն հայրը ու որբեւարիները դատողը՝ կերակրէ, պահէ, և կրթէ զանոնք» :

Բայց թէ որ անոնց հոգեւոր օգուտին համար կը հոգաս, յիշէ որ եթէ ապրելու ալ ըլլաս՝ դուն չես կրնար զանոնք ապաշխարութեան բերել ու զարձընել . և Մատուած կարող է արդիւնաւոր ընել ազօթքներդ ու անոնց տուած խրատներդ քու մեռնելէդ ետքը :

Գուցէ աս կեանքիդ մէջ աւելի երկայն ծառայութիւն ընել կ'ուզես Մատուծոյ . բայց թէ որ ինքը հոս քեզի համարալ ևս գործ մը չունի, ինչո՞ւ Գաւիթին հետ չես ըսեր թէ, «Մահես կայներեմ, իր աչքին հաճոյ երեցածին պէս թող ընէ ինձի» : ք թԻա՞շ . ԺԷ . 26 : Մատուած աւելի բարձր ծառայութեան մը կը կանչէ քեզ երկնից մէջ . և հոս տակաւին ընելու փափաքած բաներդ՝ ուրիշներն ալ կրնան կատարել : Կակ կը խորհիս թէ երկինքը երթալու շատ անկատար ես, գիտցիր որ մինչև մահուան ժամանակդ անկատար պիտի մնաս . մինչև որ երկինքը չհասնիս, քու սրբութիւնդ կատարեալ չկրնար ըլլալ :

Բայց եթէ ապահովութեան կը կարօտիմ կ'ըսես, անանկ որ՝ եթէ ան ունենամ, կրնամ դիւրութեամբ մեռնիլ . գիտէ ուրեմն թէ մեղքէն ազատ ըլլալով, Մատուծոյ հետ ըլլալու համար բոլոր աշխարհը թողելու սրտանց կամեցողու-

Թիւնը՝ ան փափարած ապահովութեանդ ուղիղ ճամբան է . մէկ աշխարհասէր մարդ մը երբէք չզանուեցաւ որ սա մտօք, մեռնելու կամք ունենայ :

Ե՛հա ցուցուցի թէ Եստուծոյ ժողովուրդը՝ խիտ զժուար ժամանակներ քննուող ամէն զգուշութիւնով պահպանութիւն կրնան ընել իրենց սրտերնուն վրայ :

Երդ յառաջ կ'երթանք սա առարկային վրայ քանի մը խորհրդածութիւններ ընելու :

1 . Եւաջ տեսար թէ սրտին պահպանութիւնը՝ քրիստոնեայի մը ան մեծ գործն է , որուն մէջ կը գոյանայ բարեպաշտութեան ճիշդ հոգին ու կեանքը . և թէ առանց անոր՝ ամէն ուրիշ պարտաւորութիւնները Եստուծոյ առջևը ոչինչ են : Աստի սա հետեւեալ բաները կը հետեցունեմ , որն որ կեղծաւորներն ու լոկ դաւանողները կը զարհուրեցընէ :

ա . Թե՛կ որ նեղութիւններն ու աշխատութիւնները՝ որոնց շատ մարդիկ ենթակայ եղան կրօնքին մէջ , բնաւ արժէք մը չունին . և օգուտ մը յառաջ պիտի չբերեն : Ըստ երևելի ճառայութիւններ կատարեցին մարդիկ , որ Եստուած բոլորովն պիտի մերժէ : Ենոնք յաւիտենակիան ընդունելութեան համար պիտի չիշտատակուին . վասն զի կատարողները սրտերնին Եստուծոյ հետ պահելու համար հոգ չտարին : Ես ան մահաբեր ժայռն է՝ որուն սնապարծ քրիստոնեաներէն հազարաւորները ինքզինքնին

զարկին , և յաւիտեանս կործանեցան . անոնք կրօնքին արտաքին բաներուն նայելով ճշտութիւն կը պահէին , բայց սրտերնուն վրայով անզգոյշ էին : Մէ , քրիստոնեաներէն ոմանք որքան առան ծախք ըրին՝ լսելով , աղօթք ընելով , կարթալով , և խօսակցելով . և սակայն կրօնքին վերջին նպատակը՝ սրտին ան մեծ դործը նոյն առանք զանց ըրին : Վե՛ , ո՞վ սնասպարձ քրիստոնեայ , քու սրտիդ թուլութեանը՝ կարծքութեանը՝ անհաստատութեանը՝ կամ աշխարհասիրութեանը համար երբ կաթիլ մը արցունք թափեցիր : Ասկը կարծես որ այդպիսի գիւրին կրօնք մը պիտի փրկէ քեզ : Թե՛ որ այսպէս է , պէտք է որ Վերստասի խօսքը հակառակ զարձընես . « Այն է ան դուռ , և ընդարձակ է ան ճամբան՝ որ դէպի կեանքը կը տանի . և շատերը կան որ անկէջ կը մանան » : Վե՛ ս՞ի ինքնախար կեղծաւոր . դուն՝ որ պարտերդ առանց սրտի կատարելով , Մասուած հաճեցրնել ուզեցիր . դուն՝ որ հոգևոր պարտերդ , կոոչ պաշտօն մատուցանելու պէս կատարեցիր , դուն՝ որ շեւ կրնար քու սիրտդ քննել և կառավարել , և քու պարտերդ սրտանց կատարել՝ ինչպէս պիտի սպասես Տէրոջը գալուն . ինչպէս գլուխդ պիտի վեր առնես անոր առջևը՝ երբոր ինքը պիտի ըսէ . « Մի՛ կեղծաւորեալ նենգաւոր մարդ՝ ինչպէս կրնայիր քրիստոնեայ ձեանալ . ինչ երեսով կրնաս թախանձել ինձի , քեզ սիրեցի ըսելով՝ երբոր խղճովդ կը վհայես թէ սիրտդ հեռացած էր ինձմէ » : Մէ՛ դողա՛ խօր-

հելու, թէ ինչ ահա որ դատաստան մը պիտի ըլլայ անգոյշ ու անհոգ սրահրուն վրայ, նաև անոնց ալ՝ որոնք հոգեոր պարտերը լոկ խղճերնին հանգարտեցրնելու նպատակաւ կրկատարեն:

Բ. Աստուծոյ ժողովրդին խոնարհութեանը համար կը հեռեցունեն թէ՛ մինչև որ անոնք սրտի պահպանութեանը վրայօր շատ շաշխատին, ու ժամանակ չծախեն սովորականէն աւելի, հաւանական չէ որ երբէք Աստուծոյ շատ ծառայութիւն պիտի ընեն՝ կամ աս աշխարհիս մէջ շատ մոտիմարութիւն ստանան: Հակոբ նահապետին Խորէնին համար ըսածը՝ թէ «Առջին պիտի չըլլաս», ես ալ կրնամ ան քրիստոնէին համար ըսել, որ թոյլ ու անհոգ է իր սիրտը պահելու: Կը արամիմ՝ երբօր կը տեսնամ թէ որքան քրիստոնեաներ կան՝ որոնք թէ Աստուծային ծառայութեան, և թէ մոտիմարութեան կողմանէ աղքատ ու նուաստ կ'ապրին, և վեր ու վար կը շրջին անյոյս՝ ու զանգատ ընելով: Բայց քանի որ անոնք պայակս անհոգութիւնով կ'ապրին, ինչպէս կրնան ուրիշ կերպ ակնկալութիւն մը ունենալ: Ահ, որքան քիչ ժամանակ անցուցած են անոնք առանձնութեան մէջ իրենց սրտերը խոնարհեցրնելու, քննելու, և կենդանացունելու համար:

Ով քրիստոնեայ, սիրաս մեռած է կ'ըսես, և քանի որ առանց կենաց աղբիւրին կը պահես ան, կը զարմանաս ասանկ ըլլալուն: Թէ որ մարմնից անանկ զարմանէիր՝ ինչպէս

որ հոգիդ դարձանեցիր, ան ալ մեռած պիտի
ըլլար հիմա : Այլ երբէք ակնկալութիւն չես
կրնար ունենալ թէ սիրտդ ազէկ վիճակի մը
պիտի փոխուի : մինչև որ առաւել հոգ չունե-
նաս անոր վրայ :

Ալ քրիստոնեաներ, կը վախնամ որ ձեր նա-
խանձը ու զօրութիւնը սխալ ճամբայ դացին է
Ալ վախնամ որ շատերնիս կրնանք եկեղեցիին
բողոքը հաստատել թէ՛ «Ջիս այդիներու պա-
հապան ըրին, բայց իմ այդիս պահպանութիւն
չբրի» : Աբէ . Թ . 6 : Աբիու բան կայ որ ա-
տեսակ քրիստոնեաներուն ժամանակն ու զօրու-
թիւնը սպասեցին, և ցուալի կերպով ևս բանե-
ցին անոնք սրտին աս մեծ դործքը կատարելէն :

Նախ՝ Աստանային յարուցած անպիտան վի-
ճարանութիւնները՝ որ անտարակոյս մեզ դործ-
նական Ըստուածպաշտութենէ ևս պահելու, և
միտերնիս շփոթելու նպատակու են՝ երբոր
սրահրնուս վրայ պահպանութիւն պիտի ընենք :
Որքան քիչ նկատեցինք առաքելոյն սա խրատը
թէ՛ «Ազէկ է որ սիրտը շնորհքով հաստատուի
ու չէ թէ կերակուրներով» (այսինքն կերա-
կուրի վրայոր վիճմունքներով ու հակառակու-
թիւններով) «որ անոնցմով օգուտ մը չունեցան
անոնք՝ որ անանկ դացին» : Աբէ . Ժ . 9 : Որ-
քան աւելի ազէկ է մարդոց ճշտութեամբ ապ-
րելնին տեսալք՝ քան թէ անոնց իմաստակու-
թիւններով վիճելնին լսելք : Ըս անպիտան վե-
ճերէն՝ ինչպէս պատակեցին եկեղեցիները, Բնչ-

պէս ժամանակ և եռանդ կորսնցուցին , և ինչպէս քրիստոնեաները իրենց զլիաւոր գործքէն խոտորեցուցին : Ինչ կը խորհիք արգեօք , թէ որ Մատուճոյ ժողովուրդին մէջ ելած վէճերն այսպէս ըլլային , աւելի ազէկ չէր ըլլար : Մարդ մը Հոգւոյն Սրբոյ մասնաւոր գործողութիւնը ընդհանուրէն ինչպէս որոշելու է : Ինչ նշաններով մէկը կրնայ իր Մատուճմէ հեռանալ սկսիլը իմանալ : Ուխտագրութ քրիստոնեայ մը իր առաջին սէրը ինչպէս կրնայ նորոգել : Մարդ մը աղօթք բրած ժամանակը ինչպէս կրնայ պաշտպանել իր սիրտը անվայել խորհուրդներէն : Սեղ զիւրաւ պաշարող մեղքը ինչպէս կրնանք զանալ և մեռցնել : Ըս ընթացքը քրիստոնէութեան պատիւն ու հոգիներուն միտմարութիւնը աւելի յառաջ չնայի տանի : Կ'ամշնամ' որ աս տեսակ քրիստոնեաները՝ տակաւին անոգայ են իրենց յիմարութեանը վրայօք : Մ'՛ թէ՛ Մատուճ անոնց բոլոր վէճերն ու հակառակութիւնները , գործնական աստուածապաշտութեան փոխէ :

Երկրորդ . Ըշխարհային հոգերը ու արգելքները , մեր՝ սրտերնուս վրայ ունեցած զանցառութիւննիս մեծապէս շատցուցին : Հատերուն միտքն ու հոգը աշխարհային զրազմանց այնպիսի խառնակութիւններովն ու աղմուկներովը լցուած են , որ ողբալի կերպով նուազեցան իրենց նախանձին՝ իրենց սիրոյն՝ իրենց առ Մատուճ ունեցած բերկրութիւններուն , և

մարդոց հետ երկնային՝ հոգեօր և օկտակար կերպով խօսակցելնուն մէջ : Եւ նշակա թշուառաբար պատուեցինք ինքզինքնիս աս ունայնութեան անապատին մէջ : Մեր կենցաղավարութիւնները , խօսակցութիւնները , մանաւանդ ազօթքներնիս անգամ՝ ապականուած են անով : Մեր կեանքին արտաքին մասին համար այնքան շատ բան բրինք՝ որ ներքին մասին համար միայն շատ քիչ ընելու կարող եղանք : Աւ քանի քանի անգին պատահութիւններ կորսնցուցինք ասանկով : Հոգւոյն Սրբոյ քանի քանի ազդարարութիւնները անպաղապէս անցան : Որքան յաճախ կանչեց Տէրը մեզի՝ երբոր մեր աշխարհային խորհուրդները անոր ձայնին մտիկ ընելէն մեզի արդիւնցին : Եւ այց անշուշտ աշխարհային զրազմունքներու մէջ ալ կայ Աստուած վայելելու ճամբայ մը : Թէ որ ժամանակաւոր գործի մը մէջ զրազած ատեննիս՝ անիկա մեր միտքէն հանելու բլանք , յանքանքը բուն մերն է : Եւ ահ , որ քրիստոնեաները յախտնականութեան գրանը մէջ կայնին՝ ձեռքերնին ժամանակնուն ներածէն աւելի գործք բլալով և ունենալով , և սակայն իրենց միտքերն ու սիրտերը սնտախ բաներով լեցուած :

Գ . Ար հեակցընեմ վերջապէս ամէնքը արթնցընելու համար որ՝ եթէ սրտի պահպանութիւնը քրիստոնէի մը մեծ գործն է , ուրեմն աշխարհին մէջ ճշմարիտ քրիստոնեայ շատ քիչ կայ : Աթէ ամէն մէկ մարդ՝ որ սորված է քրիս-

տանեաներուն լեզուն, և կրնայ սուրբի պէս խօսիլ. եթէ ամէն մէկը որ շնորհներ և պարգևներ ունի, և կրնայ քարոզել՝ աղօթք ընել՝ և քրիստոսնէի պէս խօսիլ. մէկ խօսքով՝ եթէ ան ամէնքը՝ որ ընկերացած են Աստուծոյ ժողովուրդին հետ, և հաղորդ են եկեղեցւոյ սրբազան խորհուրդներուն՝ քրիստոսնայ սեպելու ըլլանք, ան ատենը թիւը յիրաւի շատ կը մեծնայ: Այց աւաղ. եթէ սրտին պահպանութեան կանոնովը դատելու ըլլանք՝ որն որ քրիստոսնէի մը մեծ դործն է, ան ատենը անոնք որքան քիչ պիտի գանուին. որքան քիչեր կան որ երկիւղածութեամբ կը պահեն սրտերնին, կը հսկեն իրենց խորհուրդները, և ամենայն զգուշութեամբ կը նային իրենց շարժատիւթներուն: Արդարև քրիստոսնէութիւնը դաւանողներուն մէջ այսպիսի արթուն մարդիկ շատ քիչ կան: Վրիստոսնէութեան մէջ եղած որ և իցէ ուրիշ պարտաւորութիւն մը ընելը՝ աւելի դիւրին է մարդոց, քան թէ աս պարտաւորութիւնը: Աշխարհիս ամբարշտ մարդիկը՝ ձեռնամուխ չեն ըլլար հոգևոր պարտաւորութեանց մինչև անգամ արտաքին մասին. ապա ուրեմն ասոնց բնաւ ձեռնամուխ չեն ըլլար. ու կեղծաւորները՝ թէ և արտաքին բաներու մէջ շատ մանրաբնին ըլլան, բայց երբէք պիտի չկրնաս անոնք համոզել աս ներքին մասին ձեռնամուխ ըլլալու. աս դժուար գործին, աս գործին՝ որուն համար մարդկային գովասանութիւն ընդունելու գրգիռ մը չկայ: Աս գործը՝

որն որ շուտով կը ճանչցընէ իրեն թէ որոնք են ան բաները որ կեղծաւոր մը շուզեր ճանչնալ անանկ որ աս սրտին գործը որ ընդհանուր հաւանութիւնով քիչերուն ձգուած են . և կը սարսափիմ խորհելու թէ ան ալ որչափ քիչերուն :

Չ . Եթէ սրտին պահպանութիւնը այսպէս երեւի գործ մըն է , եթէ անկէց այսպիսի մեծ օգուաներ կը հեռան , եթէ այսբան ծանրագին օգուաներ կայ անոր մէջ , ուրեմն կ'ազաչեմ Լատուճոյ ժողովուրդին՝ որ սրտանց աս գործին ձեռք զարնեն ամէն տեղ : Ս՛հ քննեցէք ձեր սիրտերը , հսկեցէք անոնց վրայ , և պահեցէք զանոնք : Փախէք անպտուղ վէճերէ , և ամէն դատարկ խնդիրներէ . փախէք անունով միայն քրքիստանեայ կոչուելու և երևնալու ունայնութիւնէն . փախէք ուրիշներուն վրայօք անպտուղ խօսակցութիւններ և համարձակ պարսաւանքներ ընելէն , և դարձէք ինքզինքնուղ և ձեր սրտերուն : Ս՛հ թէ՛ դուն որոշէիր այսպէս ընելու այսօր , և այս ժամուս մէջ :

Կարգացող , կը յուսամ թէ վերջապէս աս ըսուածներէն պիտի յաղթուիս , ու պիտի համոզուիս քու պարտք ճանչնալու : Կամ ամէն խնդիրքս քեզի սա է թէ՛ շատ անգամ առանձնանաս Լատուճոյ և սրտիդ հետ խօսելու , թէ շեղուս որ ամէն շնչին բան քեզ աս գործէն խտորեցընէ , թէ քու խորհուրդներուդ և սիրոյդ վրայօք առաւել ճշմարիտ և հաւատարիմ հաշիւ մը պահես , թէ զգուշութեամբ դոնէ ամէն իրիկուն

սրտիդ խորհուրդ հարցընեն , «Վ՛ի իմ սիրաս ,
 ո՛ւր էիր այսօր և ինչ բաներով զբաղեցան քու
 խորհուրդներդ » ըսելով :

Այժմէ այս իրրե յարդարանք խօսուածները
 բաւական չըլլան , տակաւին քանի մըն ալ պիտի
 տամ քեզի :

ն . Սրտիդ ճշմարիտ վիճակը սորվելից ու գի-
 անելի , և զգուշութեամբ անիկա պահելի՛ք խիստ
 պիտի օգնէ քեզի հաւատոյ զժուարթին խորհուրդ-
 ները հասկընալու : Խոհեմ և աղէկ փորձառու
 սիրա մը՝ շատ գերազանց օգնութիւն մըն է մըտ-
 քին : Ըսանկ սիրա մը՝ Սուրբ Պրոց մեծ մասին
 աղէկ մեկնիչ կ'ըլլայ . այսպէս սիրա մը ունե-
 նալով՝ Ըստուածային բաներու վրայ շատ գիտ-
 նական , բայց ապաշնորհ մարդոցմէ աւելի աղէկ
 ճանաչում կ'ունենաս . դուն չէ թէ միայն աւել-
 լի պարզ , այլ աւելի շահաւէտ և օգտակար
 գաղափար մը կ'ունենաս անոնց վրայ : Արը-
 նայ ըլլալ որ՝ մարդ մը հաւատարթին բնութեանը և
 արդիւնքներուն վրայօք , խղճին նեղութիւննե-
 րուն և մոխթարութիւններուն վրայօք , ու Ըս-
 տուծոյ հետ հաղորդութիւն ունենալուն անու-
 չութեանը վրայօք ուղղափառապէս և նրբու-
 թեամբ խօսի , քանի որ իր հոգւոյն մէջ կրբէր
 զգացած չէ աս բաներուն ազդեցութիւնն ու ա-
 նուշ ապաւորութիւնը : Բայց անոր ճանա-
 չումները՝ փորձառու քրիստոնէի մը ճանաչում-
 ներուն հետ բաղդատելով , սրբան մութ ու չոր
 են :

Թ • Արտիզ ճշմարիտ վիճակին վրայօր ըրած քննութիւնդ ու գիտողութիւնդ՝ առ ներկայ Ժամանակներուն մէջի ապականիչ և վտանգաւոր սխալմունքներէն, զօրաւոր կերպով ապահով պիտի ընեն քեզ: Այսան զի քրիստոնեաներէն շատերը հաւատարէն բաժնուելով՝ առասպելներու ետեւ ըլլալնուն պատճառը ինչ ըլլալ կը կարծես, այսքան մարդիկ ինչու յարեցան շարին մոլորութիւններուն, ինչու համար ապականեալ վարդապետութիւններ սերմանողները այսքան առատ հունձք ունեցան մեր մէջը, միայն անոր համար որ՝ անոնք քրիստոնէից անանկ մէկ սերունդին պատահեցան, որ բնաւ չեն գիտեր թէ գործնական աստուածաբանութեան սրտին վիճակը սորվելու, և անիկա պահելու ինչ բան կը վերաբերի:

Պ • Արտիզ վրայ պահպանութիւն ընելու համար ունեցած հոգոյ ու զգուշութիւնդ՝ քու անկեղծութեանդ ապացոյցներուն ամենէն լաւագոյններէն մէկն է, քրիստոնէութեան մէջ ասկէ՛ի զատ արտաքին գործ մը չեմ գիտեր, որ ճշմարտապէս կրնայ որոշել ողջամիտ քրիստոնեան՝ խարզախ քրիստոնեայէն: Շատ սքանչելի բան է որ՝ կեղծաւորները արտաքին պարտքերու մէջ որքան յառաջ կ'երթան, առ երևոյթս ինչպէս կը կանոնաւորեն անոնք արտաքին մարզը, ամէն պահասութիւններնին մարզոց աչքէն ծածկելով: Բայց սրտերնուն վրայ զգոյշ չեն, անոնց զազանի վարմունքը հրապարակաւ եղածէն խիստ

տարբեր է, և աս փորձին առջև ոչ մէկ կեղծաւոր մը կրնայ կայնիլ: Յիրաւի կրնայ ըլլալ որ նեղութեան կամ մահուան նեկողինին մէջ եղած ատեննին սրահերնուն շարութեանը վրայով խօսին. բայց այսպիսի պարադաներու մէջ բրած զանգատնին երբէք նկատման արժանի չէ: Օրէնքին նայելով՝ տանջանքի մէջ եղող մարդու մը վկայութեանը հաւատք չընծայուիր. վասն զի կրնայ ըլլալ որ իր վեշտերուն սաստկութենէն ստիպուելով բան մը ըսէ, անոնցմէ ազատուելու համար: Բայց թէ որ զգուշութիւնը՝ հոգը և հսկողութիւնը քու սրտիդ բնաւորութիւնն ու օրական գործքերը ըլլան, անկեղծութեան վկայութիւն մը կ'ունենաս:

դ. Արքան մտիթարալից, և որքան ալ օգտակար պիտի ըլլային քեզի ան ամէն հոգևոր պաշտամունքներն ու պարտաւորութիւնները, եթէ սիրտդ հաւատարմութեամբ պահած ըլլայիր: Թէ որ ուղիղ ըլլար ան, ամէն անգամ Եստուծոյ մօտենալուդ՝ ինչ զուարթ հաղորդակցութիւն մը կրնայիր ունենալ անոր հետ: Ընտանը Գաւթի հետ կրնայիր ըսել «Ընտր վրայով իմ մտածութիւնս քաղցր պիտի ըլլայ»: Ճդ. 34: Հոգևոր պաշտամունքներն ու զաղանի պարտաւորութիւնները՝ ոմանց տհաճելի երեւալուն պատճառը, անոնց սրտին վատութիւնն է: Ընտր կը ջանան սրահերնին առ Եստուած վերցընելու զանազան շարժառիթներով, նոր կենդանութիւն ու հոգի աննելու համար. սակայն շատ անգամ

աս զօրծը կը կատարեն և կը լմնցընեն առանց սիրտերնին աս բանիս մէջը օգուտ իմանալու . և ասանկով երբեմն Մատուծոյ ներկայութենէն կը բաժնուին առանց օրհնութիւն մը ընդունելու : Բայց ան քրիստոնեան՝ որուն սիրտը շարունակ պահպանուած ըլլալով արթուն է , անմիջապէս և սրտով կ'սկսի ձեռք զարնել իր պարտաւորութիւններուն , ինքը իր զանգաղ զբացիէն յառաջ անցնելով քարոզը մտիկ ընելու՝ Վրիստոսի մէջ եղած ճշմարտութիւնը նախ և առաջ ինք կ'զգայ . Արբազան խորհրդի մը մատակարարութեան ատենը՝ առաջին կնիքը կ'ընդունի Վրիստոսի ձեռքէն , և առանձնական աղօթքի մէջ շնորհաց և սիրոյ առաջին հաղորդութիւնը կ'ստանայ իր սրտին մէջ : Երգ՝ եթէ հոգեոր պաշտամանց և առանձնական աղօթքի մէջ որ և իցէ ծանրազին և մոխթարական բան մը կայ , կ'աղաչեմ՝ քեզի՝ նայիս քու սրտիդ և պահպանութիւն ընես անոր :

Ե . Արտիդ հետ ունեցած ընտանութիւնդ՝ աղօթքի մէջ խօսելու առատ նիւթ պիտի տայ քեզի : Ըն մարդը՝ որ աս սրտի զօրծին մէջ զգոյշ է , շատ վսեմ ու ճոխ խորհուրդներով կը մանայ Մատուծոյ ներկայութեան մէջ : Ինքը երբէք պիտի չչփոթի խորհրդի պակասութեան համար , և իր լեզուն խօսք չդաճալով պիտի կմկրմա :

Զ . Եշխարհի մէջ ամենափափաքելի բանը՝ որ է հոգեոր արթնութիւն ժողովուրդի մը մէջ , աս ըսած բաներուս միջոցովը կրնայ ըլլալ :

Ահա, երանի թէ Կահանայի ան ժամանակը՝ երբ որ լոկ գաւանդները ունայն երեւոյթով պիտի շքալին, երբոր գոհ պիտի շրջան կենդանի անուն մը ունենալու՝ քանի որ հոգեորայլս մեռած են, երբոր պիտի շնկերանան ալ ևս ունայն և զատարկ մարդոց հետ, այլ որ ասին անոնց խօսակցութեանը մէջ որբութիւնը պիտի փայլի, աշխարհը պատկառանաց մէջ պիտի ձգեն, և ամէն իրենց շուրջը եղողներէն յարգութիւն ընդունելով պիտի ատքընեն անոնց սիրտերը՝ երբ որ իրենց մտ կու գան, և այսպէս պիտի պատճառ ասն ըսել տալու թէ՛ յիրաւի Աստուած աս մարդոցը մէջն է։ Ասոց այսպիսի ժամանակ մը կրնանք ակնկալել։ Աս ասանկ որջեալ ժամանակ մը տեսնալ չեմ յուսար, մինչև որ սրտին պահպանութիւնը քրիստոնեաներուն գործը շտապի։ Չես վշտանար երբոր կը տեսնես թէ՛ ինչպէս անարգուած ու սարի տակ ինկած է քրիստոնեակութիւնը, և անիկա զգաւանդները աշխարհի մէջ անարգուած ու ծաղր եղած են։ Քրիստոնեաներ, կ'ուզէք ճամբանիդ նորոգել, կ'ուզէք ճիշտ ձեր թշնամեացը խզելն մէջ անբիծ ու անարատ վկայութիւն մը ստանալ, ուրեմն պահպանութիւն ըրէք ձեր սիրտերուն։

Է. Աստուծոյ պահպանութիւն ընելու համար ըրած զգուշութիւններս թիս, կ'արգիլենք ան մահաբեր գայթակղութիւնները և արգիլքները՝ որ կ'ըլան աշխարհին։ Այն աշխարհին՝ գայթակղութիւններու պատճառաւ։ Մտք, մը . 7 :

ք . Հաւատարմութեամբ պահպանու թիւն ը-
 րէ սրտից , և ահա՛ պիտի պատրաստու իս քու կան-
 շուած սր և իցէ վիճակից և ծառայութեանց
 համար : Ար և իցէ վիճակի մէջ՝ սա միայն սգուս
 կրնայ բնել քեզի . միայն ասով է որ կրնաս համ-
 բերել թէ՛ յաջողութեան և թէ՛ ձախօրգութեան
 մէջ . ու կրնաս ինքզինքդ ուրանալով՝ ձեռքդ որ
 և իցէ գործի մը գարծընել : Ետով էր որ Պո-
 գոս առարեալ ամէն պարագայի մէջ ինքզինքը
 մեծապէս սգտակար ըրաւ : Ընիկա՛ ուրիշներուն
 քարոզած ժամանակը՝ ինքը անպիտան չգանուե-
 լու համար շատ հոգ կը տանէր : Ար պահէր իր
 սիրտը , և ամէն բան՝ որոնց մէջ ինքը գերա-
 զանցեցաւ , կ'երեւնայ թէ՛ սերտ կապակցութիւն
 մը ունեցան սրտին վրայ պահպանութիւն ընե-
 լու համար իր ունեցած զգուշութեանը հետ :

Թ . Թնէ որ Եսասուծոյ ժողովուրդը զգուշու-
 թեամբ պահեն սրտերնին , անոնց մէկզմէկու հետ
 ունեցած հազորակցութիւնը անպատմելի կեր-
 պով առուել հրապուրիչ և սգտակար պիտի
 ըլլայ : Ըն ատենը «Վճակոր՝ քու վրաններդ ,
 և ո՛վ Իսրայէլ՝ քու խորաններդ Բ՛նչ գեղե-
 ցիկ են» : Թոս . ին . 5 : Եսասուծոյ ժողո-
 վուրդին՝ Հօր և Արդույ հետ ունեցած հազոր-
 ցութիւնովն է որ ուրիշներուն փափաքը ի-
 րենց հետ հազորգութիւն ունենալու կը բորբո-
 քեն : Տ՛ւմարիտ կ'ըսեմ , որ եթէ քրիստոնեա-
 ները սրտերնուն համար աւելի ժամանակ ծա-
 խելու և աւելի նեղութիւն կրելու ըլլան , շուտով

անոնց խօսակցութեանը մէջ այնպիսի աստուածային գերազանցութիւն մը պիտի փայլի՝ որ որիչները մեծ արտօնութիւն պիտի սեպեն անոնց հետ, կամ անոնց մօտ ըլլալնին: Քրիստոնէական հաղորդակցութիւնը մեր մէջէն եղծանողը՝ սրտերնուս գոռողութիւնը և կիրքը և աշխարհասիրութիւնն է: Ի՞նչէն է՝ որ քրիստոնեաները մէկտեղ եկած ատեննին շատ անգամ կը կռուին ու կը վիճեն. թէ չէ կիրքերնին մեռուցած չըլլալնուն համար: Իրենց եղբայրներուն վրայ յօք խիստ դատողութիւններ ընելնին ուսկից յառաջ կու գայ. թէ չէ իրենց անձերնուն վերայ ունեցած տգիտութենէն: Ի՞նչու համար անոնք այսքան խտասիրա և անկարեկից են գէպ ՚ի ինկածներուն. թէ չէ իրենց տկարութիւնն ու փորձութեան ենթակայ ըլլալը չգալնուն համար: Մէկտեղ ժողովուած ատեննին՝ անոնց խօսակցութիւնները ի՞նչու այսքան վեր ՚ի վերոյ և անօգուտ կ'ըլլան. թէ չէ սրտերնուն ունայն ու աշխարհասէր ըլլալուն համար: Ի՞նչո՞ւ արդ՝ եթէ քրիստոնեաները սրտերնուն վիճակը առաւել սորվին և աւելի աղէկ զգուշութիւնով պահպանութիւն ընեն անոնց, հաղորդակցութեան անգեղեցկութիւնն ու փառքը պիտի կրկին նորոգուի: Եսոնք՝ ալ ևս պիտի շրմճուին, ալ ևս պիտի չվիճեն, և ալ ևս խստիւ մէկզմէկ պիտի չդատեն: Արբոր ամէն մէկը իրեն սրտին շարութեան ճանաչումովը կը խոնարհի, ալ այնուհետեւ մէկզմէկ պիտի սիրեն:

Ժ. Եւ վերջապէս : Պահէ քու սիրտդ , և անտեսնը Հոգւոյն Սրբոյ մտիթարութիւններն ու ամէն սրբազան պաշտամանց ներգործութիւնը՝ հիմակուանէն աւելի հաստատ և ամուր պիտի ըլլան : Եւ Ըստուածային մտիթարութիւնները պզտիկ բան կ'երևնան քեզի : Մ՛հ շատ պատճառ ունիս ամէնալու՝ որ Ըստուածային պաշտամունքները իրենց կենդանացուցիչ և մտիթարիչ արգեանցը նայելով , այսբան թեթև և վաղանցիկ տպաւորութիւն մը պիտի ընեն քու սրտիդ վրայ :

Երդ՝ ո՞վ ընթերցող , սրտի պահպանութեան աս մասնաւոր օգուտները որ յիշեցի՝ աղէկ դիտէ : Քննէ անոնց կարեւորութիւնն ու մեծութիւնը : Պզտիկ բաներ են անոնք : Միթէ պզտիկ բան է քու մտքիդ լուսաւորութիւն ունենալը՝ վտանգի մէջ եղած Հոգւոյդ ապահովութիւն գտանելը՝ սրտիդ անկեղծութեանը յայտնի ցուցուիլը՝ Ըստուծոյ հետ ունենալու հազորակցութեանդ անուշութիւնը՝ աղօթքի մէջ սրտի մասնաւոր պատրաստութիւն մը ունեցած ըլլալդ : Պզտիկ բան է աստուածպաշտութեան զօրութիւնն ունենալը՝ ամէն մահաճիթ արգելքներէ ազատ ըլլալը՝ Քրիստոսի ծայուայելու հաշմար գործնական յորմարութիւն մը ստանալը՝ սուրբերուն հաղորդութեանը իր նախնական փառքին վերանորոգուիլը , և սրբազան պաշտամանց ներգործութիւնը՝ անկեղծ քրիստոնէից հոգիներուն մէջ հաստատուն մնալը : Թէ որ ա-


սոնք հասարակ օրհնութիւններ ու սովորական շնորհքներ չեն, ուրեմն յիրաւի մեծ ու անհրաժեշտ պարտաւորութիւն մըն է՝ սիրաբար ամէն զգուշութեամբ պահելը:

Այլ հիմա սրտի պահպանութեան աս մեծ գործքին ձեռնամուխ ըլլալու հակամիտած ես դուն: Արոշեցի՞ր սրտիդ մէջ՝ որ աս բանը ընես: Աւրեմն կը յորդորեմ՝ քեզ՝ որ ջանք ընես մեծ փութով աս գործին զբաղելու: Մէկ գիւրբէ քեզմէ ան ամէն կրկշտ զգացումները, և առաջագրէ քու մտքիդ մէջ թէ՛ և Հոգւոյն Արքայ զօրութեամբը պիտի յաղթեմ դէմս ելած ամէն դժուարութիւններուն: Ե՛ս Եստուծոյ զէնքերը իր կենսատու խօսքէն, և Քրիստոսի խօսքը իր ամէն պատուէրներով՝ խոստմունքներովը և սպաննալիքներովը առատապէս թող բնակի քու մէջդ, ու հաստատուի մտքիդ՝ յիշողութեանդ՝ խղճիդ և ամէն զգացումներուդ մէջ: Թէ որ կ'ուզես թշնամիդ յաղթել հոգիդ՝ պաշտպանելու համար, պէտք է որ սորվես Հոգիին սուրբ՝ (որ է Եստուծոյ խօսքը,) զիւրաշարժելուն կերպը: Պէտք է որ յաճախակի առանձնանաս քու անձիդ վրայօր հաշիւ ընելու համար, և քննես ինքզինքդ իբրև թէ ամենատես Եստուծոյ ներկայութեանը մէջ՝ քու խիղճդ և Եստուծոյ խօսքը դատաւոր ընելով: Հաս աշխարհային զբաղմունքներու մէջ մտած, և աշխարհի ընդհանուր կացութեանն ու քու պակասեալ յօժարութիւններուդ ձեռնամուխ ըլլալու պարտաւորած ատենդ՝ զգոյշ կզի՞ր՝ որ ըլլ-

լայ թէ չափէ անցնիս : Ըստուծմէ Հեռանալուն՝
 հոգևոր կեանքին ճամբէն քիչ մը խոտորելուն՝
 առանձին երկիւղած խորհրդածութիւններ ընե-
 լուն՝ և ուրիշներուն հետ սրբազան խօսակցու-
 թիւններ ու հաղորդակցութիւններ ընելուն ա-
 մենաթեթեւ տհաճութեանը առաջին նշանները
 իմանալու և զանոնք խափանելու համար , պէտք
 է որ շատ արթուն ու զգոյշ ըլլաս : Պէտք է որ
 Քրիստոսի զօրութեամբը՝ անյաղթելի քաջու-
 թեամբ սկիզբէն յաղթես աս բաներուն : Այս թէ
 որ այսպէս զբաղելու ըլլաս աս մեծ գործքին մէջ ,
 վստահ եղի որ՝ զօրութիւնդ պարապ տեղը պիտի
 չվատնես . վստահ ամէն կողմերէ այսպիսի միտ-
 թարութիւններ պիտի դան վրայ , որոնց վրայօք
 երբէք խորհուրդ կամ զգացում ունեցած չես
 դուն : Օգոյշ կերպով աս գործին հետամուտ
 ըլլալը՝ զօրաւոր դրդիւններ պիտի ընծայէ քեզի
 հուատքին ան անուշ կեանքին մէջ աւելի ե-
 ռանդ ունենալու և արթուն ըլլալու համար , ան
 նոյն համեմատութիւնով՝ որ քրիստոնէին թշնա-
 մին զօրութիւնը տկարանալով քու զօրու-
 թիւնդ կ'աճի : Այս երբոր քիչ մը ժամանակ ա-
 մէն զգուշութիւն ՚ի գործ դնելու ըլլաս՝ սրտիդ
 վրայ պահանջութիւն ընելու համար , երբոր աս
 հոգևոր պատերազմը պատերազմելով քու մէջդ
 եղած ապակասութիւններուն վրայ տէրութիւն
 ստանաս , և դուրսէն եղած թշնամիները յաղ-
 թես , ան ժամանակը պիտի բանայ Ըստուած
 երկինքին դուռները , և պիտի տայ քեզի ան բա-

ժինը՝ որ խոստացած է ամէն յաղթողներուն տալու : Աւրեմն արթնցիր աս վայրկեանին, ան աշխարհը քու ստրկուող տակը : մի հասաշեր ան բաներուն համար՝ որ մարդ ան բաները ստանալով կրնայ ըլլալ որ իր անմահ հոգին յաւիտեան կորսնցընէ . հապա օրէնէ Մատուած որ իր շնորհքովը աս կեանքին մէջ հաւատարիմ ծառայութիւն մը ընելով իրեն, հանդերձեալին մէջն ալ ան փառքը վայելիս՝ որ ինքը պատրաստած է իր ընտրածներուն :

«Այս խաղաղութեան Մատուածը՝ որ մեռելներէն յարուց մեր Տէր Յիսուսը, որ յաւիտեանս անուանուած արիւնովը ոչխարներուն մեծ Հովիւն է, ձեզ ամէն բարի գործի մէջ հաստատէ՝ իր կամքը ընելու, և ձեր մէջը իր առջեւ հաճոյ եղածը ընէ Յիսուս Քրիստոսի ձեռքովը, որուն փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն :» Աբր. Ժ 20, 21 :



մատու
 1745. 10. 19
 1745. 10. 19

Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page. The text is arranged in several lines and is too light to transcribe accurately.

